



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Georg Bräuer

281

4-29

1907 p.

04 NOV 2009

201  
4-29



Ա. ԿԱՐԱԳԱԶԵՍԻ

# ՁԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻՑԻՑ

ԵՒ ՄԱՏՆԵՑԻՆ

ԵՒ ԱՔՍՈՐԵՑԻՆ

1907 թ. Ստալովու—Ռուսով.




280  
851-44

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՎԱՆ  
ՏՊԱՐԱՆ Ս. Յ. ԱԽԱԳԵԱՅԻՑԻ

Нахичевань на Дону  
Тип. С. Я. Авакова  
1907

857-ЧК

505



Шриф-Фасаду Чирквулані.

(Священникъ Нерсесъ Фртевціанъ)

Настоятельъ ѡеодоссійскихъ Армяно-Григоріанскихъ  
Церквей.

281  
4-29  
ur

ELOS .20. 15

Ա. ԿԱՐԱԳԱՅԵՎԻ

Ա. ԿԱՐԱԳԱԾԵԱՆԻ Դ

# ԶԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻՑԻՑ

ԵՐԱԾՈՒՅԹՆ

## ԵՌ ԱՔՍՈՐԵՑԻՆ

105  
100  
-100

1907թ. Աստվածաշունչ—Ռուսական.



ՏՊՐ-ՆԱԽԻԳԵԼԵԱՆ

Нахичевань на Дону

Тип. С. Я. Авакова

1907

Գրքոյկու նւիրում եմ այն արիասիրտ սուլը ան-  
ձանց յիշատակին, որոնք 1906 թ. ազատագրական  
բուռն շարժման ընթացքում, «Խղճի», «Կեանքի»,  
«Գոյքի» և աղատութեան համար՝ սրի և «կարմիր-  
գնատակի» բաժին եղան. և նոյնպէս նոցա, որոնք տա-  
կաւին բանդերում մաշւում են և տանջւում կարոտ  
լոյսից...

Խորին ակնածութեամբ՝

Մ. ԿԱՐԱԳԱՇԵԱՆ.

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ.

Մի տարուց աւելի է, որ Ղրիմի պատմական թէ-օդոսիա քաղաքի հայ բնակչութիւնը՝ ալեկոծւած դրու-թեան ներքոյ է:

Այնտեղ, տարիներ առաջ կատարւել է սոսկալի գործեր և մինչև ց'օրս էլ շարունակւում էն. Դա է «աղայ» հայ մարդկանց բոնութիւնները միջին և ստո-րին դասակարգի ժողովրդի վերաբերմամբ։ Որ հայ բուրժուան մի զգալի չարիք է եղել թէօդոսիայում, սկզբից ց'ներկայս կեղրոնացնելով իւր ձեռքը ծխա-կան ժողովրդի բոլոր իրաւունքները, տիրացել են ե-կեղեցիներին և եկեղեցական գոյքերին, առել են բա-րեգործական նպատակով եղած ընկերութիւնների սոսկ անւանական դեկը, կտակների գործադրութիւնը, այս բոլորը ընթերցողը կ'առանէ մեր այս փոքրիկ հրա-տարակութեան մէջ։

Դժոնութեան կարիք չէր լինի, եթէ այդ հա-րուսաները մի փոքր բարեխղճօրէն նայած լինէին ի-րենց առած պաշտօնների վերայ. և ինձ թւում է, որ հասարակական բողոքը՝ այնպիսի սուր և ուժեղ կեր-պարանք չէր ստանայ, ինչպէս նա տեղի ունեցաւ չ. Ներսէս քահանայ չերթեցեանի օրով։

Ափանս, որ գոնէ Կովկասի պարբերական հայ մա-մուլը լուրջ ուշադրութիւն չ'գարձրեց թէօդոսիայում կատարուած իրողութեանց վերայ, որոնք զնւու հա-սարակական բնաւորութիւն էին կրում։ Եւ հ. Հեր-թեցեան՝ միայնակ մնում է հերոսական պայքարում ընդդէմ աղաների։ Թերևս նա զգալի յաղթութիւն տարած կ'լինէր և հասած իւր նպատակին, եթէ ար-դեկը չ'լինէր զինւորական դրութիւնը թէօդոսիայում,

որից յայտնի կերպով օգտակցին ոչ միայն աղաները, այլ նոյն խալ «սևագլուխ» և «սևագործ» ապիկար հայ հոգևորակմանութիւնը:

Ներսէս քահանայ Հերթեցեանի փափազելի խընդիրները եղած են սոքա:

Նախ, ծխականների մէջ մտցնել ձայների հաւասար իրաւունք՝ առանց տարբերութեան հարստի և աղքատի:

Երկրորդ՝ ունենալ միջին և ստորին դասակարգի ծխականների զաւակների համար դպրոց, որից զուրկ է եղել Թէօդոսիան:

Երրորդ, ծխական հաստատութեանց դոյքերը, ինչպէս են, — եկեղեցական կալւածական և եկեղեցու անունով թողած կտակների գործադրութիւնը տալ հաւասարապէս թէ հարսաից և թէ աշխատաւոր դասակարգից ընտրւած ներկայացուցիչների ձեռքը:

Չորրորդ, Ունենալ վերոյիշեալ ընկերութեանց և գումարների գործադրութեան համար կօնտրօլ:

Կարելի՞ է երեակայել, որ Թէօդոսիայի հայոց թէ երեցգիւնները, թէ Հ. Բէրբէրեանի 100000 (հարիւր հազարի) հասնող կտակի կտակարարները, Աղքատաց հոգաբարձութիւնը, Դպրոցական վարչութւնը՝ տարիներ շարունակ հաշիւ չեն տուել ծխական ժողովներ: Եւ ում ձեռքը ինչ որ անցել է, նա առանց քաշւելու, առանց խղճահրւելու ծախսել և փչացրել է ժողովրդական այդ գումարները. և հէնց դրա համար է, որ Թէօդոսիայում հայերը զուրկ են դպրոցից՝ և չորս հին-օրերից մնացած եկեղեցիներն էլ զուրկ են բարեզարդութիւնից: Իսկ հ. Հերթեցեանի բոլոր ջանքերը և ցանկութիւնները յատուկ դրա համար է եղած, որի համար և ընտրւած է եղել: Սակայն այդ յարգելի զործիչը՝ իւր այդ բարեխիղճ վերաբերմունքի համար այնպիսի հալածանք, այնպիսի քսութիւնների և աքսորի ենթարկեց թէ «աղաների» կողմից և թէ «աղաների» դաշնակից «բիւրօկրատ» թեմական իշխանութեան ձեռքից, որը որքան սոսկալի, այնքան

կատարեալ կերպով ընորոշեց այդ «բիւրօկրատների» էութիւնը, մարդակերութեան զործում:

Ուզիդ վաթուուն անգամ, շարունակ բողոքներ թէ հեռագրերով և թէ փոստով՝ Թէօդոսիայի տուժող դասից զրկւած են Էջմիածին՝ ամենայն Հայոց կաթողիկոսին, Սինօդին՝ և Սինօդի պլոկուրօրին, բայց գարձեալ անուշագիր է մնացել Թէօդոսիայի զրկւած ժողովրդի՝ և հ. Հերթեցեանի բողոքը նրա համար, որովհետեւ Սինօդի անգամներից նահապետեան եպիսկոպոս՝ Յուսիկ Զոհրաբեան՝ Բաբգէն Աղաւելեան վարդապետները՝ դրանց վերայ աւելանալով Բեսսարաբիայի հայոց առաջնորդ Ն. Խուզավերդեան, «Դժոխք» մականուն ստացած Բենիկ վարդապետը՝ աղաների զրապանների խաթեր համար հազար ժողովուրդ որ կոտորուելիս լինի՝ գոքա միմեանց դէմ ոչ բողոքներ՝ և ոչ էլ քննութիւններ կ'բանան:

Մենք ստիպուած չէինք լինի այս փոքրիկ աշխատութիւնը հրատարակելու, որովհետեւ «Մշակ օրաթերթը իւր մի քանի համարներում արդէն պարզել էր Թէօդոսիայում տեղի ուսեցած զէպքերի մասին. և բարեխիղճ ընթերցողը, որը կարողացել է հասկանալ թէ ինչ է «բուրժուա» և «բիւրօկրատ» մարդը՝ անշուշտ նա կ'հասկանայ խնդրի էութիւնը:

Բայց ի նկատի առնելով, որ «խղճից» և մարդկային զգացմունքից զուրկ մարդիկ իւրեանց քսութիւններից և մատնութիւններից յետոյ ևս համարձակում են խօսել արդարութեան և իրաւունքի մասին, մեղաղրում են մի օրինակելի և անխարդախ գործիչքահանայի, այս կամ այն «շպիօն» Տարախչեանների, աղաների սոկիններից կուրացած անբարեխիղճ քննիչ Բաբգէնների՝ և վերջապէս ամբողջ հայ աշխարհին յայտնի խառնակիչ և խարդախ Բենիկների ու ինչ որ բաղդախնդիր Պապայեան խայտառակւած քահանայի (Լուգանսկում և Ճալայում) զրպարտութիւններով, ուստի որոշեցի դրանց զգւելի զործերը հրապարակ գնել հայ հասարակութեան առաջ, որպէս զի հայ հա-

սարժակութիւնը վերջապէս ճանաչէ իւր օգտակար անդամին, զատելով ու դէն շպրտելով նոյն իսկ «ծնընդեամբ» և ծագմամբ» ստոր կեղծ հոգևորականներին, որոնք իրենց սև էութեամբ՝ ընդունակ են սոսկալի միջոցներով վասելու անկեղծ գործիչներին:

Գրքոյկիս ցուցմունքները և փաստաթղթերը խընդրել եմ Արժանապատիւ Տ. Ներսէս քահանայից, օգտելով նաև «Մշակի» մերկացումներից: Իսկ գործի պատմութիւնը՝ այս 1906 թ. ամառը՝ լսել եմ Թէօդոսիայում հայ և սուս բանւորներից:

Մ. ԿԱՐԱԳԱՇԵՍՆ.

1907 ս/18  
Թոստով Դ-ր.

---

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

(բովանդակութիւն)

Ներսէս քահանայ Հերթեցեանի միաձայն ընտրութիւնը Թէօդոսիայի հայերից: Երեցփոխ Կ. Մ. Արութեանի գրաւոր գիմումը հ. Հերթեցեանին, Ղրիմի ո. Խաչի վանահայր Նահապետ վարդապետի միջամտութիւնը՝ և նամակը: Բեսսարաբիայի առաջնորդ Ն. Խուդավէրդեանի հակաժողովրդական վարմունքը քահանայի ընսրութեան գործում և ապա Ամենայն Հայոց Տ. Մկրտիչ Կաթուղիկոսի միջամտութեամբ հ. Հերթեցեանի հաստատութիւնը:

Ա.

1904 թ. աշնանային ամիսներում վախճանւում է Թէօդոսիայի հայոց ծխատէը Մանդակունի քահանան: Ըստ երևոյթին, հանգուցեալ քահանայից Թէօդոսիայի հայերը այնքան էլ գոհ չեն եղած, քանի որ հանգուցեալը իւր կենդանութեան ժամանակ շարունակ ծառայելով այս կամ այն աղայի քմահաճոյքին, հասարակական օգտակար գործերը երեսի վերայ է մնացած եղել: Դրանից արդէն խրատած, Թէօդոսիայի հայ հասարակութիւնը որոշում է ընտրել և ունենալ մշտական մի քահանայ, որը իւր կրթութեան հետ և ունենար եռանդ և գործունէութեան ոգի, և որ գըլ-խաւորն է, շիտակութիւն՝ աղքատի և հարստի մէջ սարբերութիւն չ'որոնող:

Այդ իսկ պատճառով, Թէօդոսիացիք 1904 թ. հոկտեմբերի 4-ի բազմամարդ ժողովով միաձայն ընտրում

Են մշտական հովիւ Ներսէս քահանայ Հերթեցեանին,\* )  
որ այդ ժամանակ հովուում էր Եկատերինօսլաւ հա-  
նանգի՝ Լուգանսկ քաղաքում՝ և ուր թէ տաղանդա-  
ւոր քարոզչութեամբ և թէ օրինակելի գործունէու-  
թեամբ յայտնի տեղ էր գրաւել:

Ահա թէ ինչ էր գրել Թէօդոսիայի Հայոց եկե-  
ղեցիների երէցգիոխ Կ. Մ. Արութեան հ. Հերթեցեա-  
նին՝ ընտրութիւնից յետոյ:—

«Արժանապատիւ Տ. Ներսէս քահանայ Հերթե-  
ցեան!»

Արանով պատիւ ունիմ Զեղ յայտնելու, որ քա-  
ղաքիւ քահանայական հարցն, որ քանի օրեր է ի վեր  
սուր կերպարանք էր ստացած, թէև քանիցս միմէանց  
թղթակցութեամբ երկու կողմանս էլ յօժար թւեցաւ.  
թէև ա. Առաջնորդից թոյլտութիւն ինսդրեցինք Զեղ  
առ ժամանակեայ Թէօդոսիա գտլու համար, թէև՝ ա-  
ռաջնորդը մերժեց, բայց ձեր ընտրելու փափազը էր  
իմ՝ և բոլոր ժողովրդականաց, որոցմէ շատերն Զեղ  
կ'ձանաչեն եղեր. ուստի ստիպեցին ՚ի ժողով գումա-  
րել և հարց վճռել»:

«Թէօդոսիայի քահանայութեան համար ինսդրներ

\*.) Ներսէս քահանայ Հերթեցեան ծնւած է 1874 թ.  
Երեանի նահանգի, Աղէքսանդրապոլի վիճակի Մահմուտջուղ  
գիւղի յայտնի Հերթեցեան-բազմամարդ (350 հոգի) ընտա-  
նիքում: Կըթութիւնն ստացել է էջմիածնի հոգեոր Գէոր-  
գեան ձեմարանում, ուր ցոյց էր տալիս առանձին ընդու-  
նակութիւն գէպի բեմբասացութիւնը: Զորս տարի եղած է  
ուսուցիչ և ճանապարհորդած է Ռուսաստանի հարաւային  
մասերը: 1900 թ. ձեռնադրել է քահանայ Լուգանսկի հա-  
յերին հովելու: Թէ աշխարհական և թէ հոգեորտական կոչ-  
ման մէջ աշխատակցել է «Նոր-Դար» և «Մշակ» թերթերին:  
Յայտնի է որպէս հասուն և սուր գրչի տէր: 1904 թ. Ամե-  
նայն Հայոց Կաթուղիկոսից պարզե է ստացել լանջախաչ  
իւր քարոզչութեան և գործունէութեան համար: 1906 թ.  
հ. Հերթեցեանի չորսիւ Աղէքսանդրապոլի վիճակի Բուղ-  
դաշնի 20 անւոր Ռուսացած հայեր վերստին մանում են  
ի ծոց Մայր Եկեղեցու: Տես «Մշակ» № 57, Ռուսացած հա-  
յերի մեղայականը:

և զրութիւններ կային հետևեալ տեղերից և անձնա-  
ւորութիւններէ: 1) Կերչի ուսուցչէն, 2) Հին-Ղրիմի  
քահանայէն, 3) Սիմֆերոպոլի սարկաւագէն, 4) Օր-  
բազարի քահանայէն, 5) Երեմ. քահանայ Ապրիլեա-  
նէն, 6) Սօլախեանէ և 7) Սիմ. Գրիկեանէ: Սակայն  
ամսոյս 4-ին, ընդհանուր ծխական ժողովը աչքի տ-  
ռաջ ունենալով ինպրատուների ինսդրները՝ և Զեր  
նամակը, որով Դուք յայտնում էիք Զեր համաձայ-  
նութիւնը, ժողովը միաձայն առանց այլ և այլութեան,  
ընտրեց Զեղ հոգեոր հովիւ Թէօդոսիայի: Նոյն ժա-  
մուն պէտք էր տեսնել բոլոր ժողովրդի ուրախութիւ-  
նըն ու Զերմ ոգին գէպի իւր ապագայ գործիչը:

«Ահաւասիկ մենք սոյն փոստիւ՝ թէ մեր ընտրու-  
թեան գիրն՝ և թէ ինսդրն ուղարկեցինք սրբ. Առաջ-  
նորդին առ ՚ի հաստատութիւն: Հետեղեք, որպէս զի  
չարամիտ ստորագրեալները\*), չյետաձգեն հաստա-  
տութեան գործը: Դուք ինչ լուր և պատասխան որ  
ստանաք նէ, շուտով մեզի տեղեկացուցէք, որ մենք  
ևս ըստ այնմ գործենք և տնօրինեմք»:

Երեցգիոխան Թէօդոսիայի՝ կոստանդին Արութեան:  
1904, հոկտեմբերի 4.

՚ի Թէօդոսիա:

Յիշեալ երէցգիոխի գրութիւնից արդէն երկում  
էր, որ Բեսսարաբիայի թեմակալը համամիտ չէր և  
չէր ուզում, որ հ. Հերթեցեան լինէր քահանայ Թէօ-  
դոսիայում: Անշուշտ առաջնորդը սկզբից իւր թեկ-  
նածուն է ունեցել և զրա համար նա արգելում էր  
Հերթեցեան քահանային մանելու Թէօդոսիա, լաւ  
զիտենալով որ նրանից յետոյ՝ ժողովուրդը հ. Հեր-  
թեցեանին ձեռքից բաց չէր թողնի:

Ընտրութեան թղթից յետոյ, հ. Հերթեցեան ստա-

\*) Զարամիտ ակնարկը վերաբերում է Քիշնեի առաջ-  
նորդի ատենագլուխ Կարապ. Յովհանջանեանցին, որովհեան  
Արութեանը յիշելով այդ ատենագլուխ մասին, որի հետ և  
ընդհարում է ունեցել կաշառքի մասով, նրան համարում էր  
«կոպէկանոց մարդ» և չար մարդ: Ծահօթ. հեղինակի:

նում է Ղրիմի Ս. Խաչ վանքի վանահայր Նահապետ վարդապետ Նահապետեանից (յետոյ եպիսկոպոս, Սիօնի անդամ և ապա վախճանւեց 1906թ. նոյեմբեր ամսում) ստորև բերածս գրութիւնը:

«Սիրելի Տէր Ներսէս!

«Լսել եմ, որ ցանկանում ես Լուգանսկից տեղափոխուել Թէօդոսիա. բայց ես քեզ խորհուրդ չեմ տայ, որովհետեւ Լուգանսկի ժողովուրդը աւելի բարեպաշտ և արդիւնաւոր է, քանի այս տակն ու վերայ եղած Թէօդոսիայի հայ բնակիչները, որոնք խորդացել են մայր եկեղեցուց: Իմ խորհուրդս է, ծանր տեղից չ'շարժուել»:

«Աղօթակից»

Նահապետ վարդապետ»:

Հոկտեմբերի 10. 1904թ.

Ի վանս Ս. Խաչի (Ղրիմ):

Այս նամակից երկմտելով, հ. Հերթեցեան հեռացրում է թեմական առաջնորդին խնդրելով իրաւունք զնալու Թէօդոսիա և առ տեղեաւն ծանօթանալու ժողովրդի հետ: Առաջնորդը հեռագրով թոյլ է տալիս յուսալով, որ հ. Հերթեցեան կ'հանդիպի Ս. Խաչ նահապետեան վարդապետին և Նահապետի խորհրդից դուրս չ'կալով՝ կ'հրաժարւի ընտրութիւնից:

Բայց թէ Նահապետեան՝ և թէ առաջնորդ Խուղավիրդեան՝ իւրեանց ենթադրութեանց մէջ սխալում են: Հայր Հերթեցեան հոկտեմբերի 15-ին ուղարւում է Թէօդոսիա, 15 օր մնում է այնտեղ և լաւ ծանօթանալով ժողովրդի հետ՝ այնտեղից էլ զրում է իւր գրաւոր համաձայնութիւնը Թէօն. Առաջնորդին՝ խնդրելով հաստատութիւն: Այս դէպքում թէ առաջնորդը՝ և թէ Նահապետեան սկսում են աւելի յայտնի կերպով ցոյց տալ իրենց չ'կամութիւնը, ցանկանում են նոր ընարութիւն Նահապետեանի նախագահութեամբ:

Ծխականները իսպառ մերժում են առաջնորդի դրաւոր դիմումը, ընդ միշտ հեռու մնալով կողմանակի

ազգեցութիւններից:

Նահապետեան տեսնելով, որ այդ կերպ էլ չ'աջողւեց իւր ծրագրի իրագործումը, սկսում է պղտորել ժողովրդականներից շատերի միտքը՝ աննպաստ լուրեր յօրինելով հ. Հերթեցեանի վերաբերմամբ: Սակայն Նահապետեանի երկդիմի կեղծ վարմունքը յայտնի էր բոլոր Թէօդոսիացիներին իւր համակից յետոյ:

Եւ այս դէպքում, Նահապետեանի մուտքը Թէօդոսիայի հայոց ծխական գործերում իսպառ առգելում է: Բեսսարաբիայի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսը խիստ զայրանում է Թէօդոսիացիների յանդուգն վարմունքի վերայ և աշխատում է ձգձգել հաստատութիւնը: Բայց ժողովրդի վերահասութեամբ և դիմումով, Վեհափառ Կաթուղիկոսը հրամայում է հաստատել հ. Հերթեցեանին Թէօդոսիայի քահանայութեան պաշտօնում: 1904թ. Նոյեմբերի 30 ստացւում է հաստատութիւնը՝ և հ. Ն. Հերթեցեան տեղափոխում է Լուգանսկից Թէօդոսիա:

Բ. Գլուհիլ,

(բովանդակութիւն),

Հայր Հերթեցեանի սիրալիր ընդունելութիւնը Թէօդոսիայում և կեդրոնանալը իւր ծխական ներքին գործերում: Հայոց չորս եկեղեցիների անմիտիթար վիճակը: Ծխական առաջին ժողով: Հարցեր. 1) Լսել բժշկական վկայականի հրամանը: 2) Ընտրել առժամանակեայ ծխական բժիշկ: 3) Գրադարան ընթերցարան ունենալու խնդիր: 4) Եկեղեցական աղքատաց հոգաբարձութեան կանոնագրքի փոփոխման հարց: 5) Ընտրել դպրոց. հոգաբարձուներ: 6) Երբ հնարաւոր է Պարսկահպատակների և տաճկահպատակների (հայերի) ամուսնութիւնը: 7) Տօն շնորհաւորէքը դարձնել կամաւոր ծէս: Ծխի իրաւասութեան խնդիր: Տարօրինակ ծխական դպրոց: Ուսուցիչ Ս. Տարախեանի վատահամբաւ անունը: Հերթական խնդիր. աղատել դպրոցը «հացկատակ» ուսուցչից:

\* \* \*

Տէր ներսէս չերթեցեան քահանայի ընդունելութիւնը թէօգօսիայում, ամբողջ հայութեան կողմից լինում է շատ սիրալիր: իրեւ կրթւած և խոհուն քահանայ՝ հ. չերթեցեան իւր այցելութեամբ ծանօթութիւն է կապում տեղական թէ ուսումնական վարչութեան և թէ ոստիկանութեան ներկայացուցիչներին հետաքայլական կաթոլիկ, կարախ, հրէայ և թաթար հոգևորականներից առանձին, հ. չերթեցեան այցելում է Յունաց, Ֆրանսիացւոց, Անգլիացւոց և Տաճկաց դեսպաններին, որոնցից և ստանում է անմիջապէս իւր փոխադարձ այցելութիւնը: Կեդրոնանալով արդէն իւր ծխական գործերում, հ. չերթեցեան սկսում է զննել թէօգօսիայի հայոց հինորերից մետած չորս եկեղեցիները, որոնց բարեգարդութիւնից մերկացած է գտնում: իւր թեմական իշխանութեան տուած յայտարարութիւնից երևում է, որ յիշեալ եկեղեցիները դուրկ են եղել «կայից գոյից» ժապաւինեալ մատեանից (инвентарная книга): Երեցվոխ քմահաճոյքով են կառավարել և հսկողութիւն տած բանը՝ նոյն իսկ թեմական իշխանութեան կողմից ևս չէ եղել:

Մեր ձեռքը հասած առաջի ծխական ժողովի հրաւիրաթղթից երևում է, որ հ. Ներսէս 1904 թ. Դեկտեմբերի 26-ին տեղական «քայլայւած» մի դասեան դպրոցում ունեցել է առաջին ծխական ժողով՝ հետեալ կարեսը խնդիրների նկատմամբ:

1) Լսել Բեսարաբիայի հայոց Կոնսիստորիայի հրամանը՝ ամուսնացող զոյգերից բժշկական վկայական պահանջելու համար:

2) Ընտրել նոր հոգաբարձութիւն ծխ. դպրոցի համար:

3) Որոշել առժամանակեայ ծխական բժիշկ՝ թէ պատկողներին վկայական տալու՝ և թէ աղքատ ընտանիքներին ամիսը մի անգամ այցելելու համար:

4) Ընտրել ձեռնհաս անձնաւորութիւններից մասնաժողով՝ ս. Սարգիս Եկեղեցու աղքատաց հոգաբարձութեան կանոնագիրքը լրացնելու նոր յօդւածներով:

5) Գրադարան և ընթերցարան ունենալու խնդիր:

6) Ե՞րբ պէտք է ծխատէր քահանան տօն շնորհաւորէնքի գնայ:

7) Ի՞նչպիսի հանգամանքում կարող են Պարսկահպատակ նորեկ և Տաճկահպատակ հայերը՝ ամուսնալու:

Վերոյիշեալ հարցերը ըստ կարգի՝ ի բաց առեալ 4-րդ հարցը, ծխական ժողովում վճռւում են: Հ. չերթեցեան շատ հասկանալի կերպով բացադրած է բժշկական վկայականի անհրաժեշտութիւնը ամուսնացողների համար: Վարակիչ հիւանդութեանց մասն սքանչելի կերպով և բազմաթիւ օրինակներով բանախօսելուց յետոյ՝ յորդորած է ունկնդիրներին՝ լուրջ կերպով մտածելու այդ հիւանդութեան նկատմամբ:

Ժողովի նախագահ Անելով, հ. չերթեցեան առաջարկում է ընտրել ծխական բժիշկ: Ծխականները ընտրում են փորձւած և յայտնի Թ. Կ. Ալեքսեևիչ բժշկին, որի մասին հայր նախագահը պաշտօնապէս յայտնում է և ստանում վերջնիս համաձայնութիւնը զրաւոր, որով պ. Ալեքսեևը՝ յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը՝ և պատրաստականութիւնը: Ծխական բժշկի պարտականութիւնը կայացած է լինում նրանում, որ նա բարեխճարար հետևելով պատկադրութեան առթիւ իրեն զիմող զոյգերի առողջութեան մանրազննին հետևողութեան, նա իւրաքանչիւր ամիս մի անգամ այցելելու է չքաւոր ընտանիքներին: Դրա փոխարէն ծուխը որոշում է, որ պատկւողները տան վարձ բժշկի 1 ըուբլուց ց'2-ը. և բացի բժիշկ Ալեքսեևից նոքա ուրիշ բժշկի զիմելու չեն: Ծխական ժողովում խօսւում է նաև «ծխական» մանկաբարձունու մասին, որոց համար բանաւոր կերպով որոշում է առաջնորդիկ: Բժշկին 1500 ըուբլի և բնա-

կարան, իսկ մանկաբարձուհուն 1200 ըուբլի՝ կողմնակի արդիւնքներով։ Ըստ իս՝ այդ գեղեցիկ մտադրութիւնը Թէօդոսիայում կարող է իրականանալ, որովհետև եկեղեցական կալւածքների և գումարների արդիւնքը տարեբոլոր հասնում է մոտ 6000-ի։

Հայր Հերթեցեան՝ «տօն-շնորհաւորէքի» մասին դնում է մի կտրուկ պայման։ Տօն շնորհաւորէքը, յարում է հ. Ներսէս, թէ դա եկեղեցական կանոնական ծէս չէ, որ քահանայք պարտաւորւած լինին այն կատարելու։ Տօն շնորհաւորէքը՝ մասնաւոր յարդանք է աղօթանւէր ցանկութիւններով։ Ուստի՝ հ. Նախագահառաջարկում է այդ սովորութիւնը դարձնել կամաւոր։ Ինչ ժամանակ՝ և ով կ'կամենայ կասարել իւր տօնախմբութիւնը, կարող է կամ հրաւիրել քահանային և կամ ոչ Քահանայք իրաւունք չպիտի համարեն իրենց առանց հրաւէրքի ծանրանալու ժողովրդի վզին այնպէս՝ ինչպէս այդ սովորական ցաւ է դարձել նոր նախիջեանի և շրջակայքի ժողովրդի համար։ Հայր նախագահը մատնանիշ է արել Ռոստովով հովող Խ և Ս, քահանաների անունները, որոնց խայտառակ գործերին՝ այն է «ձուկի» առևտորվ խանութպանի խանութում, երբ տօնատէրը ձեռները ձիթոտ առևտորի հետ է եղած՝ քահանան տիրացուի հետ ծոցից հանելով խաչ ու նշխարը սկսել են աղօթանւէր պաշտօն մատուցանել։ Ծխական ժողովը որոշում է դարձնել այդ սովորութիւնը կամաւոր։ Այնուհետև ընթացիք առօրեայ գործերը աչալը ջութեամբ առաջ տանելուց յետոյ հ. Հերթեցեան առանձնապէս կանգ է առնում դպրոցական խնդրի շուրջը, որը ժողովրդի հին ցաւերից մինն է լինում՝ և ծխական իրաւասութեան ու կտակներով թողած գումարների կանոնաւոր պահպանութեան և գործադրութեան շուրջը։ Անձամբ ականատես եմ եղած Թէօդոսիայի միդասեան ծխական դպրոցի շէնքը։ Դա ոչ այլ ինչ է, բայց թէ մի մթերանոց։ Մի սենեակ երկու քաժանմունքով։ Ա. Բ. քաժանմունքները միացած են. Այն նոյն սենեակում ուր

սովորում են պատանիք, նոյն այդ մի սենեակումն էլ դարսում են մի պատի տակ իրենց շորերը և ուտեիները, իսկ միւս պատի տակ հանում են կրկնակօշիկները։ Ուսուցչանոց ասած սենեակը՝ ինչպէս և խկապէս ուսուցիչ ասածդ մարդը Թէօդոսիայում չէ եղել։ Մ. Տարախչեան ազգանունով մի հիւանդուտ երիտասարդ թէ տիրացու էր՝ և թէ ուսուցիչ և երբեմն էլ ժամակոչ, որը բացի աշակերտաներին թակելուց՝ ունդիկների պատճառով դասերից զրկելուց մի առանձին գործ չէ ցոյց տուել. և չէ եղել մի օր, որ ծնողները դպրոցի դրանը ահագին դալմաղալներ սարքած չեն եղել։ Մինչև իսկ մի տիկին՝ մի փառաւոր ծեծ է տուել ուսուցիչ համարւած պարոնին զգալի կացուցանելու թէ ինչ կնշանակէ ծեծ տալ՝ և աշակերտաներին դասից զրկել։ Այս մնորոշ դէպքը Թէօդոսիայից յիշում են։ Թէօդոսիայիք յիշում են նաև այն՝ թէ ինչպէս այդ ուսուցիչ պարոնը երգիչ աշակերտներին հասանելի փողը երեք հանգամանքում իւրացրել է, գողանալով նաև 1905 թ. տօնածառի անունով գումարած ստակի կէսը։ Տարախչեանը՝ արդարեղել է չափազանց աղքատ ուսուցիչ։ մինչ այն աստիճան, որ աղքատներին փող բաժանելու օրը, յիշեալ պարոնն էլ է մուրացկանութեամբ պարապել՝ առնելով մի չնչին գումար։ Այս հանգամանքում ես մեղադրում եմ դպրոցական վարիչներին, որոնք դպրոցը յանձնում են իւրաքանչիւր մի պատահական բաղդախնդիր անհատի, որոնք պատրաստականութիւն են յայտնել 200-300 լ. ծառայութեամբ և վերջը իրենց շուայլ և զգելի գործերի պատճառով դիմել են գողութեան և մուրացկանութեան։

Տարախչեանը լինելով պատահականներից մինը՝ ոչ թէ աղնիւ աղքատներից չէ եղել՝ այլ թէ սոսկալի տիպերից մէկն է հանդիսացել դա Թէօդոսիայում։ Աղաների թոյլ կողմը աչքի առաջ ունենալով։ Տարախչեան սկսել է պարապել «խօսք տանելով ու բերելով», որ մենք ասում ենք «շպիօնութիւն»։

Ցաւալի է և խսկապէս խիստ ամաչելի, երբ կարգում ես մի ուսուցիչ անուն կը ող մարդու մասին 1906 թ. № 33 «Մշակում» հետևեալը: «Վեցերորդ Տարախչեան Մկրաչին՝ (ուսուցիչ) համարել բոլորովին արձակւած իր թէ անընդունակութեան կողմից, որ նա փոխանակ դաստիարակելու մատաղ ուսանողներին, ընդհակառակը փչացրել է նրանց «ծեծելով» և թէ հասարակութեանս մէջ բռնւեց որպէս «խօսք տանող բերող»:

(95 ստորագրութիւններ)

Այս որոշումը եղած է յունվարի 25-ին ծխական ժողովում, ուր նաև բողոքել են առաջնորդ Խուզավէրդեանի բռնի արարմունքների դէմ: (Տես նոյն 33 համար «Մշակի»):

Մեր պատմութեան վերջում, ընթերցողը մի անգամ էլ անբաղդութիւն պիտի ունենայ լսելու այդ ողորմելի Տարախչեանի անունը և այն դէպքում արտաքսւած 112 հոգի ծխականների արտակարգ ժողովւ

Գ. ԳլՈՒԽ.

(բովանդակութիւն).

(Ժողովրդի գիտական շարժումը: Նօտար Մ. Զայցեանի վատնած եկեղեցական 3500 ր. գումարը: Հ. Բէրբէրեանի 100000-ի հասնող կտակի գործադրութիւնը: Աղքատաց հոգաբարձութեան և երէցփոխ Ն. Սուբաշեանի հաշիւ չ'տալը: Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Կոնսիստորիայի № 1465, 1905 թ. գրութիւնը: Աղաների բարկութիւնը և վեէժինդրութիւնը հ. Հերթեցեանից: Սուբաշեան երէցփոխի ստորագրութիւններ կորզելը ժողովրդից ընդում քահանայի: Սիմ. Չորայեանի նամակը՝ «Крымский Вестникъ» թերթի № 8-ում: Աղաների «ուղերձը» հ. Հերթեցեանին: Կանանց ընկերութեան հիմնւելը հ. Հերթեցեանի նախաձեռնութեամբ: 12 աղքատ աշակերտների խնամելը՝ և աղքատ օրիորդների կարու ձեւ ձեկի դպրոց մտնելը: Զըպարտութիւն 289 բուբլու մասին: Ստամբովի ֆաբ-

րիկայում աշխատող բանւորների գրութեան թեթևացումը: Զըպարտութիւններ Դ կէտերում հ. Հերթեցեանի վերաբերմամբ Յակովը Քէֆչեանի):

Ժողովուրդը սկսում է գիտակցօրէն նայել հասարակական խնդիրներին: Ուստի և հետզհետէ հրապարակ են գալիս ծածկւած հարցեր, որոց բացւելով ապացուցում է թէ ինչեր են կատարւել թէօդօսիայի խղճուկ հայկական կեանքում, շնորհիւ աղանդերի: Երեք տարի առաջ բոլորովին անիրաւացի կերպով ծախսուած 3500 բուբլու հարցը, որը տեղական նօտար Մ. Գ. Զայցեան՝ իւր երէցփոխութեան օրով ծախսել էր հանգուցեալ «Մարինիստ» Յ. Այվազովսկու կտակով թողած անձեռնմխելի 50000 բուբլուց, որի տօկոսիքն ստանում է Ս. Սարգիս եկեղեցին, նորից հրապարակ է գալիս՝ և դառնում ծխական ժողովի խնդիր:

Երկրորդ՝ հանգուցեալ Հ. Յ. Բէրբէրեանի 100000-ի հասնող կտակի թէ գործադրութիւնը՝ և թէ հաշւետութիւնը, որ հակառակ կտակի տեղի է ունեցել շարունակ (12 տարի) միմիայն երկու եղբայր Ալթունճէանների, Յ. Սելինեանի և տիկին Բէրբէրեանի եղբայրներից մէկի գործադրութեամբ՝ առանց ընդհանուր ծխական ժողովի գիտութեան, այժմս դառնում է հերթական պահանջելի հարց, որով պ. պ. կտակարաններից պահանջւում է ըստ բառացի մտաց կտակի, տալ բացարձակ հաշիւ ծխական ժողովին՝ յայտարարելով այն հայ և ուռս լրագրութեան միջոցաւ իւրաքանչիւր տարի:

Երրորդ՝ Ս. Սարգիս եկեղեցու հայոց աղքատախնամ ընկերութիւնը, որը գարձեալ կեղբոնացած է եղել միմիայն հարուստների ձեռքը և որոնք շատ անխնամ կերպով են վարել իւրեանց պաշտօնը, դառնում է դարձեալ ծխական ժողովի լուրջ հարցերից մինը:

Չորրորդ՝ նոր ընտրւած երէցփոխ Նիկ. Սուբաշեան, որ ամիսներ շարունակ հաշւետեաններին հաշիւ չէ տուել, չ'տալով նոյն իսկ ծխական ժողովին

հաշիւ, երբ ծխականք և ծխատէր քահանան դպրոց  
բանալու համար կամենում էին գիտնալ թէ որքան  
դրամ կայ յիշեալ երէցփոխի մօտ, առաջ է եկել այն  
ընդհանուր մեծ չարիքը, որը մինչև ցօրս էլ տան-  
ջում է տեղական հայ բնակչութեան:

Սուբաշեան երէցփոխի այդ անիրաւացի վար-  
մունքը արդարացնում է Բեսսարաբիայի հայոց առաջ-  
նորդ Ներսէս արքեպիսկոպոս Խուզավերդեանի վի-  
ճակային ատեանը՝ (իւր տան սեղանատունը, ուր ա-  
տեանական գործերը՝ այն տեղ են կատարւել և կա-  
տարւում) իւր նպատակաւոր՝ և կատարեալ անիրա-  
ւացի հետևեալ գրութեամբ:

Պատճէն:

Ն. Ն. Գ.

Վիճակային	Բարեկրօն	Ներսէս քահանայի
Կոնսիստորիա	Հերթեցեանց	Եկեղեցեաց Հայոց
Հայոց	Թէոդոսիոյ:	
Նոր-Նախիջևանի		
և		

Բեսսարաբիոյ.

Թ. 1465.

ի 4 նոյեմբ. 1905 ամի  
ի Քիշնե:

«Առ հեռազրական ինդիր Թերզեանի,  
յՅ-ն ամսոյս, Վիճակային Կոնսիստորիայս  
'ի նկատի ունելով զարհանջ ժողովրդեանդ  
հակառակ 1232 յօդւածոյ ժա. հատ. Ա. մա-  
սին օրինաց Տէրութեան հրատարակեալ 1896  
ամի, այսու պատուիրէ յայտնել ծխական  
ժողովրդականաց, զի երեսփոխանք Եկեղե-  
ցեաց հայոց պարտ են տալ զհաշիւ յա-  
ւարա իւրաքանչիւր տարւոյ ընդհանուր ժո-  
ղովոյ ծխականաց, զինի որոյ զայն հաշիւ  
մատուցանելոց է թեմական հոգեսր իշխա-  
նութեան»:

«Զայսմանէ հրամանագրեցաւ ՚ի սոյն

թիւ պ. երեսփոխանի Եկեղեցեաց քաղաքիդ:  
Անդամ կոնսիստորիայի՝ Սարգիս քահանայի թալ-  
սիգեանց.

Առենադպիր՝ կ. Յովհաննանեան:

Իսկականի հետ բառ առ բառ ճիշտ է՝ և ուղիղ,  
Ներսէս քահանայի Հերթեցեան: 1906 թ. 19 մայիսի  
թէօդոսիա:

Առաջնորդի այդ անտակտ և բիւրոկրատին յա-  
տուկ գրութիւնը ապացուցանում է այն, որ Թէօդօ-  
սիայի հայերը իրաւունք չունին երեցփոխներից  
հաշիւ և կամ անհրաժեշտ կարիքների համար փող պա-  
հանչելու, որովհետև առաջնորդների կաթնառու-  
թով և մտերիմ երէցփոխները ծնունդ լինելով Պետա-  
կան օրինաց 1232 յօդւածից՝ այնքան անձեռնմխելի  
են և գուցէ մաքուր, որքան Պետական հաճութեամբ  
առաջնորդական պաշտօնի մէջ հաստատւած Խուզա-  
վէրդեաններ, որոնք ժողովրդի կեանքն ու հոգին վա-  
րակելուց առանձին՝ ուրիշ ոչ մի գործի ընդունակ  
չեն եղել:

Այսպէս թէ այսպէս, ժողովրդական նոր զիտակ-  
ցական շարժումը՝ աղաների բարկութիւնը գրգռում է  
հ. Հերթեցեանի դէմ, որոնք աշխատում են ինչ կերպ  
էլ լինի՝ վրէժինդիր լինել քահանային:

Մինչեւ այդ ժամանակ աղաները միմեանց միու  
կրծողներ են եղել. բայց այս դէպքում սկսում են  
միանալ և ընդհանուր ուժով գործել թէ քահանայի՝  
և թէ արթնացած ժողովրդի դէմ: Երէցփոխ Սուբա-  
շեան, թէկ 60 տարեկաննից աւելի՝ ալեխանն մարդ,  
չ'ամաչելով գոնէ իւր սիպտակած մազերից, սկսում է  
անցնել փողոցէ փողոց, խանութէ խանութ, տներից  
տուն՝ մէկին այս, միւսին այն համոզելով՝ ստորա-  
գրութիւններ է որսում հ. Հերթեցեանի դէմ գրւած  
բողոքի տակ: Այդ մասին մի բնորոշ նամակ կար  
«Կրымскій Вѣстникъ» թերթի № 8-րդում (1906 թ.)  
Սիմէօն Զորյեանի ստորագրութեամբ: Պարոն Զո-  
րյեան մի առ մի նկարագրելով Սուբաշեանի ստոր

վարմունքը, աւելացնում է, որ ինքը խարւած է երեցփոխից՝ ուստի և հրապարակաւ յետ է վերցնում իւր ստորագրութիւնը ընդդէմ հ. Հերթեցեանի:

Նախ քան այս գիտակցական շարժումը, քանի դեռ աղաներից հաշիւներ պահանջւելիս չէ եղել՝ և քանի դեռ Տարախչեան նկատողութիւններ չէր ստացել հ. Հերթեցեանից իւր անվայել և սինլրոր արարքների համար՝ մենք կարգացել ենք 1904 թ. «Մշակի» № 285-ի մէջ հետեւեալ տողերը Թէօդոսիայից գրւած Դեկտեմբերի 4-ի նամակում, որի հեղինակն է եղել իրեն համար առաջւանից «բուն» տաքացնող Մ. Տարախչեան, կարծելով որ շողոքորթութեամբ արդէն հ. Ներսէսի խնամակալութիւնը կարող է վայելել: Բայց Տարախչեան սխալում էր, որովհետև Հերթեցեան քահանան «շողոքորթներին» բնաջինջ սնողն է եղել, քան շրջապատել դրանցով:

Ահա սոքա են պ. Տարախչեանի խօսքերը յիշեալ նամակում: «Կ'անցնի և մի քանի օր, և Թէօդոսիան բախտ կ'ունենայ իր այնքան երկար սպասած մշտական քահանան ունենալու: Վերջապէս՝ երկու ամիս սպասելուց յետոյ՝ ժողովրդի միաձայն ընտրեալ քահանան՝ Տէր Ներսէս Հերթեցեան, տեղական բարձր հոգեոր կառավարութեան կողմից հաստատւեց, որը և այս օրերս կուգանակից կ'ժամանէ այս տեղ»:

Ինչպէս Տարախչեանի՝ այնպէս և «աղաների» համար հ. Հերթեցեան եղած է մի սրանչելի, մի օրինակելի հոգեորական թէ գիտութեամբ, թէ ընդհանուր դարգացողութեամբ՝ և թէ տաղանդաւոր քարոզութեամբ:

Եւ իրեւ փաստ՝ ներկայացնում ենք ընթերցողներին հ. Ներսէսին ուղղած աղաների «ուղերձը» տէր հօր տօնախմբութեան օրը, որը գրել է նոյն «բազում ակնկալութիւն» ունեցող Տարախչեանը՝ և ստորագրել են բոլոր աղաները ի թիւս բանուրական ներկայացնուցիչների:

«Սիրելի Տէր Հայր!»

«Մէնք Թէօդոսիայի հայ-կուսաւորչականներս, պատիւ ունինք որդիական ակնածութեամբ շնորհաւորելու Ձեր՝—մեր ամենիս սիրելի հոգեոր հօր ծննդեան և անւանակոչութեան տարեգարձը: Տայ Աստուած, որ երկար, շատ երկար տարիներ կարողանաք շարունակել Ձեր արդիւնաւէտ գործունէութիւնը՝ յօգուտ եկեղեցուն և հայրենիքին: Ծանր է Ձեր խաչը, բայց թնդ ծանր բոպէներին մեր Փրկիչը՝ յոյս և հաւատ ներշնչէ նոյն անձնւիրութեամբ, նոյն եռանդով յառաջ ընթանալու: Իսկ մենք Թէօդոսացիներս, որ հայութեան համար կորած կարող ենք համարուել, յոյս ունենք, որ Ձեր անդուլ ջանքերով կը կարողանանք ժամանակին լինել իսկական հայեր, հայի հոգով»:

«Ընդունեցէք, Տէր Հայր, Ձեզ սիրող Ձեր ծխականների երախտագիտութեան հաւասարիքը»:

1905 թ. 26-ն փետրվարի՝ Թէօդոսիա:

1. Երեցփոխան հայոց եկեղեցիների՝ Կ. Արութեանց:
2. Ուսուցիչ հայոց ուսումնարանի Մկրտիչ Տարախչեանց:
3. Տրգատ Աբրահամեան (իրաւաբան):
4. Յովակիմ Արութեանց:
5. Մինսս Զաքարեան (հոգաբարձու):
6. Սարգիս Մտարստեան:
7. Մտեփիան Լազեան:
8. Ազարիա Բաբեան (հոգաբարձու):
9. Աստուածատուր Քայլեան (փոխ հոգաբարձու):
10. Միքայէլ Ալեանակի (ուսանող):
11. Միէօն Քէշիշեան (հոգաբարձու):
12. Յակով Թէֆչեան\* (հաշւետես):
13. Յովհաննէս Այտինեան:
14. Կեցօ Եայլիեան:

\*.) «Որ և իսկ մատնեաց զնա» (հ. Հերթեցեանին):  
(Ծանօթ, հեղին).

15. Յովհաննէս Նալլիանդեան\*):
16. Սարգիս Բալջեան:
17. Գաբրիէլ Մնգերեան (հաշւետես):
18. Պօղոս Ճէվէլիկեան:
19. Խաչատրւը Քեպապճեան:
20. Տիգրան Թարգերտեան:
21. Միհրան Յովակիմեան:
22. Սարգիս Թաթոսեան:
23. Մարիա Խրիստաֆորովսա Տ. Բէրբէրեան (կալւածատէր):
24. Կարպ Կարпович Ալտոնդժի (Կոնտր. Գոսуд. Բանկա).
25. Ալքսան Ալթունճեան (նախ. որբ. ընկերութ.).
26. Արիստակէս Գամբուրեան:
27. Արտաշէս Բաբինեան:
28. Ատեփան Գարակաշեան:
29. Գէորգ Քէցիշեան:
30. Կարապետ Սուբաշեան:
31. Լուսեղէն Սուբաշեան:
32. Մարտիրոս Ծուռդտակեան:
33. Կարապետ Էքմէքճեան:
34. Կարապետ Երեմեանց:
35. Գաբրիէլ Յովհաննիսեան:
36. Կարապետ Տիրացուեան:
37. Յարութիւն Ղարիբեան:
38. Անդրանիկ Մուսայեան:
39. Եղբարք Մանուկեանց:
40. Յարութիւն Շէվէլէկեանց:
41. Պետրոս Էքմէքճեանց:
42. Յարութիւն Թերզեանց:

Սակայն երբ «աղաների» և «ընկերութեան» սիրելի տէր Ներսէսը ծխի իրաւասութեան՝ հասարակական վատնուած գումարների հարցով է սկսում զբաղւի, արդէն այդ ժամանակ՝ այդ «սիրելի» և «անդուլ ջանքերով արդիւնաւէտ գործիչը» դառնում է մի ա-

\*) Վաղամեսիկ Վահան Նալլիանդեանի հայրը: Ծան. հեղ.

— 17 —



տելի և չարութեանց պատճառ մարդ, ու համար աղաները իւրեանց պատիւն են վաճառք հանել թէօդօսիայի ժամ. գեներալ նահանգապետի առաջ ամեն կերպ վարկարեկ անելով իւրեանց քահանային՝ և որի հիման վերայ գեներալ նահանգապետը պահանջել է Սիօնդից հեռացնելու ա. Ներսէսին թէօդօսիայից:

Մատնութեան գաղափարը գուցէ այդ աստիճան համաձարակ չէր լինի թէօդօսիայում եթէ աղաների վարմունքը թեմական իշխանաւորը չ'ջատագովէր տկնյայտնի կերպով, որը մենք կ'աեսնենք յետագայ դէպքերում:

Եւ որքան հ. Հերթեցեան ջանացել է փայլել հասարական օգտարեր գործերում, այնքան աւելի կատաղել են աղաները և սկսել են բամբասել: Օրինակ հ. Հերթեցեան հիմուում է 1905 թ. մայիսի 2-ին կանանց բարեխնամ ընկերութիւն որի նպատակն է լինում աղքատ երեխաներին ամեն կերպ հոգալուց զինի տալ ուսման և արհեստագիտութեան: Առաջի տարին հաւաքւում է մօտ 700 ըուբլի, որից հ. Ներսէս Բնկերութեան թոյլտութեամբ տեղական «անանուն» դպրոցի 12 չքաւոր աշակերտուհիներին ոտից ց'գլուխ հազցնում է: Երկու աղքատ օրիորդների կար ու ձեի դպրոց է տալիս վճարելով իւրաքանչիւրի համար ամսէնը 30 ըուբլի վարձ: Բայց չար լեզուները ինչպէս են Տարախչեան, Քէֆչեան Յակովը և Բենիկ վարդապետը՝ սկսեցին զրպարտել հ. Հերթեցեանին, որպէս թէ Հերթեցեան իւրացը է կանանց ընկերութեան գումարից մնացած 289 ըուբլին: Բայց այդ զրպարտիչները ամօթից զուրկ լինելով չ'ջանացին գոնէ իրենց վարկարեկ անունը վերականգնել՝ ներուղութիւն խնդրելով հ. Հերթեցեանից, որովհետեւ հ. Ներսէս 289 ըուբլին չէր իւրացը և այդ պարզեց քննիչ Բաբգէն վարդապետի ներկայութեամբ: Հայր Հերթեցեան նոր-Նախիջևանի Ա. Խաչ վանքը աքսոր գնալուց երկու օր առաջ յիշեալ գումարը ստանձնե-

Ե՞կ քննիչին ունի նրանից հետևեալ ստացականը:

«Արժանապատիւ Տէր Ներսէսքահանայ Հերթացեանից ստացայ երկու հարիւր ութսուն և ինն ոռոբի (289) 'ի հաշիւ տեղական հայ կանանց աղքատախնամ ընկերութեան:

Բարգէն վարդապետ:

22 ապրիլ 1906 թ.

Թէօդոսիա:

Կանանց ընկերութիւնից յետոյ՝ հ. Ներսէս տանձին խնամք է տարել բանուորներին: Օրինակ Ստամբոլի ծխախոտի գործարանում աշխատող հայ բանուորները ազգային և եկեղեցական մեծ տօներին զրկւած են եղել եկեղեցուց. և ահա հ. Հերթացեան ուղարկելով յիշեալ գործարանի հիմնադրին հայ եկեղեցու նշանաւոր և անշարժ տօների ցուցակը, Խընդրելիս է եղած թոյլատրել նրանց եկեղեցի գալ և գուրս չ'տալ այդ օրերի վարձը՝ աշխատաւորների օրահաշվից:

Ֆիրմայի տէրը պ. Վ. Օ. Ստամբոլին, ոչ միայն չէ յարգում հ. Հերթացեանի միջնորդութիւնը, այլ իսկոյն կարգադրելով տէր հօր կամեցածի համաձայն, գրում է իւր յատուկ շնորհակալութիւնը այդ առթիւ, հետևեալ գրութեամբ:

Կոպիա.

Թեոդոսիա, Марта 21 дня 1905 г.

Табачная

фабрика Его Высокопреподобию

В. О. Стамболи Г. Настоятелю Григоріанскихъ

церквей.

въ Θεοδοσίι (на югъ Крыма)

соб. домъ.

Существ. съ 1861 г.

Телефонъ № 98.

Здѣсь.

За присланную намъ Вашимъ Высокопреподобіемъ, при отношениі Вашемъ 7-го с/м. за № 29, карточку большихъ праздниковъ Армяно-Григоріанской церкви, приносимъ Вамъ нашу искреннюю благодарность.

Съ совершеннымъ къ Вамъ уваженіемъ

В. О. Стамболи.

Съ подлиннымъ вѣрно,

свящ. Н. Эртевціанъ.

Հայր Հերթացեանի հակառակորդների մէջ մի ոմն Յակովը Քէֆչեան Կարս քաղաքի մեշչանին, զիմած է մի վերին աստիճանի ստոր միջոցի անւանարկելու Տէր Ներսէսին հետևեալ զրպարտական գրութեամբ, որից փշում է դժոխային հնոցի ապականող գազային հոա... .

Ահա գաւեր սարքող Յ. Քէֆչեանի մեղադրամները՝ իւր զրած շերես զրութիւնից, որը իբրև ցուցմունք ներկայացրել է քննիչ Բարգէն վարդապետին:

Առաջին՝ 5-րդ երեսի՝ 16-րդ տողում: «Տ. Ներսէսը ժողովրդին իրան քով հաւաքելով, սկսել է զանազան գասախօսութիւններով զբաղուել...

Երկրորդ՝ 6-րդ երես՝ տող 21-րդ, «Տէր Ներսէսը խոստովանութեան ժամանակ՝ ծաղրում է խոստովանութիւնը և ճաշակը», իսկ 24-րդ տողում՝ աւելացնում է. «ուրանալով և հերքելով Աստուծոյ գոյութիւնը»:

Երեսը՝ 28-րդ տողում. «Խոյս է տալիս աղքատի ննջեցեալը թաղելու»:

Չորրորդ՝ 31-րդ տողում գրում է «Նա (Տ. Ներսէսը) հակառակ տիրող օրէնքի (պետական օրէնքի) հեռացնում է ժողովրդի ընտրած և Ս. Առաջնորդի հաստատած երէցփոխանին (Ն. Սուբաշեանին) և նշանակում է ինքնազուխ կերպով մէկին»:

Հինգերորդ՝ 33-րդ տողում գրում է: «Նա՝ իրաւոնքները, զրի սահմանը չ'ձանաշելով՝ կալւածական գործի համար յարաբերութիւնն է սկսում նահանգապետների հետ»:

Վեցերորդ՝ 7-րդ երեսում 12-րդ տող: «Երբ հայր քննիչը բարեհաճի, ես կարող եմ ներկայացնել բաղմաթիւ նամակներ, որոնցով թագնուած մեր մահուան սպառնալիքով փող է պահանջում»:

Եթներորդ՝ 14-րդ տող: Այս և նրանց նման ուրիշ յանցանքներ այն աստիճանի կատարած, որոնց լուրը հասել է ինչպէս երեսում է տեղիս գեներալ նահանգապետին, որը պահանջում է հոգեոր իշխանութիւնից հեռացնել Թէօդօսիայից անարժան քահանային: Ես մեղադրում եմ գարձեալ Տ. Ներսէսին. Ժողովրդի փողերը խարեւայութեամբ իւրացնելու մէջ թէ այստեղ՝ և թէ Լուկանսկում»:

Յիշեալ Յ. Քէֆչեանից առանձին՝ Տ. Ներսէսի վերայ բարդում են նաև երկու սպանութեանց գործ, որը մենք կ'տեսնենք հետևեալ զիսում, որոց պատճառով և հրաւիրում է քննիչ Սինօդից և թէ հոգեւոր քննիչը որքան բարեխղճօրէն է սկսում իւր քըննութիւնը և որչափ իրաւացի և արդար են դուրս գալիս Տ. Ներթեցեանին զրպարտող աղաները՝ և առանձնապէս Յակովը Քէֆչեան, որը այդ ժամանակ Թէօդօսիայում Դաշնակցութեան ենթ-կօմիտէյի ներկայացներից մինն է եղած, միենոյն ժամանակ և «Բենիկ վարդապետի և զեներալ նահանգապետի գաղտնի լուսեալ, ինչպէս այդ պարզ նկատում է իւր բողքից, ուր նրան յայտնի է լինում թէ ինչպիսի լու-

րեր և որպիսի մեղադրանքներով հասած են ժամանակաւոր տեղական գեն. նահանգապետին, որ վեջինս արդէն պաշտօնական գեկուցումն է համարել այն և վճռողական դիրք բռնել տէր Ներսէսի վերաբերմամբ: Բոնում է նաև մի գաղտնի նպատակով հեռագիր դարձեալ նոյն Թէֆչեանից՝ Տ. Ներթեցեանի նկատմամբ, որը ընթերցողը կ'տեսնի «քննական գործում» և թող այդ զարմանքը չ'պատճառէ ընթերցողին, թէ ինչ մարդիկ տեղ են գտել «Դաշնակցական ազատ յեղափոխական գործում» և ինչպէս դոքա խայտառակեցին հերոսների և մաքուր մարտիկների բացած ճանապարհը՝ թողնելով հայ հասարակութեան մէջ յաւերժ անարդանքի արժանի Յ. Քէֆչեաններ...

Դ. Գլուխ.

(բովանդակութիւն).

1905 թ. Սեպտեմբերի 28-ի հոգաբարձական ժողովը: Երէցփոխի և քահանայի վէճը: Երէցփոխի Ն. Սուբաշեանի և Գ. Միսիթարեանի ընդհարումը: Սուբաշեանի քննիչ պահանջելը կոնսիստորիայից յանձին նահապետ եպիսկոպոսի: Նահապետեանի փոխարէն՝ Կոպչէկճեանի քննիչ նշանակւելը առաջնորդից: Կոպչէկճեանի առաջի գալը Թէօդօսիա և աղաների հետ բողոքի նախագիծ կազմել: Հերթեցեանի հետ չ'տեսնելը: Հերթեցեանի բողոքը առաջնորդին՝ Կոպչէկճեանի գալու և մասնակի ժողովներ գումարելու մասին: Առաջնորդի խորհրդաւոր լուսութիւնը: Կոպչէկճեանի երկրորդ գալուստը և երկրորդ մեղադրական արձանագրութեան կազմելը:

\* \* \*

1905 թ. Սեպտեմբերի 28-ին՝ Թէօդօսիայի հայոց անբազդ ուսումնարանում տեղի է ունենում հոգաբարձական ժողով: Վճռելի հարցերն են լինում, ա) կազմել 1905-906 թ. դպրոց, նախահաշխւ: բ) փոփոխութեան ենթարկել դպրոցի անյարմար սեհեակները: գ) Պատեէր տալ աշակերտների համար նոր նստա-

բաններ շինելու:

Հոգաբարձութեան նախագահ՝ հ. Հերթեցեան առաջարկում է երեցփոխ նիկ. Սուբաշեանին՝ այս անհրաժեշտ կարիքների համար փող բաց թողնել: Սուբաշեան մերժում է քահանային՝ պատճառաբանելով, որ փող չ'կայ: Հայր Հերթեցեան պատասխանում է. «Ի՞ոք եթէ փող չ'կայ, յայտնեցէք ծխականներին այդ առթիւ՝ դիմենք նրանց օժանդակութեն»: Սուբաշեան դարձեալ մերժում է և անձնական հաշիւներ առաջ բերելով, յանդզնում է նախագահին անպատճելու ասելով: «Սա ինչու շարունակ դուն փող ես պահանջում, մէկ դպրոցի անունով, միւսը տանդ ռեմոնտի համար» (տունը եկեղեցապատկան շէնք է) և վերջը խօսակցութեան տօնը փոխելով՝ սկսում է կատաղաբար գուալ և ամօթահարել քահանային փող ուղեցածի համար: Նախագահող քահանան ևս իւր կողմից վրդովում է երեցփոխի վարմունքից և համարում է այդ վարմունքը ապատակելու արժանի վարմունք: Երեցփոխը՝ ուղղակի կորցնում է իրեն և աղյական ամբարտաւան եսամոլութեամբ տաքացած թոյլ է տալիս իրեն կատարեալ անարգաբար վերաբերելու հ. նախագահին: Հոգաբարձու աղաները՝ մի սուս և խորին ու դուրեկան լուսութիւն են պահպանել: Հերթեցեան բացարձակ նկատելով այդ նպատակաւոր որոշումը, յայտարարում է փակւած ժողովը՝ և դուրս է գալիս դպրոցից, մոռանալով դպրոցում հերթական կարգի անհրաժեշտ թղթեր:

Աղա հոգաբարձուները շարունակում են մնալ դպրոցում մինչև երեկոյեան դէմ: Նախ քան դոցացրւելը՝ քահանայի ազգական Գ. Միսիթարեան, դպրոցի բաց լուսամուտներից լուելով Սուբաշեան երեցփոխի անվայել խօսքերը քահանայի հասցէին, սպասելիս է եղել դպրոցի դրան բացադրութիւն պահանջելու Սուբաշեանից: Հոգաբարձուները սկսում են դուրս գալ դպրոցից և տեսնելով դրան մօտ կանգնած երիտասարդին՝ բոլորեքեան բարեւում են և անցնում:

Երիտասարդը պատասխանում է ամենքին քաղաքավարութեամբ:

Երբ անցնում է Սուբաշեան, արդէն ամօթից գլուխը կախած չի բարեւում երիտասարդին:

Երիտասարդ Գէորգը մօտենում է իսկոյն Սուբաշեանին և բարեկելուց յետոյ շատ քաղաքավարութեամբ խնդրում է բացադրութիւն: Երեցփոխ Սուբաշեան նորից զրգուում է և հրում է երիտասարդին անւանելով վերջնին «դանգալախ», որ Ղրիմցիք գործ են ածում այդ խօսքը Կովկասիցիների նկատմամբ, որ նշանակում է «յիմար» և «դատարկ գլուխ»: Երիտասարդը վերաւորելով այդ արհամարտական խօսքից՝ խլում է Սուբաշեանի ձեռքից ձեռնափայտը՝ և հարւածում է Սուբաշեանին: Հոգաբարձուք թէկ հեռացած, բայց վերադառնում են դէպի երեցփոխը՝ և բաժանում միմանցից կուռզներին:

Հետևեալ օրը՝ երեցփոխ Սուբաշեան նախ գործ է տալիս տեղական քննիչն, յայտնելով, որ Հերթեցեան քահանայի ազգականը կամենում էր իրեն սպանել՝ խնդրում է երիտասարդին քրէական պատասխանաւութեան կոչել և միենոյն ժամանակ հեռագիր են տալիս Քիչնե առաջնորդին՝ և Տփիսիս եպիսկոպոս Նահապետեանին, որ վերջինս գայ քննութեան հ. Հերթեցեանի վերաբերմամբ, որովհետեւ տէր Ներսէն է թելազըրել իւր ազգականին՝ երեցփոխին սպանելու:

Նահապետեան խիստ ուրախանում է, որ վերջապէս եկաւ մի յարմար ժամ և նա այնպէս պիտ հեռացնէ թէօդօսիայից իւր վարկը բեկանող «ըմբռու» բահանային, որ եկած և գնացած ճանապարհը յայտնի չ'լինի, բայց շատ ցաւում է, որ ինքը Տփիսիսում զբաղւած լինելով եկեղեցական կալւածական խնդրով, առաջարկում է առաջնորդ Ներսէս Արքեպիսկոպոսին իւր փոխարէն նշանակելու Սիմֆերօոլոի «յայտնի» Օգտենափոս աւագ քահանայ Կոպչէկծեանին, որին աղաները յարգելիս են եղել իբրև ձեռնառու քահանայ՝ իւր միջին և վերջին դասակարգի ժողովուրդը ատե-

լով ատելիս է եղել: Յիշեալ քահանայի անունը զրական մի երկու երկերում՝ ինչպէս «Ուտիացոց բարբառի» ուսումնասիրութեան գրքում՝ յիշւած է (յաւելւածում) իբրև «դե» «կախարդ» և «սիւլուկ» պատարժան անուններով: Եւ ահա այդ «կախարդ» և դե» համարւած աւագ քահանան նշանակւում է քննիչ՝ «վասն գործոյն ներսէս քահանայի»: Օգսենտիոս քահանայ կոպչէկճեան առանձին բաւականութեամբ մտնում է Թէօդոսիա և ձեռնամուխ եղել գործի: Սակայն նկատելով որ այդքան գոռում գոչիւնը լոկ ենթադրութիւն է, աղաների գրգուման արդիւնք է, բայց աղաների խաթրը չկոտրելու համար՝ եօթն օր շարունակ «Եւրոպա» հիւրանոցում խելք խելքի տուած, գրել են ջնջել են, մինչեւ դուրս են բերել մի բողոք, որ Սուբաշեանին սպանել էր ուզում Հերթեցեան քահանայի ազգական Գէորգը: (Ազգանւան պէտք չեն զգացել): Եւ ապացուցում է նրանով, որ Գէորգը երեցփոխին հարւածելիս՝ խփում էր հաստ փայտով և ոչ թէ երեցփոխի ձեռքի բարակ փայտով: Եւ վերջապէս պ. Նիկողայոս Սուբաշեանի բղաւոցը և գոռոցը՝ նման էր սպանութեան դուռը քաշւած մի անասունի կանչի, ուստի Գէորգը մեղաւոր է, մարդասպան է և այդ վարմունքի պատճառը տէր ներսէսն է: Վ. Տարախչեան, և այդ խելքով ու խնամքով կարգաւորւած բողոքը ուղարկում են առաջնորդին: Իսկ քննիչ անուն կրող հ. Կոպչէկճեան առանց հարց ու փորձի, առանց տեսակցւելու հ. Հերթեցեանի հետ՝ վերադառնում է Սիմֆերոպոլ:

Տէր ներսէսը՝ յայտնում է Կոնսիստորիային Կոպչէկճեանի գալու՝ մասնակի ժողովներ զումարելու և վերադարձի մասին, ինդրում է իբրև ծխատէր՝ գիտնալ գործի էութիւնը: Ոչ առաջնորդը և ոչ Կոնսիստորիայն տեղեկութիւն չեն տալիս հ. Հերթեցեանին: Այլ մի բան միայն: Երբ առաջնորդը ստանում է յիշեալ բողոքը՝ և տեսնում է, որ միակողմանի մի զրու-

թիւն է, ուստի հրաման է արձակած եղել (թէկ գալու ձեալ գաղտնի հ. Հերթեցեանից) հ. Կոպչէկճեանի վերայ գնալու Թէօդոսիա՝ և լրացնելու քննութիւնը: Սկզբում տէր կոպչէկճեան չի գալիս Թէօդոսիա, այլ ուղարկում է Սուբաշեանի բողոքի պատճէնը, խընդրում է բացարութիւն: Հայր Հերթեցեան երկրորդ անգամն է դիմում առաջնորդին և առաջ բերելով փաստեր ապացուցած է լինում թեմակալին, որ հ. Կոպչէկճեան բարեխիղ քննիչ չէ, այլ աւելի շուտ դրգիչ է, ուստի ինդրում է կոպչէկճեանի փոխարէն կարգել մի այլ բարեխիղ և ձեռնհաս մարդու, նոյն իսկ աշխարհականի, քան կոպչէկճեանին: Առաջնորդը այս անգամն էլ լուսութիւն է պահում և մի կարճ ժամանակից յետոյ տէր Օգսենտիոս կոպչէկճեան նորից մտնում է Թէօդոսիա և առանց գիտութեան ծխատէր տէր ներսէս քահանայի՝ կազմում է ծխական ժողով: Հ. Հերթեցեան դիմում է պաշտօնապէս քննիչին ինդրելով իւր ունեցած լիազօրութեան կամ կրկնակի քննութեան գալու Կոնսիստորիայի հրամանը՝ և կամ առաջարութիւնը: Քննիչ քահանան ևս անպատճիւան է թողնում հ. Հերթեցեանի ինդիրը՝ և կոչելով իւր մօտ (հիւրանոցում) ժամհարներից մէկին, տալիս է նրան հրաւիրաթուղթ ծխական ընդհանուր ժողով գումարելու: Հայր Հերթեցեան ունենալով ուտիկանապետի № 358 (1905) առաջադրութիւնը թէ «մասնաւոր և թէ ընդհանուր ծխական ժողովների գումարման առթիւ՝ ինքը իբրև ծխատէր քահանայ և հոգարածութեան նախագահ պարտական է 8 օր առաջ տեղեկացնել ուտիկանապետին», ուստի արգելում է ծխական ժողովը իւր կողմից՝ թողնելով գումարելիք ժողովի պատասխանատութիւնը եկտոր քահանայի վերայ: Քննիչ քահանան փոխանակ ըստ իւր իրաւունքի (եթէ նա ունէր լիազօրութիւն) դիմելու ուր հարկն էր և ստանալու ժողով գումարելու թոյլութիւնը, բարկանում է հ. Հերթեցեանի վերայ, կազմելով երկրորդ արձանագրութիւնը, հեռանում է

Թէօդօնիայից՝ սերմանելով չարիքի առաջի հունտը:

b. ԳԼՈՒԽ.

(բովանդակութիւն):

(Սիմֆերոպոլ քաղաքում կոպչէկճեանի վիրաւորւելը. նոր մեղադրանք հ. Հերթեցեանի գէմ: Զրպարտութիւնը մուռմ է լոկ զրպարտութիւն: Առաջնորդ Խուղավէրդեան մարմնաւոր իշխանութեան գերում):

1905 թ. Նոյեմբեր ամսում՝ Սիմֆերոպոլ քաղաքում վիրաւորւում է թեթև կերպով հանրածանոթ կոպչէկճեան աւագ քահանան: Այս դէպքումն էլ հ. Կոպչէկճեան շատ աշխատում է կեղծ վկաներով հաստատել, որ իւր վիրաւորւելու պատճառը Հերթեցեան քահանան է, սակայն Սիմֆերոպոլի դատական քննիչը չգտնելով մի էական փաստ այդ մեղադրանքի վերաբրմբ` (չ'նայած որ դատական քննիչ պ. Նեօվիցի լինում է շատ մտերիմ բարեկամ վիրաւորւած կոպչէկճեան քահանայի) այնուամենայնիւ իւր խղճի հետ խաղեր չի սարքում և պատասխանատութեան անգամ չի կոչում հ. Հերթեցեանին՝ իւր խիստ և երկու ամսեայ քննութիւնից յետոյ:

Բայց այդպէս չի վարւում թեմական առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս Խուղավէրդեան, Վերջինս առանց քննութեան, առանց գոնէ մօտաւոր տեղեկութեան՝ հիմնելով հ. Կոպչէկճեանի խնդրի վերայ, դադարեցնում է հ. Ներսէսին քահանայութիւնից և գրում է պաշտօնապէս:

«Ի քննական գործոց վասն բողոքանաց երեսփոխանի եկեղեցեաց հայոց քաղաքիդ՝ և այլոց ՚ի Զէնջ ի յայտ եկն, զի արդարե խոռվայոյզ և անհանգիստ բնաւորութեամբ Զերով՝ թելազրելով ազգականի Զերում ուրում Գէորգայ նախ ձեռնամուխ լինել կենաց երեսփոխանին՝ և ապա կարդեալի մէնջ քննիչ ծերունի Օգսենտիոս տւագ քահանայն կոպչակճեանց»: Այնուհետև այդ արտաքոյ

կարգի վեղարաւոր դատաւորը՝ քահանայի կոչման նկատմամբ սաղմոսներից և մարդարէութիւններից բարբառելով՝ վերջացնում է իւր բարոյախօսական տաեմ թէ խրատական՝ առաջադրութիւնը այսպէս. «՚ի սոյն թիւ՝ մատուցմամբ իսկական քննական գործոյն, խնդրեցաք զբարեհաճ տնօրինութիւն նորին Սուրբ Օծութեան Վեհափառ Հայրապետն ազգիս, խնդրելով տեղափոխել զՁեզայլ վիճակ ի քահանայագործութիւն»: № 313, յ8 դեկտեմբ. 1905. Քիշն:

Ահա ընթերցնող, ահա մի խարդախ վարմունք, որը պարուրւած է տխմար, տգէտ և յետին աստիճանի ստոր նպատակների իրագործման համար: Ես չէ ցանկալ մի ըսպէ անգամ լինել դատավոր քննադատող և Զեր եզրակացութիւնը իմ մտքով դուրս բերող՝ այլ ես նպատակ եմ ընտրել միմիայն եղեռնագործութեան, մտնութեան յատուկ փաստերը լուսաբանելու՝ թողնելով այնուհետև բոլոր եզրակացութիւնը Զեր խոհուն դատողութեան, սակայն այսպիսի դէպքերում ներեցէք ինձ, որ ես ևս կամենում եմ իմ ներքին յուզմունքն թեթևացնել նկատելով անօրինակ իշխանութեան վաս վարմունքը: Ներսէս արքեպիսկոպոս Խուղավէրդեան իւր այդ առաջադրութեամբ ինքն իրեն մերկացնում է այնպէս, որ նոյն իսկ մենք սքանչանում ենք նորա տգիտութեամբ: Օրինակ նա՝ այդ սրբազն կոչումն ունեցրդ հոգեորականը, որ հրամաններով միայն բարոյախօս և թղթով բարոյագէտ է հանդիսացել ստորագրեալ քահանայի վերաբերմամբ, հէնց իւր զրութեան սկզբնատարից սկսած ց'վերջն՝ ստում է և չարաչոր խարում: Վեհափառ Հայրապետի զիւան քննական գործ՝ յանձին Սուբաշեանի և աւագ քահանայ կոպչէկճեանի սպանութեանց աղագաւայն էլ գեռ յիշում է «՚ի յայտ եկեալ» (այսինքն ապացուցած գործ) այդպիսի մի քրէական գործ ոչ մտել է՝ և ոչ կայ եղել: Սրբազն առաջնորդը ցաւի սիրտ սուր է խօսում: Նորա զրկած գործը, Սուբաշեանի՝ և կոպչէկճեանի բողոքներն են, եղել, որը

Դիւանից զմկւել է Սինօդ՝ մօտաւոր քննութիւն կատարելու։ Եւ այդ բողոքների պատճէնները հ. Հերթեցեանի մօտ կան։

Ընթերցողներին յայտնի է արգէն՝ թէ Սուբաշեանի բողոքը իբրև քննական գործ և այն էլ գեռ ապացուցւած չէր կարող լինի, որովհետև մեղադրեալի կողմից՝ այն է հ. Հերթեցեանի կողմից բացադրութիւն չէ եղել։ Հերթեցեանի կողմից միմիայն բողոք է մտել կոնսիստորիա, որով մեղադրեալը օր ցերեկով տեսնելով կոպչէկճեանի դաւադիր վարմունքը՝ հրաժարւել է նորա ձեռքով քննութիւնից։ բայց այդ դեռ ապացոյց չէ, որ Հերթեցեան քահանան մեղաւոր է։

Իսկ հ. Կոպչէկճեանի մասով Թէօդօսիայում քննութիւն չէ կատարւել՝ և չէր էլ կարող լինի, որովհետև անցքը պատահել է Սիմֆերոպոլ քաղաքում և ոչ թէ Թէօդօսիայում։ Սիմֆերոպոլում քննութիւն է հ. Կոպչէկճեանի գործը դատավարական լուրջ և բազմակողմանի հետազոտութեամբ մարմնաւոր իշխանութեան ձեռքով և Ներսէս քահանայ Հերթեցեան նոյն իսկ դատի չէ կոչւում, որովհետև ապացոյցներ չեն եղել քահանայի մեղաւորութեան, բայց Թիշնեում՝ Ներսէս արքեպիսկոպոսը՝ երազի մէջ տեսնելով իւր սիրելի և «զանազան տուրքերի» միակ աղբիւր հ. Կոպչէկճեանին վիրաւորւած, իսկոյն վեր ցատկելով գոռացել է, որ դա Հերթեցեանի գործն է և հետևապէս՝ մի հրաման՝ դադարեցնել քահանայութիւնից։ Երկիւղ կրելու ինչ կայ. մարդը գեներալ-գուբերնատօրի դերումն է զգացել իրեն և հետևապէս արտադրել է իւր քէֆի ուղեցածը։ Այդպիսի դէպքերում օրէնք, դատարան և քննութիւն գոյութիւն չեն կարող ունենալ. այլ մի բան. — վատ կամ լաւ արամադրութիւն, և վճիռը այն «կաղապարով» է գուրս է գալիս։

Վերոյիշեաներից առանձին, ես կ'իսնդրէի ընթերցողին ուշի ուշով հետևելու առաջնորդի արձակած վճրին իսօսքերին, որով այդ եպիսկոպո-

ու շատ հրաշալի կերպով գուրս է ժայթքել իւր ներքին ամբոխմունքը, իւր թեմում հ. Հերթեցեանին համարել է «Մարդասպան» և այդ մարդասպան մարդու համար դեռ ինքը բարեխօսութեան նեղութիւն է յանձնածն առել Ամենայն Հայոց Կաթուղիկոսին գրելու, որ Տէր ներսէսին այլ թեմ տանի քահանայագործելու համար։ Սա մի պերճախօս փաստ է, որ առաջնորդը չ'ցանկանալով հ. Հերթեցեանի ուղղամիտ ներկայութիւնը տանել իւր թեմում, աշխատել է հեռացնել իւր թեմից. բայց չ'կարողանալով մի այլ միջոց ընտրել, մտածել է «մարդասպան» անունը տալով հեռացնել, համոզելով, որ մարդասպանութիւնը ծանր խօսք է, հակառակ է մարդոց և Աստուծոյ, ուստի և այդպէս էլ արել է։ Բայց մենք տալով մեր յարգանքը հայ ժողովրդի գարերով սահմանած եկեղեցական նւիրական կարգին ու սահմանադրական ուղղութեանը, կասենք Տէր ներսէս արքեպիսկոպոսին, որ իւր զըրպարտութիւնը յանձնին հ. Հերթեցեանի միանգամայն անվայել է իւր կոչմանը ու տարիքին և դրանով նացոյց է տուել, որ ինքը՝ ոչ եկեղեցական է հայ հօտի, ոչ եպիսկոպոս է հայ-եկեղեցւոյ՝ և ոչ բարեխիղճ մարդ է Աստուծոյ Արարչակերտ աշխարհում։ Եւ լաւ չէր լինի որ այդպիսին հեռանար այդ պատասխանատու կոչումից, որով ազատած կ'լինէր այս կամ այն առաջնորդական թեմը իւր վատահամբաւ և անօգտակար գործերից, որոնց մարդաշար նմուշները՝ մեր ընթերցողը կ'տեսնէ յետագայ գլուխներում։

Անցնելով բուն պատմութեան խնդրին, կ'աւելացնեմ, որ Սուբաշեանի բողոքը մտնում է Թէօդօսիայի հաշտարար դատաւորի իրաւասութեանը, որով Սուբաշեան երէցիփոխ՝ և երիտասարդ Գէորգ Միթթարեան երկուսն էլ ճանաչւում են մեղաւոր փողոցում կոփւ անելու և հասարակաց հանգստութիւնը խանգարելու համար։

Այսուհետև Օգսենտիոս քահանայ Կոպչէկճեան

և Սուբաշեան, և աղաներ և թեմական առաջնորդ և վերջապէս Սինօդի անդամ Նահապետեան՝ զործը դնում են մի նոր ճանապարհի վերայ՝ որ մենք անւանում ենք «խաբեբայութեան և խորամանկութեան արջան»:

## Զ. Գլուխ.

(բովանդակութիւն).

Հայր Հերթեցեանին մեկուսացնելու ծխականներից և ուղարկելու մտադրութիւն էջմիածին։ Կեղծ հեռագրներ Կաթուղիկոսի անունից, Հերթեցեանի Սիմֆերոպոլ եղած միջոցին հայոց առաջնորդի զրապատական հեռագիրը Տաւրիկեան նահանգապետին։ Նահանգապետի մօտաւոր քննութիւնը, որով ապացուցում է առաջնորդի զրապարտութիւնը։ Նահանգապետի Դիւանից տրւած զրապարտուկան հեռագրի պատճենը։ Թէօգոսիայի ծխական ժողովի բողոքը և վճիռը, «Մշակ» № 33 1906 թ. Հ. Հերթեցեանի էջմիածին գնալը՝ և Կաթուղիկոսին ներկայանալը։ Կաթուղիկոսի զարմանքը Հերթեցեան քահանայի էջմիածին գալու համար։ Կեղծ հեռագրի մերկացումը «Մշակ» № 61, 1906 թ. Դիւանապետ Յ. վարդապետի հեռագիրը «Մշակ» № 67. Սինօդի որոշումով և Կաթուղիկոսի հրամանով հ. Հերթեցեանի վերադարձը Թէօգոսիա՝ քահանայագործելու։

\*\*\*

Հայր Հերթեցեանի թշնամիները տեսնելով, որ կեղծ վկայութիւններով անգամ իրենց նպատակին չ'ասուն, նորից դիմում են «ահմեռ չարիքների ծնող» Նահապետ Եպիսկոպոսին, որ վերջինս մի ելք, մի ճարու հնար գտնէ Հերթեցեանին հեռացնելու Թէօգոսիայից։ Նահապետեանը՝ «բաժանեա որ տիրես» քաղաքականութեան դիմելով, կաթուղիկոսի Տփիփիս եղած միջոցին յօրինում է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի անունից կեղծ հեռագիր, որպէս թէ արձակելով Թէօգոսիայի ծխատիրութեան պաշտօնից հ. Հերթեցեա-

նին, Վեհափառ Կաթուղիկոսը՝ միենոյն ժամանակ հրամայում է քահանային գնալու անյապատղ էջմիածին և ներկայանալու իրեն։ Սինչե այդ՝ Կաթուղիկոսին հասած է լինում Քիշնեի հայոց առաջնորդից հետևեալ հեռագիրը։ «Տիֆլիսъ, изъ Кишинева 17. 1. 59. 9.

11. 30. Его Святейшеству Верховному Патриарху Кафоликосу Всех Армянъ.

«Θεοδοσійскій священникъ Эртевціанъ какъ телеграфируетъ ктиторъ Субаши, организовалъ изъ части общества, выбравъ новаго ктитора, не признавая мою власть, 5-го 6-го 7-го служилъ обѣдни. Донося объ этомъ самоволіи Эртевціана, во избѣжаніи опасности, покорнѣйше прошу Ваше Святейшество телеграммой вызвать Эртевціана и отправить монастырь на покаяніе удаленіемъ изъ вѣренной мнѣ епархіи.

Архіепископъ Нерсесъ.

(Թարգմանութիւնը).

Տփիփիս Քիշնեից. 17. 1. 59. 9. 11. 30. (որ օրը և որ ժամին):

Նորին Սրբութեան՝ Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին։

Թէօգոսիայի քահանայ Հերթեցեանը՝ ինչպէս հեռագրում է երեցփոխ Սուբաշին, կազմակերպելով ժողովրդի մի մասը՝ ընտրեց նոր երեցփոխ։ Զ'ձանաչելով իմ իշխանութիւնը՝ 5-ին, 6-ին և 7-ին պատարագել է։ Հաղորդելով Հերթեցեանի այդ ինքնակամութեան մասին, ի խոյս վտանգից, խոնարհաբար խընդրում եմ Զերդ Սրբութեան՝ հեռագրով կոչել Հերթեցեանին և ուղարկել վանք ապաշխարելու, հեռացնելով ինձ յանձնուած թեմից։

Ներսէս արքեպիսկոպոս։

Զարմանալի հաւատարմութիւն...։ Բաւական է, որ Թէօգոսիայի աղաներից մէկն ու մէկը՝ եղել է դա Սուբաշին, և կամ Զայցեան մի «զօնօս» հարցրած է եղել առաջնորդ Խուղավէրգեանին, և այդ բարձր աս-

տիճան եկեղեցականը իրան կրակի միջից անցկացնելով, աշխատել է ի կատար ածել աղաների խնդիրը՝ առանց քննութեան։ Այդ է ապացուցանում վերոյիշեալ հեռագիրը։ Եւ իսկապէս եթէ Խուղավէրդեան լինէր գոնէ փոքր ինչ սեպհական խելքի տէր, ունենար փորձառու դատաւորի մի չնչին հմտութիւն, «ի խոյս ապագայ պատասխանատութենէ» նա գոնէ պէտք էր Սուբաշեան երէցփոխի տւած հեռագիրը քննութեան առնէր և երբ իրօք հաստատում էր Հերթեցեանի մեղաւորութիւնը՝ լիազօր էր ինքը որպէս թեմական առաջնորդ, առանց Կաթուղիկոսին դիմելու պատիժ սահմանելու քահանայի համար։ Իսկ այդ ձեի «Ժանդարմիական» վարմունքը նախ դատապարտելի է հայոց թեմական մի առաջնորդի համար, որը արդարութեան գաւազանով զլուխ է անցել բանաւոր հօտի՛ տանելու նրան դէպի անսայթաք կեանք, և ապա կասկածելի։ Խուղավէրտեանի նման ողորմելի ե տգէտ սեազգեստները առիթ են տուել հաստափոր աղաներին ծաղրելու հէնց նոյն իսկ իրենց նման առաջնորդներին, մերկացնելով դրանց հոգեկան բոլոր առաքինութիւնները թէ վարչական, թէ կողմնապահութեան, թէ կաշուակերութեան և թէ դիրք և բարոյական ողջախոնութեան գործերում։ Հանգուցեալ Սեղբակեան արքակիսկոպոսը՝ մի մեծ հեղինակութիւն էր որի հանդէպ զլուխ էին խոնարհեցնում հանգուցեալի թշնամիները միմիայն նրա համար, որովհետև յիշեալ եկեղեցականը մամոնայապաշտ չէր, և «սկ» զրօշի համար արդարութեան հետ խողել սարքելիս չէ եղել։ Թէ ի չպէտք է ծածկել, որ հանգուցեալը ևս «սեազգեաց» և շարունակութիւն «սկերի» մի հաստակող և յամառ մարդ էր. բայց Սեղբակեանի յամառութիւնը և կամակորութիւնը իւր ներքին համոզմունքի արդիւնք էր, որ դարձեալ ոչ ոք չի կարող զովաբանել։ Իսկ Խուղավէրդեան արքեպիսկոպոսը՝ մի «յայտնի» խաղալիք է այս կամ այն ծառայողի և ապա աղաների։ Եւ նորա «գաղանի գործոց» խորհրդական և երդւեալ ծա-

ռան, մի ինչ որ Կարապետ Յովհանջանեան, որի մասին Նոր-Նախիջևանի երկու բաւականին յայտնի գիրքի և գործունեայ քահանաներ պատմեցին, որ մի «արինային միկրոռ» է առաջնորդարան մտնող և ելնող գործի տէր մարդկանց վերաբերմամբ, գովաբանելով նաև «յորովայն է ընտրեալ» խառնակիչ բնաւեր Բենիկ վարդապետի խնամակալութեան պաշտօնը «առաքինիների թագ ու պատկ» Տէր Ներսէս արքեպիսկոպոս Խուղավէրդեանի նկատմամբ։

Գուցէ Խուղավէրդեան առաջնորդը այդ աստիճան «ապիկար» չ'ինէր եթէ Նահապետեանի նման մի «հազւագիւտ» սևագլուխը չ'ինէր նորա թևարկողը։ Եւ բաղդի բերմամբ նոյն Նահապետեան վերջերս գտանւում էր էջմիածին, Սինօդի անդամ էր և Կաթուղիկոսի վաստանութիւնը երբեմն երբեմն գրաւող կամ աւելի՝ ճիշտը «որսացող» էր։ Իսկ Նահապետեանի նման մի պաշտպան ունենալ, նշանակում է «Մաքիավէլի» գիրկը հանգչել ուր ամեն մի միջոց իւր անարգել նպատակն ունի։ Եւ ահա Նահապետ սրբազնը շարժում է՝ երբ Տիխիսում Վեհափառն ստանում է, մեր վերև յիշած հեռագիրը՝ ուստի և անօրէնութեան պրօցւեն ոկտում է։ Իրը թէ՝ Վեհափառ Հայրապետը արդէն հալած իւղի տեղ ընդունելով Քիշնիկ առաջնորդի հեռագրական խնդիրը, անօրինած է հետեւեալը այս հեռագրով։

«Отстраняя священника Эртевціана отъ Thеодосійского Прихода, повелѣваемъ предложить ему безотлагательно явиться въ Эчміадзинъ.

Мктичъ Католикосъ Всѣхъ Армянъ 10 Января 1906 г. Тифлисъ.

(Թարգմանութիւնը).

«Հեռացնելով Հերթեցեան քահանային Թէօդոսիայի ծխատիրութիւնից, հրամայում ենք առաջարկել նրան անյապաղ ներկայանալու էջմիածին»։

Մկրտիչ Կաթուղիկոս Ամենայն Հայոց։

10-ն յունվարի 1906 թ. Տիխիս։

Առաջնորդը այս ուրախառիթ հեռագիրը ստացածի պէս՝ իսկոյն հեռագրով առաջադրում է Հերթեցեան քահանային շուտով գնալու էջմիածին:

Հ. Հերթեցեան, որ յատկապէս ցանկութիւն է ունեցել զնալու կաթուղիկոսի մօտ և մի առ մի բացագրելու թէօդոսիայի անցըերը, յունվտրի 10-ին ստանալով հեռագիրը, 11-ին № 1 յայտարարաւթեամք գիմում է առաջնորդին և խնդրում ուղարկելու իրեն ուսւ լեզւով հաւասարագիր (յծութեանու կովկաս մտնելու համար՝ և ապա ճանապարհածախը երթեռկութեան և նպաստ ընտանիքին ց'իւր վերադարձը) (Մի այսպիսի տարրական ընդունւած օրէնք, Խուդավերգեան չէ գիտցել):

Հ. Հերթեցեան համոզելու համար իւր թեմակալին, որ արդարև ինքը կամենում է զնալ էջմիածին, սոյն յայտարարութեան մէջ շեշտած է, որ տրւի իրեն 200 ր. ի հաշիւ իւր ռոճկաղբամի\*):

Եւ իւր յայտաբարութիւնը՝ ինչպէս յիշեցի, յուն-  
վարի 11-ին ուղարկել է և յուսալով, որ պատամիա-  
նը կ'ստացվի 20-ին յունվարի, որովհետեւ փոստը հաս-  
նում է\*\*) Թէօգոսիայից Քիշնե 4-րդ օրը, և 4 աւուր  
վերայ պատամիան գալիս, ուստի հ. Հերթեցեան յուն-  
վարի 15-ին կարևոր գործով գնացած է լինում Սիմ-  
ֆերօպոլի, կարճժամանակով վերադառնալունպատակով:

Յունավարի 16-ին արդէն հ. Հերթեցեան լինում է Սիմֆերոպոլում, իջևանում է «Եվрոպեյսկая» հիւրանոցում, որի մասին և հեռագրում է թէ խոր կոնջը՝ և թէ առաջնորդին:

«Առաջնորդ որ գու առաջնորդ ես», իսկոյն ցոյց  
է տալիս իւր քոլոր ոյժը, կարողութիւնը և վարդա-  
պետ մարդու առաքինութիւնները Սիմֆերօպոլում ևս:  
Եւ գիտէք ընթերցնել ինչ է անում այդ հայ անուն  
կրող հոգևորականը...: Մասնում է հ. Հերթեցեանին  
Սիմֆերօպոլում նստած Տաւրիկեան նահանգապետի

\*\*) Հաստ ցուցման հ. Հերթիցեանի: (Ծանօթ. հեզ.)

Ճեսքը հետեւեալ զրպարտական ճեռագրով, որ մենք  
իւր տեղեկագրութեամբ արտագրում ենք Տաւրիկեան  
նահանգապատի դիւմանից արևած հաւասարիագրից:

## Копія.

М.В.Д.  
Таврическое  
губернское  
Правлениe

## Справка.

Отдѣленіе.  
Столъ.

21 Января 1906 г.

Nº 207.

г. Симферополь.

Священнику Нерсесу Эртевцянцу  
объявлено чрезъ Симферопольскую Го-  
родскую Полицію о немедленномъ выѣз-  
дѣ въ Эчміадзинъ вслѣдствіе телеграммы  
на имя Таврическаго губернатора отъ 17-го  
сего января слѣдующаго содержанія:

Вслѣдствіе предложенія Верховнаго Патріарха Католикоса Всѣхъ Армянъ, покорнѣше прошу Ваше Превосходительство, немедленно отправить Феодосійскаго священника Нерсеса Эртевціана Эчміадзинъ, такъ какъ вопреки распоряженію высшаго Духовнаго Начальства Эртевцянъ продолжаетъ священодѣйствовать, нарушающъ спокойствіе общества армянъ.

Начальникъ Армянской епархіи Архієпископъ Нерсесъ».

Совѣтникъ (почеркъ неразборч.).

И. д. Дълопроизводителя (Добрикинъ).

իսկականի հետ ճիշտ է ն. ք. Հերթեցեան.

1906. Հունիսի 15. Թէօդոսիա:

(Թարգմանութիւնը):

Ն. Ն. Գ.

Տաւրիկեան

նահանգական

կառավարութիւն:

Բաժանմունք:

Սեղան:

21 յունվ. 1906 թ.

№ 207.

Ք. Միմֆերօպօլ:

Ներսէս քահանայ Հերթեցեանին Սիմֆերօպօլ քաղաքի ստիկանութեան միջոցով յայտարարւած է անյապաղ էջմիածին գնաւու մասին, յունվարի 17-ի Տաւրիկեան նահանգապետի անունով եկած հետազրի հիման վերայ, որ ունի հետեւալ բովանդակութիւնը:

Ի հետեւամ առաջադրութեան Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի՝ խոնարհաբար ինդրում եմ Զերդ Գերազանցութեան, անյապաղ ուղարկել Թէօդօսիայի քահանայ Ներսէս Հերթեցեանին էջմիածին, որովհետեւ հակառակ հոգեոր Բարձրիշխանութեան կարգադրութեան, Հերթեցեանը շարունակում է քահանայագործել լանգարում է հայ հասարակութեան հանգստութիւնը»:

Հայոց թեմական առաջնորդ՝

Արքեպիսկոպոս Ներսէս:

Խորհրդական՝ (ստորագրութիւնը չի կարդացւում):

Կ. պ. գործափարի՝ Դօքրիկին:

Իսկականի հետ ճիշտ է Ն. ք. Հերթեցեան 1906 յուլիսի 15. Թէօդօսիա:

Տաւրիկեան նահանգապետի մօտաւոր հարց ու

Պատճէն:

փորձից դուրս է գալիս այն, որ Ներսէս քահանայ Հերթեցեան յունվարի 16-ին հասել է Թէօդօսիայից Սիմֆերօպօլ, հետևապէս նա յունվարի 17-ին շարունակ լինելով Սիմֆերօպօլ՝ չէր կարող Թէօդօսիայում քահանայութիւն անել: Ուրեմն այդ առաջին սուտ: Երկրորդ՝ որ նահանգապետի առանձին ուշադրութեան խնդիրն է եղել հ. Հերթեցեանի ժողովրդի հանգստութիւնը խանգարելու հարցը, բայց ի պատասխան իւր առաջադրութեան յանուն Թէօդօսիայի նախկին ուստիկանապետի՝ (Պոմանովսկի) յայտնի է եղել՝ որ Ներսէս քահանայ Հերթեցեան — ժողովրդի հանգստութիւնը չէ խանգարել. ուստի պ. նահագապետը՝ չափազանց զարմանում է, որ Թէօդօսիայի ստիկանութեան պաշտօնը կատարել է Բեսսարաբիայի հայոց առաջնորդը՝ այն էլ վատ «գօնոս»-չիկի ձևով այսինքն խարբեցյութեամբ: Եւ վերջապէս քահանայի պատարագ անելով ինչո՞ւ պէտք է ժողովրդի մէջ խոռվովթիւն լինի, մինչ այն աստիճան, որ ստիկանութեան «բարերար» միջնորդութեան կամ միջամտութեան կարութիւն լինի: Առաջնորդ եպիսկոպոսը՝ ինչպէս առում են, ականջ է բաց արել, որ Հերթեցեան քահանան վտանգաւոր է... Ուստի թող ստիկանութիւնը քնից արթնանայ...»:

Բայց մեծ ցաւ հայ սրբազնակատար երկար վեղաբաւորին, նահանգապետը խակոյն հասկանում է բանի էութիւնը և առաջնորդի սրտի իղձը՝ այն է հ. Հերթեցեանին «եթաղով» զրկել Մայր-Աթոռ՝ մնում է նահանգապետի ստքերի տակ և Տէր Ներսէս մնում է Սիմֆերօպօլ ց 28-ն յունվարի՝ ուր և ստանում է ուսւաերէն լեզով հաւաստիագիր էջմիածին մեկնելու: Յունվարի 29-ին հ. Հերթեցեան մտնում է Թէօդօսիա՝ և ստանալով երեցփոխից 200 բուրլի ի հաշիւ իւր ոռձկաղբամի, անմիջապէս ճանապարհում է դէպի էջմիածին: Թէօդօսիան մնում է առանց հայ քահանայի:

Ժողովուրդը՝ որ արդէն հասկացել էր առաջնորդի

և աղաների գիււական խաղերի միարը՝ արտաքսյ կարգի ծխական ժողով գումարելով՝ արձանագրում են թեմական առաջնորդի այդ զգւելի վարմունքը՝ յաշտարաբելով՝ ի լուր աշխարհի հետեւալը։ Տես «Մշակ» № 33. 1906 թ.

Թէօդօսիա, 25 յունվարի 1906 թ.

Հասարակական բողոք՝ և վճիռ։

«Ի ներքոյ սորին ստորագրող ծխականներս Թէօդօսիայի հայոց եկեղեցիների, որ կազմում ենք 100 տուն ծխարաժին, այսօր հայոց դպրոցում կազմելով լմունանուր ծխական ժողով նախագահութեամբ պ. Յ. Թէրզեանի, վճուեցինք ի լուր աշխարհի յայտնի կացուցանելու հասարակութեանս անհնաւն վիշտ պատճառող պարսաւելի գործերը այս կարգով։

Առաջին: Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Տ. Թէմակալ Սուաջնորդի № 313 անցեալ 1905 թ. գեկտեմբերի 8-ի արձակած առաջադրութիւնը, որ նա դադարեցրած է համարել մեր ծխատէր Ներսէս քահանային՝ համարելով վերջինիս որպէս թելագրոգ իր աղգական մի երիտասարդի, երէցփոխ ն. Սուբաշեանին ծեծելու, որպէս թէ ծխին հաշիւ չ'տալու համար, վկայում ենք, որ երիտասարդի ընդհարումը երէցփոխ ն. Սուբաշեանի հետ, ունի անձնական բնաւորութիւն և չունի ոչ մի կապ ծխականներին հաշիւ չ'ներկայացնելու խնդրի հետ. հետևապէս՝ առաջնորդի տուղարկութիւնը՝ ենթադրութիւնը՝ և մի վճիռ է, որ զնուրկ է կանոնաւոր և բարեխիղճ քննութիւնից։ Մենք բողոքում ենք այդ վճուի դէմ՝ և վերականգնելով ծխատիրոջ պատիւը՝ այսօրւանից իսկ տալիս ենք բողոք Ա. Էջմիածնի Սինոդին վերաքննելու առաջնորդի վճիռը։

Երկրորդ՝ նոյն թեմական առաջասորդի նոյն թիւ առաջադրութեան այն կէտը՝, որով գարծեալ քահանան մեղաւոր է ձանաշւել որպէս մեղաւից Սիմֆերոպոլի արդէն «յայտնի» կոպչէկճեան աւագ քահանային վիրաւորելու գործում, դա ակնյայնի

զրաբարառութիւն է և առաջնորդ եղիսկոպոսի ենթադրութեան վճիռ։ Բողոքում ենք այդ զրաբարառութեան վէմ։

Երրորդ՝ Երէցփոխ Ն. Սուբաշեանին, որը իր յամառ բնաւորութեամբ առ ոչինչ համարեց ծխականներիս պահանջը ծխին հաշիւ տալու այն գէպքում, երբ ծխի ներկայացուցիչները՝ հաշւեաները՝ բարձի թողի էին արել իրանց բարոյական պարագը՝ և Թէօդօսիայի հինաւուը եկեղեցիները՝ Ա. Սարգիս և Ս. Գէորգի արդէն քայլքայման և անբարեզարդ վիճակին էին մատնել և նոյնպէս էլ դպրոցը՝ երէցփոխ Սուբաշեան ոչ միայն ուշագրութիւն չէր դարձնում քայլքայման առաջն առնելու, այն նոյն իսկ հակուակւեց ծխականներիս հաշիւ տալու իր մօտի գումարի՝ պատճառաբանելով, որ ինքը պարտական է տարփայ վերջին հաշիւ տալու ծխին։ Ուստի՝ Սուբաշեանին ճանաչել անարժան ծխիս յարգանքը վայելելու արժանի՝ այսօրվանից տալ վերջնական բողոք՝ հեռացնելու Սուբաշեանին երէցփոխութեան պաշտօնից։

Չորրորդ. Քուղաքիս «բուրժուա» հայ գաստկորդը՝ որի համար մեր ծխատէր Ներսէս քահանան հաւճելի չէ իր պահանջող և շիտակ բնաւորութեամբ՝ և այդ աղաներն են, որ դիմում են ամեն «յայտնի» և «գաղտնի» միջոցների հեռացնելու Տէր Ներսէսին։

Այսօրւանից բաժանւում ենք այդ «աղա» գաստկարդից կազմելով առանձին ծխարաժին, բաժանելով չորս եկեղեցիները հաւասարապէս իրանց կայքերով։

Հինգերորդ՝ որովհետեւ Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Հայոց թեմակալ առաջնորդ Խուդավէրտեան Ներսէս, յունվարի 17-ին Տաւրիկեան պ. Նահանգապետի միջոցով ուղում էր հեռացնել քաղաքից մեր ծխատէր Ներսէս քահանային՝ համարելով վերջինին, որպէս մեր հասարակական հանգատութիւնը վրդուողի՝ (յունվարի 17-ին) մենք այսու բողոքում ենք, որ դա զրաբարառութիւն է։ Եւ որպէս թէ ծխա-

տէր Ներսէս քահանան հակառակւել է վեհափառի հրամանին և Էջմիածին գնալու, դա ևս զրպարտութիւն է, որովհետեւ երբ հեռագիր ստացւեց, որ Ներսէս քահանան գնայ Էջմիածին, նաև հ. Հերթեցեան № 1 յայտարարութեամբ խնդրեց առաջնորդից «ստուբեամբ» Կովկաս մտնելու և ապա երթևեկութեան և թէ ճանապարհածախքի հրամանը գրված է ամսոյս 16-ին. և նա հստաւ տեղս՝ ամսիս 20-ին. բայց ինչից գրգռած, և ինչ հիման վերայ առաջնորդը ամսիս 17-ին պ. նահանգապետից հեռագրով խնդրում է, որ իր Ներսէս քահանան ժողովրդի հանգստութիւնը խանգարող է և ս. Էջմիածին չը գնացող հակառակ բարձր իշխանութեան հրամանի, ուստի նրան (հ. Հերթեցեանին) ոստիկանութեամբ ուղարկել էջմիածին, այս մեզ զարմանք և մեծ ցաւ պատճառեց թէ իր խորդութեան տեսակէաից և թէ անխղճութեան. նամանաւանդ, որ հ. Հերթեցեան ամսոյս 15-ից բացակայում էր Թէօգոսիայից:

Վճիռ:

Վեցերորդ. Տարախչեան Մկրտիչ ուսուցչին համարել բոլորովին արձակւած իր թէ անընդունակութեան կողմից, որ նա փոխանակ դաստիարակելու մատադ ուսանողներին, ընդհակառակը՝ փշացրել է նրանց «ծեծել» և թէ հասարակութեանս մէջ բռնւեց որպէս խօսք «տանող-բերող»:

(95 ստորագրութիւններ):

Առաջնորդից առանձին՝ մինոյն ժամանակ, աղաները ևս կամենալով վարկաբեկ անել հ. Հերթեցեանին օտարների աչքում, որոց կարծիքը (ուսների, գերմանացիների, լեհերի, թաթարների, կարտիֆների և հրէաների) աւելի նպաստաւոր է եղել տէր հօր համար, «վարձում են» մի ինչ որ անօնիմ թղթակցի Թէօգոսիայում և սա միշտ աննպաստ լուրեր է հաղորդել «Կրымскій Вѣстникъ» թերթին: Նոյն ծխականները բողոքում են նաև այդ «բուրժուա» թերթում մի առ մի թւելով նպաստակաւոր զրպար-

տութիւնները, վերականգնում են հ. Ներսէսի անունը:

Վերջապէս հ. Հերթեցեան փետրվարի 20-ին՝ հասնում է Էջմիածին և նոյն ամսի 28-ին ներկայանում Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին: Եւ ահա թէ ինչ է գրում հ. Ներսէս «Մշակի» № 61-րդում իւր ներկայանալու մասին:

...«Փետրվարի 28-ին՝ երբ պատիւ ունեցայ Վեհափառ Հայրապետին ներկայանալու, Վեհի առաջին հարցը եղաւ այս:

— Ինչո՞ւ էք եկած:

— Զերդ Սրբութիւնն է բարեհաճել հեռագրով ինձ կոչել, ուստի եկած եմ լսելու Վեհիս կամքը:

— Ես ձեզի կանչած չեմ և ինչո՞ւ պիտի կանչէի. կերեկի աղոնք են կանչել. և հայեացը նետեց Հայրապետը՝ դէպի դիւանի գրան...:

Բայց երբ խօսք խնդրեցի շարունակելու ասելիքս, ծերունազարդ Ա. Հայրապետը արդէն վրդոված էր ներքին բուռն յուզմամբ, ուստի թիկն գալով բարձերին, լուռթեամբ մեկնեց ինձ իր աջը՝ և ես շտապեցի համբուրելու արդէն ցամաքած օծեալ հայրապետական աջը՝ գուրս եկայ դէպի դիւանատուն: Դիւանապետին ցոյց տալով վերոյիշեալ հեռագիրը՝ խընդրեցի գիտնալ թէ Դիւանից է անցել այս հեռագիրը, բայց հայր Դիւանապետի խօսքը քարտուղարի ներկայութեամբ եղաւ այս, «Դիւանից՝ Վեհի կողմից այդպիսի հեռագիր արւած չէ Բեսսարաբիայի առաջնորդին»:

Այս կեղծիքի դէմ բողոքեցի Սինօդին. բայց տեսնենք գաղտնիքը ո՞րի վէշերի ներքոյ պիտի երևան գայ:

Ներսէս քահանայ Հերթեցեան» Մարտի 15. 1906թ.

«Մշակի» 67-րդ համարում, Յուսիկ վարդապետ Զոհրաբեան՝ (Նահապետեանին ստորագրութիւն տւող ծառաներից մինը՝) որ այդ ժամանակ Դիւանապետն էր, շտապում է իւր խոստովանած ճշմարտութիւնը

մի կերպ ծածկել, բայց շատ անշնորհք լինելով «խաբեբայութեան կոսովը» դարձեալ դուրս է մնում: Յիշեալ վարդապետը հեռազրում է այսպէս, «Էջմիածին՝ մարտի 27.

*Հեռագրով:*

«Ներսէս քահանայ Հերթեցեանցի նամակի առիթով, որ զետեղւած էր «Մշակի» № 61-ի մէջ, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի դիւանապունը յայտարարում է, որ Ներսէս քահանան էջմիածին էր կանչւած Նորին Վեհափառութեան սեփիական ստորագրութիւն կրող հեռագրով, Կաթողիկոսական կընքով Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմական առաջնորդի անունով, վերջինի հեռագրական լինդիրը ով և յայտարարութեամբ:

*Դիւանապետ՝ Յուսիկ վարդապետ»:*

Մատաղ Յուսիկ վարդապետի հեռագիրը պարզում է և այն, որ Հերթեցեան կոչւած է Եղել միայն և ոչ թէ արձակւած Թէօդօսիայի քահանայութիւնից: Բայց թէ ով է գրել Հերթեցեանցին էջմիածին կոչելու հեռագիրը՝ կարծեմ ոչ թէ մի «մատաղ» Յուսիկ՝ այլ նոյն իսկ 10 հասակ այլ և այլ Յուսիկներ չեն կարող ուրանալ, որ յիշեալ հեռագիրը Տփիսխում գրել է ոչ թէ դիւանապետ Յուսիկ, այլ «սրբազնագործ» Նահապետ Եպիսկոպոսը որի պատճէնը կայ և Հերթեցեանի մօտ և զիրը Նահապետ Եպիսկոպոսին է: Զենք զարմանում, որ Նահապետեանի զրած հեռագրի վրայ ձեռք կարող է դրած լինել և զառամեալ Կաթողիկոսը՝ և կնիքն էլ խփած կ'լինի պ. Խորէնը: Այլ մենք զարմանում ենք, որ Նահապետեանի պաշտպան Յուսիկ վարդապետը՝ չի ուրանում Վեհափառի ասած խօսքերը Հերթեցեան քահանային՝ թէ «Ես Զեղ չեմ կանչել, և ինչու պիտի կանչէի»:

Խնդիրը շատ պարզ է, որ Նահապետեան և ընկերութիւն խարեւայութեամբ կորցել էին և Հայրապետական կնիք, և ստորագրութիւն Հերթեցեան քա-

հանային տանելու էջմիածին: Տանելուց յետոյ յանկարծ անտէր արդարութիւնը մէջ տեղ է Եկել և նախանձախնդիր Եղել բնածին օձին: Վեհափառ Հայրապետը, բարձր ձայնով տաել է Եկած քահանային. «Ես Զեղի կանչած չեմ, և ինչու պիտի կանչէի»: Արդարեւ, Եթէ Վեհափառը կանչած լինէր, գոնէ մի նպատակ պիտի ունենար այդ կոչը. Կամ քննութիւն՝ և կամ վերջապէս պատիժ: Բայց որ ոչ քննութիւն է տեղի ունենում և ոչ պատիժ, ոս արդարացնում է ծերունազարդ Հայրապետի խօսքերը՝ «Թէ ինչու պիտի կանչէի»: Ասում եմ, Դիւանի կամմարիլայի անբաղդութիւնը նրանումն է լինում, որ Նահապետեան էջմիածնում չի լինում և հետեապէս անփորձ և անուշագիր ձագուկները պատճառ դարձան մի «յայտնի» խստակեաց Սրբազնի խայտառակւելուն...»:

Ափսոն քեզ էջմիածին, ափսոն քեզ հայ ժողովրդի հոգեկան ամենաբռուն՝ և ամենավեհն ու նւիրական զգացմունքների տաճար, որ քո շուրջը՝ մարդասպանութիւնը կատարում է աղօթքով և նւիրական զգեստների կամ փէշերի ներքոյ և խարեւայութեամբ, և կեղծաւորութեամբ, և ստորութեամբ:

Ինչպէս օգտւել են զրանից հոգեկան անկեալները և լոյս աշխարհում ասլրելու անընդունակները, որոնք բացի սև նախանձից աւելի ոչինչ չեն ամբարել բաժանելու հայ ժողովրդին:

Ներսէս քահանայ Հերթեցեան Վեհափառի յատուկ ցանկութեամբ և Դիւանից արւած ուռւ լեզւով վկայականով անմիջապէս վերադառնում է Թէօդօսիա՝ քահանայագործելու: Այնունետեւ Նահապետեան Տըփիսից վազում է էջմիածին՝ բայց բանը բանից անց է կեցած լինում: Դիւանապետ Յուսիկ Վարդապետի հեռագրական նամակը դարձեալ գրում է և. Հերթեցեան առանձին գրութեամբ. տես «Մշակ» № 78, և երբ Դիւանապետը փորձում է դարձեալ Կաթողիկոսութիւն անել, խիստ յանդիմանւելով Վեհափառից՝ դառնում է ոռւս բանաստեղծ Պուշկինի «ոսկէ ձկնիկ»

հէքեաթի ծովերի թագումի և հրամայող «մազալու» պառաւը՝ և արտաքսւելով Դիւնապետութիւնից, նըստում է դարձեալ իւր վանականների դասը՝ ուր կատուներ և աղուաներ զարդ են կազմում «սեերի» շրջանում:

Հ. Հերթեցեանի վերադարձից յետոյ՝ անցնում է ստութեան և խարդախութեան շրջանը և վրայ է հասնում «անարդար քննութեան» և «մատնութեան մեծ շրջանը»:

### Է. ԳԼՈՒԽ.

(բովանդակութիւն).

Հ. Հերթեցեանի թէօդօսիա վերադարձը: Աղաների դիմումը գեն. նահանգապետին: Ոստիկանապետ Պոպօվը և հ. Հերթեցեանի վերադարձի հաւաստիտագիր պահանջելը: Աղաների յուղւած դրութիւնը: Մազիրեան Ներսէս հայ ազգանունով գեներալի քութիւնները: Բենիկլվի թէօդօսիա մտնելը և ներկայանալը գեն. նահանգապետին: Շտապսկի-կապիտան Մ. Բաղդասարեան յանդիմանում է Բենիկին չարախօսութեան համար: Բենիկի հեռանալը թէօդօսիայից: Առաջնորդի № 1313 հեռագիրը յանուն հ. Հերթեցեանի և առանձին գրութիւնը գեն. նահանգապետին: Գեն. նահանգապետի դիմումը Սինօդ: Հ. Հերթեցեանի աքսորւելը ն. Նախիջեանի Ս. Խաչ: Սինօդի անդամ Բաբէն վի քննիչ նշանակւելը՝ Սառիկեան քահանայի փոխարէն: 90 հոգի ժողովրդի հեռագրով բողոքը առաջնորդի վէմ. «Մշակ» № 85. Տ. Բատամեանի նամակը. «Մշակ» № 100. Յովհաննէս քահ. Աբրահամեանի նամակը:

\* \*

Մարտի 20-ին, Ամենայն Հայոց Կաթուղիկոսի թոյլտութեամբ էջմիածնից վերադառնում է հ. Հերթեցեան թէօդօսիա՝ շարունակելու իւր պաշտօնը: Աղաների կատաղութեան ոչ չափ է լինում և ոչ սահ-

ման Եւ իսկոյն դոքա դիմում են գեն. նահանգապետին յայտնելով, որ Հերթեցեան քահանան արդէն վերադարձել է և առանց թոյլտութեան հոգեոր բարձրը իշխանութեան հրամանի: Հ. Հերթեցեանի մօտ իսկոյն յայտնում է ոստիկանապետ Պոպօվ և ի միջի այլոց խնդրում է վիտնալ թէ հ. Հերթեցեան ունի վերադարձի թոյլտութիւն: Տէր Ներսէսը ցոյց է տալիս Վեհափառի Դիւնաի հաւաստիագիրը՝ (ստութեանի որից երեսում է, որ հ. Հերթեցեան վերադարձել է քահանայագործելու Կաթուղիկոսի հաճութեամբ: Ոստիկանապետը ներողութիւն խնդրելով այդ անախործ վարմունքի համար, հեռանում է: Բայց չարագործ աղաները ալէկոծ դրութեան ներքոյ՝ դարձեալ հնար են վնասում հ. Հերթեցեանին հեռացնելու թէօդօսիայից: Ուստի և պաշտօնաթող մի ինչ որ գեներալ մայեօթ Մազիրեան Ներսէս հայ ազգանունով սկսում է զանազան տեսակ սառը քսութիւններով փոխել ժամ: գեն. նահանգապետի ամենափոքր նպաստաւոր կարծիքները հ. Հերթեցեանի նկատմամբ՝ համարելով քահանային «աւազակապետ», «տերօրիստներ» պահող՝ և պետական բոլոր կարգերին հակառակուղ: Նոյն բանը կրկնած է լինում «տիրահոչակ» Բենիկ վը, որ այդ ժոմանակ թէօդօսիայում ժամանակաւորպէս ժամ է ասելիս եղել: Վարդապետի այդ «տգեղ» վարմունքը նկատել է գեն. նահանգապետի «ատիւտանդ» շտապսկի-կապիտան Մ. Բաղդասարեան, որի առթիւ և բաւականին լուրջ վէճ է տեղի ունեցել: Հ. Հերթեցեանի թէօդօսիա մտնելուց երկու օր յետոյ Բենիկը չըանում է. Բայց Բենիկի կէսը կամ աւելի ճիշտ «մեծ-կտորը» այն է առաջնորդ Ներսէս Խուղավերդեան, մոռանալով Ամենայն Հայոց քահանայապետի բարձր իշխանութիւնը, ոտքի տակ տալով արդէն ժողովրդի ձայնը ու բողոքը, ուստի անմիջապէս հետեւեալ հեռագիրն է ուղղում հ. Հերթեցեանին:

«Изъ Кишинева № 1313. 1906 г. Θεοδοσιю.

Священнику Нерсесу Эртевціану.

Предписываю, немедленно удалиться изъ Вы-  
сочайше вѣренной мнѣ епархіи.

Архіепископъ Нерсесъ».

(θωρακίσμαντιθիւն):

«Բիշնկից № 1313, 1906թ. ի Թէօդոսիա:

Ներսէս քահանայ Հերթեցեանին:

Առաջարում եմ անմիջապէս հեռանալ Բարձրա-  
դոյնս ինձ յանձնւած թեմից:

Սրբեպիսկոպոս ներսէս»:

Միևնույն ժամանակ, յիշեալ հայ արքեպիսկոպոսը  
հեռագրով դիմում է Թէօդոսիայի գեներալ նահան-  
գապետին՝ բացադրելով պետական օրինաց միտքը,  
որ ինքը լինելով Բեսսարաբիայի հայոց առաջնորդը  
և հաստատւած լինելով Բարձրագոյն համութեամբ,  
գտնում է վերադառնող Հերթեցեան քահանային  
«անբարեյոյս» և վասակար «բարեմիտ» հայ ծխա-  
կանների նկատմամբ, խնդրում է օրինական միջոց-  
ներ ձեռք առնելու վերջնականապէս արտաքսելու  
Թէօդոսիայից Հերթեցեանին, գտնելով նաև քահանայի  
վերադառնութիւն հակառակ: Գեներալ նա-  
հանգապետը անմիջապէս դիմում է կջմիածնի Սի-  
նոդ և խնդրում շուտափոյթ հեռացնել Թէօդոսիայից  
Հերթեցեան քահանային, որպէս «անբարեյոյս» և զըր-  
դուիչ» մարդու: Սինօդը պատասխանում է, որ Հեր-  
թեցեան քահանան վերադարձած լինելով կաթուղի-  
կոսի կամքով, ուստի պէտք է դիմել անձամբ կա-  
թուղիկոսին: Գեներալ նահանգապետը այս անգամ  
դիմում է Երեանի նահանգապետին, խնդրելով, որ  
վերջնս անձամբ համոզէ վեհափառ կաթուղիկոսին,  
Հերթեցեանին յետ կանչելու: Երեանի նահանգապետը  
դիմում է Սինօդի Պրօկուրոր Ֆրենգելին, որի շնոր-  
հիւ Սինօդը որոշում է Տէր ներսէսին մեկուսացնել  
նոր-նախիջևանի Ս. Խաչ վանքը ցառանձին կարգ-  
դրութիւն:

Հ. Հերթեցեանի կջմիածնում եղած միջոցին,  
Թէօդոսիայի ծխականների և ծխատէր քահանայի բո-  
ղոքը քննելու համար, Սինօդի օրագրական կարգով  
որոշում է քննիչ և նոյն իսկ կարգում, Վաղիկաւ-  
կազի քահանայ Յակովը Սառիկեան. և նոյն իսկ Սի-  
նօդը՝ ուղարկած է լինում բողոքները Աստրախանի  
Կոնսիստորիային՝ յանձնելու հ. Սառիկեանին. բայց  
եպիսկոպոս Նահապետեան, շատ լաւ վիացած է եղել,  
որ իւր «հոգեւոր ծնող» ներսէս եպիսկոպոսը պիտի  
մերկանայ իւր խայտառակ գործերում և նահապե-  
տեանի երեսն էլ պիտի «սպիտակի» ուստի շտապում  
է կաթուղիկոսի մօտ, մի կերպ համոզում է Վեհա-  
փառին և հ. Սառիկեանի փոխարէն՝ նշանակել է տա-  
լիս քննիչ, Սինօդի անդամ Բաբգէն վարդապետ Աղա-  
մելեանին, որը թէ իւր վարդապետական կոչումն՝ և  
թէ Սինօդի անդամութեան պատիւն ունենալու խըն-  
դիրներում՝ հոգով պարտական է նահապետեանին:

Հայր ներսէս ստանալով Սինօդի որոշումը, (հե-  
ռագրով իսկ) շտապելիս է եղել մեկնելու Ս. Խաչ:  
Այդ միջոցներում և գալիս է քննիչ Բաբգէն վարդա-  
պետը: Հայր ներսէսի ծխականների մէջ սկսում է  
մի խորին վրդովմունք և անվերջ ատելութիւն դէպի  
«տարօրինակ» առաջնորդը: Ուստի դարձեալ ծխա-  
կան ժողով, և այս անգամ մի մէծ և բառերի առա-  
տութեամբ հեռագրական բողոք են տալիս «Մշակ» և  
«Ալիք» լրագրերին: «Ալիք», որի խմբագրական կազ-  
մը ինչպէս երկում է «խնամի-խնամի» խաղերի հետ  
է լինում, արժան չի համարում իւր «ազգայնական»  
էջերում տեղ տալ աշխատաւոր ժողովրդի բուռն զայ-  
րոյթին և բողոքին, որովհետեւ այդ բանւորներից  
նրանց օգուտի աղբիւր չի եղել: Միայն «Մշակ» լրա-  
գիրը լսում է բողոքող ժողովրդի ձայնը՝ և իւր  
№ 85-րդում տպագրում է 90 տուն ծխականների  
բողոքը, որ նոյնութեամբ արտագրում ենք:

«Թէօդոսիայից 20 ապրիլի՝ թւով մեզ հեռա-  
գրում են,

«Տեղեկութիւն» «Մշակի» խմբագրութեան:

«Բեսսարաբիայի թեմական առաջնորդ Ներսէսը, յունվարի 1-ին տաւրիկեան նահանգապետի միջոցով հեռացրեց մեր ծխական քահանայ Ներսէսին իր պաշտօնավարութիւնից, զրկելով մեզ հոգեոր մխիթարութիւնից:

Եկեղեցին փակւել է. ժամերգութիւնը դադարել. և մենք մեր երեսաներով հանդերձ զրկւած ենք հաղորդութիւն ընդունելուց:

Այդ ժամանակ մեռած մի աղքատ պառաւ կին թաղվեց առանց քահանայի: Բողոքեցինք 36 անդամ, հեռազբեցինք Կաթուղիկոսին, Սինոդին և Պրօկուրորին՝ բացադրելով մեր դրութիւնը: Մարտի 20-ին հազիւ այստեղ եկաւ Սինոդի թոյլտութեամբ հայր Ներսէս իր ծառայութիւնը շարունակելու, առաջնորդը երկրորդ անդամ պահանջեց հեռացնելու Ներսէս քահանային:

Այդ մասին՝ քահանան և մենք զեկուցինք Սինոդին: Եւ ահա այդ պատճառով՝ թեմական առաջնորդի զայրոյթը ամենա-ահեղ չափերի հասաւ:

Ապրիլի 9-ին, № 1313 հեռագրով առաջնորդը հրամայեց Տ. Ներսէսին անյապաղ հեռանալ Բարձրագոյն իր իրաւասութեան յանձնւած թեմից: Բողոքուղարկեցինք Սինոդին՝ Խուզավէրդեանի վրդովելի կամայականութեան դէմ: Քննութեան համար ուղարկւած է այստեղ Սառիկեան քահանայի փոխարէն՝ Բարգէն վարդապետը և այսօր առաջնորդի գրութեան հիման վերայ, ժամանակաւոր նահանգապետը յայտնեց Հերթեցեան քահանային, որ հեռանայ Թէօդօսիայից: Նորից բողոք ուղարկեցինք Սինոդ և թեմական առաջնորդի վարժունքը համարւած է հասարակութեանս իրաւունքների ուղղակի ոտնահարում, և արդարութեան ուրացումն անձնական կրքերի բաւականութեան համար:

Նորից փակւեց Եկեղեցին և թող փակւած էլ մնայ

մինչև որ մենք չլսենք նրա մէջ նոր արժանաւոր, Քրիստոնէական ոգով ներշնչւած, օգտակար թեմական առաջնորդի անւան յիշտակութիւնը՝ Խուզավէրդեանի փոխարէն:

Ստորագրել են 90 հոգի:

Թէօդօսիայի ժողովրդի բողոքը արձագանք գըտնելով աւելի կենսունակ քաղաքներից մէկում այն է Ռուսակում, պ. Տ. Բաստամեան՝ որը լաւ ճանաչելով Խուզավէրդեանին և իրաւացի կերպով զգւելով նորա արարմունքից գրում է հետևեալը: (Տես «Մշակ» № 100):

«Խոստով, ապրիլ 25.

«Մշակ» 85 համարում ի շաբս հայութեան կեանք սղոցող հեռագրերի և տեղեկութիւնների, կարգացի նաև Թէօդօսիա քաղաքի հայ ժողովրդի 90 ստորագրութիւն կրող հեռագրերը՝ ապրիլի 20-ից:

Հեռագիրը՝ սոսկալի իրողութիւններ է պատմում: Բեսսարաբիայի հայոց առաջնորդ Խուզավէրդեան արքեպիսկոպոս Ներսէս, Թէօդօսիայի հայ ժողովրդին հոգեպէս մխիթարէլու փոխարէն, ՚ի արիտուր ժողովրդի տուած բարութիւնների 1906 թ. առաջին ամսից մինչև այժմ, որքան վրդովւել է ժողովրդի հոգեկան ներքին կեանքը, որ ժողովուրդը այսօր զգւելով՝ զգում է յիշեալ եպիսկոպոսի անունը՝ լսել իր եկեղեցում:

Սա ցաւալի և շատ ցաւալի՝ երեսյթ է: Ես չեմ յիշում 50 տարւայ ընթացքում գոնէ մի առաջնորդի, որի անունը այս աստիճան զգւելի դառնար ժողովրդի համար: Խուզավէրդեան արքեպիսկոպոս Ներսէս, ինչպէս հանգուցեալ Բաստամեան վարդապետն է բնորշել նրա էութիւնը՝ և որքան ես ինքս եմ ճանաչում, մի ողորմելի տգէտ մարդ է:

Մենք միշտ փայլել ենք այդ արտաքոյ կարգի տղէտներով. բայց այդ տղիտութիւնը՝ սոսկալի չարիքների դուռ չէր բացել այնպէս, ինչպէս այսօր Թէ-

**օգոսիայում:** Զորս ամիս շաբունակ վակել եկեղեցիները, ժողովուրդը մեծ ու փոքր զրկել սրբութիւնից, մեռածները թաղել առանց քահանայի, քահանային աքսորել երկիցս ոստիկանութեան և զինւորական իշխանութեան ձեռքով, սա ինչ սոսկալի՝ և խայտառակ առաջնորդութիւն է?

Եւ այս բոլորը ինչու համար:

**Միմիայն յագեցնելու վարդապետ սևագլուխ և սևակիրտ մարդու բարկութեան ծարաւը!**

Ի՞նչպէս մի ծիատէր քահանայ համարձակւում է քննական աչքով նայել իր առաջնորդի սխալ արարմունքներին:

**Առաջնորդը առւեց մի հրաման՝ սխալ թէ ուղիղ՝ քահանան իրեւ ստորագրեալ, պէտք է հպատակի այդ հրամանին. ապա թէ ոչ՝ Բարձրագոյն իշխանութեան հրամանով և ճիպոտով՝ դժւրս թեմից:**

Եւ այսօր՝ Բեսսարաբիայի առաջնորդ Ներսէս, այդպիսի մի ճիպոտով վանել է Թէօգոսիայի հայոց քահանայ Ներսէս Հերթեցեանին, որը առաջնորդի սխալ արարմունքների մասին օրինական բողոք է ներկայացրել Սինոդին: Առաջնորդի կատաղութեան սահմանը կորել է էլ ոչ Սինոդ, ոչ էջմիածին՝ և ոչ էլ ժողովուրդ է ճանաչում Խուզավէրդեան Առաջնորդը:

Ես նւաստո, քաջ ծանօթ լինելով Խուզավէրդեանի բարոյական կեանքին և նրա առաջնորդական օգտակարութեան գործին՝ միացնում եմ իմ կատարեալ դժոնութիւնը Թէօգոսիայի հայ ժողովրդի իրաւացի դժոնութեան, յայտնում եմ անծայր զգւանք առաջնորդի այդ խայտառակ իշաղին:

**Տ. Բաստամեան»:**

Հրապարակական այդ դատավետումներից առանձին, և Ներսէս ստացած է լինում տամնեակ միիթարական և յուսագիր նամակներ՝ բացի հայ զրագէտներից՝ նաև Թէօգոսիայի և Կերչի ըրջանի ժողովրդական դպրոցների վերատեսուչ պ. Սимեօն Իլյակ Մարկովից և Սիմֆերոպոլի յայտնի իրաւաբան

և հրապարակախօս Լենոնիդ Յակովլևիչ Այզենշտեյնից, որոնցից թոյլառութիւն չունենալուս պատճառով չեմ կարող հրատարակել նոցա նամակները: Բայց ամենից հետաքրքիր և առանձին ուշագրութեան արժանի գրութիւն է Բեսսարաբիայի վիճակի հնչեցարդաքի Տէր Յովհաննէս քահանայ Աբրահամեանի (բարձրագոյն կուրսերում լսած) հետեւեալ նամակը ուղղած և Հերթեցեանին:

1906, Ապրիլի 23, Հնչեցարդաբիայ:

«Սիրելի և Յարգելի տէր ներսէս!

«Զգիտեմ ինչպէս կամ ինչով յայտնեմ իմ հիացմունքը քո եղակի քաջութեանդ համար առաջնորդի և ընկերութեան տգեղ՝ և ստոր արարքների վերաբերմքը: Այժմ անչափ հետաքրքրական է քահանայ Առուիկեանի քննութեան արդիւնքը և զրա հետեւանքը: Արդեօք կազմաւենք քո ջանքերի շնորհիւ այս նեխւած վարչութիւնից: Վանքապատկան կարածի (Հայկական ըրջապատը Քիշնեի) զործը, որ նոյնակ պէտք էր հրապարակ հանել, մնաց մոռացւած մինչև օրս: Հայ ընկերութեանը մերժեցին տալ կապալով (տարեկան 24,000 լ. վարձով), բայց տվեցին հրէսներին, որոց ներկայացուցիչը 12,000 ըուբլու... ներկայացրեց առաջնորդին ու կոնսիստորիային՝ և վերցրեց կապալը նոյն 24,000-ով: Հայերը շատ դժգոհ են այդ օրից սկսած թէ առաջնորդի, թէ քարտուղարի և թէ վարիչ անդամների դէմ, վերջիններից որոնցից մինը գեկտեմբերին (1905 թ.) անձամբ ինձ հետեւալն էր ասում քո մասին. «այդպիսի աւազակ, բունդովշիկ քահանայի... կ'տեսնես, ինչպէս դուրս կ'քշենք մեր քահանայի... կ'տեսնես, ինչպէս դուրս կ'քշենք մեր թեմից. արդէն սրբազնը վճռել է այդ...: Բայց խոփը բարին առաւ: Երանի թէ աղատւէինք քո շնորհիւ այս 4 վարիչներից: Արդեօք կ'տեսնենք այդ ցանկալի օրը: Ողջոյններ տանեցողը: Անկեղծ յարգանօք՝ Յով. քահ. Աբրահամեան:

Յ. Գ. վերջապէս մեր ժողովրդի տէրը բացւում է»:

Հ. Գլուհի.

(բովանդակութիւն).

Քննիչ Բարգէն վ.ի Թէօդօսիա համնելը՝ Ժողովրդի տածած յոյսը: Սիմ. Չորայեանի խօսքերը քննիչին ներկայանալիս: Բարգէնի խորամանկ վարմութը: Սուբաշեանի գործի տևումը շաբաթ: Քննիչի քէֆը հ.-Ղրիմում: Հ. Հերթեցեանի որդու հիւանդութիւնը: Ժողովրդի խնդիրը՝ յետ կոչելու հ. Հերթեցեանին քննութեան: Բարգէնի մերժումը, խարելով իբր թէ՝ Սինօդից իրաւունք չ'կայ: Հ. Հերթեցեանի գիմումը Սինօդ՝ և Մ. վարդապետի պատասխանը: Հայր Հերթեցեանի որդու հիւանդութեան վտանգաւոր բնաւորութիւնը: Տէր Ներսէսի ճանապարհելը Ս. Խաչից դէպի Թէօդօսիա: Հ. Ներսէս գտնում է մեռած իւր որդուն: Բացւում է քննիչ Բարգէն վարդապետի եղեռնազործութիւնը՝ բժշկի № 35-րդ վկայագրից յետոյ: Հ. Ներսէսի որդու թաղումը: Ժողովրդի բողոքը՝ այդ մարդասապանութեան դէմ—«Մշակ» № 119: Բարգէն աշխատում է արդարանալ: Բացւում է քննիչի կեղծութիւնը և խարեւայսութիւնը՝ գեներալ նահանգապետին գրած թղթից յետոյ:

Ապրիլի 22-ին հ. Հերթեցեան գնացած է լինում Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանք, իսկ քննիչ Բարգէն վարդապետը՝ արդէն Թէօդօսիայումն է լինում:

Տանջւած ծխականները՝ մեծ ու փոքր շրջապատում են հոգևոր քննիչին, յուսալով որ այդ հոգևորուկանը՝ գոնէ իբրև Սինօդի անդամ պիտի կարենայ արդարութեամբ քննելու իւրեանց բողոքը՝ անձնատուր չ'լինելով այս կամ այն աղայի քմահաճոյքին: Սակայն տեսնելով վարդապետի գոյնը, փորձւած մարդիկ իսկոյն գուշակում են, որ քննիչ վարդապետը շուտով խաղալիք պիտ գանայ աղաների ձեռքին և նոցա գրպաններին երիցս անգամ համբոյր տալով, պիտի աւելի խճճէ գործը՝ և փախչի: Պւտափ

և ծխականներից մինը՝ մի բաւականին ազատախօս երիտասարդ, լուսանկար պ. Ս. Չորայեան, վարդապետին ներկայանալու «Եւրոպա» հիւրանոցում, բազմութեան ներկայութեամբ ասում է հետեւեալը: «Հայր սուրբ, թոյլ տւէք յայտնելու Ձեզ, որ մեզ մօտ որքան հոգեւորական քննիչներ են եկել թէ մօտերքու թէ առաջներում, այս տանջւած ժողովրդի բողոքը ները լսելու «աղաների» հարստահարութեանց դէմ, դարձեալ մենք աշխատաւորներս ենք տուժել, որովհեակ քննիչների սիրով չենք կարողացել շահել: Իսկ ամեն ինչ տակն ու վրայ անող «աղաները» մնացել են սուրբ և մաքուր: Ես լաւ ճանաչելով մեր աղաներին, նրանց հնարազիտութիւնը, համոզւած եմ, որ պիտի տուժենք, մեր բերանը արդէն այրւել է նոցա եփած կերակրից...»:

Սրա հանդէպ՝ վարդապետը կեղծ ու պատիր ձեւերով պատասխանում է, որ իւր համար՝ «հարուստ» և «աղքատ» չ'կայ. բոլորեքեան էլ մի են՝ և նա եկել է արդար քննութեամբ վերականգնելու արդարութիւնը: Աղքատները բաւականին ուրախացած են լինում սրանից՝ իսկ «աղաները» ըստ սովորականի «ուռել են» և թթու երես են ցոյց տուել քննիչն: Նոյն իսկ գեներալ Մագիստրուս և միջին դասակարգի կողմը անձանց նախկին երեցփոխ Կ. Արութեանը՝ բաւականին բարձր տօնով և վիրաւորական խօսքերով միմեանց ներկել են այդ ժամին: Սակայն ժողովրդի յոյսը և սպասելիքը շատ կարճ ժամանակում գոլորշիանում է, քննիչ վարդապետը արդէն «աղաների» կարգով սեղաններից յագեցած, յետ է զնում, իջեցնում է իւր երեսի գիմակը, որը «խրատական սաղմոսներով» հազցրել էր Բարգէնի երեսին հայոց ազգի ապագայ Կաթոլիկոսացու նահապետեան եպիսկոպոսը: Ուստի և Բարգէն վարդապետը գիմակաւորւած մտնում է Թէօդօսիա, սկսելով գործը բաւականին խորամանկութեամբ:

Սկսում է այցելել միջին դասակարգի աջքի ընկ-

նոր անձնաւորութեանց աները: Կորզում է նոցանից բաւականին գաղտնիքներ և նախազգուշացնելով աղաներին. քննութեան ժամերին խառն ու փնթոր հարցերով այնպէս է մոլորեցնում բողոքատու բանւորներին, որ վերջինները ուղղակի «արձան» են կտրւում: Այդ աջող ըստէներում քննիչը՝ աղաների ներկայութեամբ սկսում է յանդիմանութիւն կարդալ բանւորներին, զրկելով շատ տեղերում նոցա իւրեանց ասելիքը ապացուցանելու հնարաւորութիւնից:

Բողոքատու երէցփոխ Սուբաշեանի բողոքը որ արդէն մտած է եղել տեղական հաշտարար գատավորի իրաւասութեան ներքոյ, դառնում է Բաբդէն վարդապետի յատուկ ուշադրութեան խնդիրը: Ուստի, ուղիղ երկու շաբաթ այդ հոգեոր քննիչը սկսել է յոգնեցնել վկաներին տանելով և բերելով, որպէս զի կարենայ զիտնալ թէ Սուբաշեանին ծեծողը Գէորդ անունով երիտասարդն է եղել ծեծող իւր սեփհական համոզմունքով թէ Տ. Ներսէն է թելադրել: Եւ այդ անում է դեռ այն ժամանակ, երբ երիտասարդ Գէորդը՝ խաչի և աւետարանի մօտ երդմամբ ասում է քննիչին, որ ինքն է ծեծել Սուբաշեանին իւր ներքին անբաւականութեան պատճառով առանց սրա կամ նրա դրդմամբ կամ թելադրութեամբ:

Երկու շաբաթից յետոյ, քննիչ վարդապետը նշանակում է հանդիսատ: Երեք օր ժամանակով ընդհատելով գործը՝ վարդապետը գնում է Հին-Ղրիմ քէֆի...:

Եւ ահա այդ օրերում՝ լուրջ կերպով հիւանդանում է հ. Հերթեցեանի որդին:

Երբ վարդապետը քէֆից դառնում է Թէօդօսիա, ծխականները յայտնում են այս՝ խնդրում են յետ կոչել Տ. Ներսէսին Ս. Խաչից զալու թէ տեսնելու որդուն՝ և ապա սկսել քահանայի ներկայութեամբ քննութիւն:

Վարդապետ քննիչը յայտնում է բողոքատուներին, որ ինքը իրեր քննիչ, լիազօրութիւն չունի հ. Հերթեցեանին յետս կոչելու, դա Սինօդի գործն է:

Խեղճ բանւորները հաւատ են լնծայում վարդապետի խօսքերին, դարձեալ դիմում են Սինօդ, խնդրելով թոյլ տալ քահանային վերադառնալու Թէօդօսիա և քննութեան գործին մասնակցելու իբրև բողոքատու:

Սինօդից պատասխան չի ստացւում: Ժողովուրդը՝ յուսակտուր մնում է շւարած: Արդարադատութեան ճանապարհները բոլորովին փակւած է լինում խեղճ ժողովրդի առաջ, որովհետև Սինօդի տէր ու տնօրէնը լինում է ընթերցողին արդէն յայտնի ն. Նահապետեան, որ միենոյն ժամանակ և անդամ էր Սինօդի: Ժողովրդից առանձին, Ս. Խաչից՝ հ. Հերթեցեան և դիմում է Սինօդ՝ և խնդրում է հնարաւորութիւն՝ յանուն արդարութեան՝ երեք օր ժամանակով մտնելու Թէօդօսիա և վկաների ներկայութեամբ ապացուցանելու աղաների զրպարտութիւնները: Սինօդը արդէն յատուկ քննիչ ուղարկած լինելով, անդամ ևս յայտնում է հ. Հերթեցեանին, որ դա Քննիչը գործն է, ուստի և Սինօդի անդամ Տ. Մատթէոս Խաչիցի գործն է Սէր Ներսէսին. «Изъ Эчмиадзина № 84 въ Нахичевань н.д. священнику Эртевціану.

Обратись Θεοδοσιο σλέδωντα το χέρι σου στον Σινόδον της Αρχιμανδρίτη Ματθέων.

(Թաρգմանութիւն).

«Էջմիածնից № 84, Նախիջևան Դօնի վերայ:

Հերթեցեան քահանային:

Դիմիր Թէօդօսիա քննիչին:

Անդամ Սինօդի Մատթէոս վարդապետ»:

Բայց դարձեալ քննիչը պատասխան չ'տալով հայր Հերթեցեանի դիմումներին՝ չի կամենում նրան քննութեան կանչել: Այդպիսով, որքան աշխատել է քննիչը ծածկել իւր կեղծութիւնը և ստախօսութիւնը, բայց նա դարձեալ երեան է եկել և դեռ աւելի լաւ փաստերով, որ մենք կ'տեսնենք քիչ յետոյ՝ Քննիչի գրած պաշտօնական թղթում՝ յանուն Թէօդօսիայի գեն. նահանդապետի:

Հ. Հերթեցեանին՝ մինչև այդ ժամանակ, յայտնի չէ լինում որդու լուրջ հիւանդութեան լուրը: Բայց երբ մայիսի 17-ին որդու վիճակը վատանում է, սկզբում է հոգեվարքի շրջանը, հ. Հերթեցեանին նոր յայտնում են: Տէր Ներսէս իսկոյն դուրս է գալիս Ս. Խաչից և ճանապարհում Թէօդոսիա: Համելով Մայիսի 19-ին Թէօդոսիա, գտնում է որդուն արդէն մահացած: Այստեղ բացւում է մի սոսկալի եղեռնագործութիւն: Բարգէն վարդապետը, որին մի շաբաթ առաջ ցոյց են տւել մեռնող տղայի վիճակի ծանր դրութեան մասին բժշկի № 35 վկայագիրը, վարդապետը թողել է այն յայտնի նպատակով առանց ուշադրութեան՝ չէ կոչել ծնօղին տեսնելու իւր միակ որդուն վերջին ժամերում՝ չ'նայած որ ժողովրդից տասնեակ մարդիկ 5 անգամ աղաչել ու պաղատել են:

Մայիսի 20-ին՝ վաղամեռիկ Արտաշէս տղային պսակների մէջ դրած, Թէօդոսիայի հայ ժողովուրդը և ծովափնեայ բանւորները՝ զրկախան կերպով տանում են և յանձնում հողին: Շատերը ցանկացել են տղային թաղել Ս. Գէորգ եկեղեցու դրան, բայց հ. Ներսէսի պատէրով տղան թաղւում է գաղթական-ների շարքում, հողի աւելի կուսական բաժնում, ուր «Ճենձու և ճարպու» արիւնախում աղաների նախորդ աղաները չեն թաղւած:

Էջմիածնի այդ վարդապետի դժոխային վարմունքը՝ Թէօդոսիայի հայ հասարակութիւնը՝ յաւերժացրել է հետևեալ արձանագրութեամբ: Տես «Մշակ» № 119, 1906 թ. ուր՚ի միջի այլոց գրում են և հետևեալը: —

«Բարգէն վարդապետը՝ գիտակցաբար սպանեց մեր աքսորեալ քահանայի հրեշտականման Արտաշէս որդուն: Վարդապետի այդ հրէշային վարմունքը այնքան զգւեցրել է մեզ, որ նրա երեսն անգամ նայել չենք կարող»...

Ստորագրած են 103 ծխականներ:

Եւ սրա հանդէպ այդ իսկապէս թշւառ վարդա-

պետը կամ հերքելու և կամ լոելու փոխարէն, աշխատում է իրեն արդարացնել վարդապետի հոգեբանութեամբ այսպիսի խօսքերով «Միթէ հեղինակը (յօդւածի) չէ հասկանում, որ երեխայի հայրը բժիշկ (յօդւածի) չէ հասկանում, որ հիւանդին ազատէր...»: (Տես «Մշակ» № 137, 1906 թ.):

Դրանիվ քննիչ Բարգէնը՝ մի ուժգին թափով հսապացւցեց, որ իրօք ինքը իբրև վարդապետ արագիս բանական ստեղծւածրած, աւելի ստոր է կանգնած բանական ստեղծւածրած, մէջ, քան ինստինկտով (բնագրով) ապրող անասունները:

Որ Բարգէն վարդապետը՝ ուղղակի խաբելով խարել է Թէօդոսիայի հայ ժողովրդին, որ իբր ինքը, որպէս քննիչ լիազօր չէ հ. Հերթեցեանին քննելու Թէօդոսիայում և կամ Սինօդը նրան լիազօրութիւն չէ տուել այդ առթիւ, այդ խայտառակ վարմունքը ապացուցանելու համար, մենք բերում ենք այդ «անարժան» վարդապետի զրութիւնը, որով նա ինքը է զեներալ նահանգապետի թոյլաւութիւնը հ. Հերթեցեանին կատամամբ, որ մեր կարծիքով բոլորովին անտեղի մի խնդիր է այն: Սինօդի քննիչը կարող էր միտեղի մի խնդիր է այն: Սինօդի քննիչը կարող էր միտեղի տեղեկութիւն տալ գեն. նահանգապետին, որ ինքը կարեոր է գտնում՝ արդարութիւնը երևան հանելու համար, աքսորւած քահանայ Հերթեցեանին կոչելու համար, աքսորւած քահանայ Հերթեցեանին կոչելու համար, այսպիսի առաջարկութիւնը կամ կամ այսպէս թէ այսպէս նահանգապետը արգելվ հանդիպահը, քննիչը պարտական էր գիմելու ներքին գործոց նախարարութեան կաթուղիկոսի միջոցով, որից և նշանակել էր քննիչ: Այսպիսի օրինական կարգ և ճանապարհներ փակ է եղել և նոյն իսկ անմատչելի բարգէնի նման մի «ստախօս» և «խաբեբայի» համար: Բարգէնի նման մի «ստախօս» և «խաբեբայի» համար: Ուստի բացի անարդարութիւնից, բացի կեղծիքից և անտեղի խնդիրներից բարգէն ուրիշ բաներ կատարած չէ: Անա քննիչի գրութիւնը:

«Его Превосходительству  
Г-ну Теодосийскому Временному Генералъ Гу-

бернатору.

Въ качествѣ члена Эчміадзинскаго Армяно-Григоріанскаго Свят. Синода, на коего и возложено слѣдствіе по дѣлу о священникѣ Н. Эртевціанѣ, имѣю честь покорнѣйше просить Ваше Превосходительство разрѣшить названому священнику возвращеніемъ пребываніе въ Ѹеодосіи, какъ по болѣзни сына, такъ и полученія отъ него объясненія по обвинательнымъ пунктамъ.

Архимандритъ Бабкенъ.

19-го мая 1906 г. за № 7 Ѹеодосія.

(*Թարգմանութիւն*).

*Նորին Գերազանցութեան՝*

*Թէօդօսիայի ժամանակաւոր գեներալ պ. Նանդապետին:*

«Որպէս անդամ էջմիածնի հայ-Լուսաւորչական Սրբազն Սինօդի, որին և յանձնւած է Հերթեցեան քահանայի մասով եղած գործի քննութիւնը, պատրւուիմ խոնարհաբար խոդրելու Զերդ Գերազանցութեան թոյլ տալ յիշեալ քահանային վերադառնալու ու մալու թէօդօսիայում թէ որդու հիւանդութեան պատճառով՝ և թէ ստանալու նրանից բացադրութիւն՝ մեղադրական կէտերի համաձայն։

*Բարգէն վարդապետ:*

19 Մայիսի 1906 ամի թ. 7. Թէօդօսիա»։

՚Ի պատասխան յիշեալ խոդրի, գեն. նահանդապետը թոյլ է տալիս իւր № 104-րդ մայիսի 21-ի պաշտօնական գրութեամբ հ. Հերթեցեանին վերադառնալու, և հ. Հերթեցեան արդէն վերադրձած էր։

Ինձ թւում է, որ քննիչի վերոյիշեալ գրութիւնը որոշելով Բարգէն վ-ի իրաւասութիւնը, շատ գեղեցիկ կերպով բնորոշում է մեր շեշտած բացասական յատկութիւնները նոյն վարդապետի նկատմամբ, որով նա բոլորովին իզուր տեղը ահազին զրկանքներ է պատճառել բողոքատուներին, կրկնակի հեռագրերով Սինօդ դիմելու և ապա նպատակաւոր կերպով ու-

շացրել է իւր դիմումը նահանգապետին, չնայած, որ Շօր առաջ նրան խնդրած են եղել հ. Հերթեցեանի որդու լուրջ հիւանդութեան մասին և հօր վերադրձի։

Այս յայտնի կեղծիքից և անասնավայել արարմունքից յետոյ, տակաւին՝ այդ չնաշխարհիկ վարդապետը՝ շարունակելիս է լինում իւր խարդախութիւնը։ Օրինակ, նախ փախչելով հրապարակական քննութիւնից, քննիչը չէ տուել հ. Հերթեցեանին մեղադրական գործի բոլոր պատճենները, որպէս զի քահանան կարողացած լինի պարզելու այս կամ այն բողոքը իւր վկաների ցուցմունքով։

Թ. ԳլՈՒԽ.

(*բովանդակութիւն*).

Եալտայի հ. աղօթատան 500 ր. զգեստների խընդիրը և հոգաբարձութեան շնորհակալիքը հ. Հերթեցեանին։ Բարգէն Եալտայում։ Նորա կազմած արձանագրութիւնը և նշանակած գինը զգեստների վերաբերմամբ։

Երդւեալ վկայ կեցօ Եալլիեանի բողոքը՝ քննիչի կեղծ արձանագրութեան մասին։ Քննիչի կամայական մակագրութիւնը Եալլիեանի վկայութեան նկատմամբ։ Միջանվեալ խօսք։ Նահապետեանի հեռագիրը № 201։ Դժոխային կոնցերտի վերջին ակքորդը։

Բաւական չէ այն, որ հոգեոր քննիչ Բարգէն վարդապետ խոյս է տեղ հրապարակական քննութիւնից, թեարկելով աղաների յայտնի բանակին, այլ նաև նպատակաւ քննական զեղծումներ է գործել և խոտորնակի ճանապարհներով աշխատել է բարգել հ. Հերթեցեանի վերայ մեղադրանքներ։ Օրինակ այսպիսի մի խնդիր, 1905 թ. Սեպտեմբերի 16-ին, Եալտա քաղաքի հոգաբարձութիւնը՝ ստանում է հ. Հերթեցեանից իւր յանձնած 500 ըուբլիով պատրաստել տուածեկեղեցական զգեստը և չ'գտնելով այդ գործում դժոխութեան մի որևէ խնդիր, հոգաբարձութիւնը՝

իւր նախագահի միջոցով յայտնում է Տէր Ներսէսին շնորհակալութիւն իւր հոգատարութեան համար հետեւայ գրութեամբ:

Ψωμδέν:

(Պրոռթիւնը գրված է հոդ. Ստեփանեանի սուսերէն բլանկով թղթի վերայ). Ծանօթ. հեղին:

«Ялта 16 սեպտեմբերի 1905 ամիս»

## Персидскій и Кавказскій

## магазинъ

Н. С. Степанова

въ Япѣ

Набережная ул. д. Стаканова

Отдѣлѣніе въ Апупѣ

Воронцовская ул., против

ГОСТИНИЦЫ «Россия»

Արժանապահին, *St. Նեստոր պատրիարքի կողման*

Զեր սրբութեան առողջութիւնը հարցնելէն զկնի, դարձեալ ներողութիւն կը խնդրեմ ի սրբութենէ ձերմէ, որ այսքան ժամանակ Զեր Սրբութեան նամակ չ'գրեցինք Դուք պէտք է որ մեզ ներէք: Մեծ շնորհակալութիւնը կը մատուցանեմք Զեր սրբութեան այս զգեստների մասին և ահա պ. Գէորգից ստացանք հետեւալ զգեստները հաշվին հետ և մի լաւ օրինաւոր արկղի մէջ դրած:

10 հատ ճերմակ շատիկներ,

Հայտ մեծ լուր օգինսու ու շատելինեռ, (կարուսէ):

<sup>3</sup> Հապու շախ Պարսկա (մաստ տես 3 և 1 ու սատիկանական):

<sup>3</sup> հաստ մարզություն (ծառացածիք)։

<sup>2</sup> զուս բառանձն. (Տ. Ե. Բ.)

Միայն ճերմակ թանկապին շուրջառին մէկ զոյզ  
բազբանտ չ'կար. բայց կարելի է որ պ. Գէորգը մո-  
ռացել է տանը. և ահա 6 բուրլի ալ փող տուժնք պ.  
Գէորգին ճանապարհածախս և դրկեցինք եկաւ:

Մասմ յարդանօք խոնարհ եղբայր ձեր՝  
Յովիաննէս քահանայ Ղազարեանց:  
Աղօթատուն հայոց»:

Անցնում է դեպքից ուղիղ մի տարի, յիշեալ  
զգեստները դորձադրում են շարունակ՝ և հ. Ներսէս  
Հերթեցեան ոչ հոգաբարձութիւնից և ոչ երէցփոխից  
ստացած է լինում դժգոհութեան գիր։ Սակայն երբ  
զալիս է յիշեալ քննիչը, նկատելով որ մի որոշ զգա-  
լի բան չկարողացաւ բարդել հ. Հերթեցեանի վերայ,  
մտնում է Եալտա, տեսնում է աղօթատունը, հետա-  
քրքրում է հ. Ներսէսի կարել տուած զգեստներով,  
և այդ տեղ ևս սարքում է իրեն յատուկ մի դորձ,  
որից երբէք տեղեկութիւն անդամ չէ ունեցել հ. Հեր-  
թեցեան՝ մենակ իջմիածին գնալը։

Եւ ահա թէ ինչպիսի գործ։  
Մի տարւայ զործադրելի զգեստները՝ այդ «երանելի» վարդապետը սկսում է գնաճառութեան հանել հատ հատ, և արձանագրութիւն է կազմում՝ ստիպում հ. Հերթեցեանին շնորհակալութիւն յայտնող հոգաբարձութեան և քահանային ստորագրելու այդ արձանագրութեան ներքոյ, որ Ներսէս քահանայ Հերթեցեանի կարել տւած 500 ր. արժեքաւոր զգեստը՝ արժէ 303 բուբլի՝ և 29 կոպ.։ Եւ չ'նայելով, որ հ. Հերթեցեան մի առ մի հաշիւն էլ է զրկած լինում զգեստների հետ։ Բայց «իմաստնագոյն» վարդապետը, չի ընդունում այդ հաշիւը և իրեն Սինօդի յայտնի «չլեն» հրամայում է ճանաչել այն իւր կամեցածի պէս՝ այն է 303 ր. և 29 կոպէկ։ Երեք հարիւր և երեք բուբլին լինելով մի զգալի գումար, մի կերպ գարձեալ հասկանալի է. բայց այդ անտէր 29-ը կոպէկը չի հասկացւում ինչ մնացըրդ է։ Հաւանական է, պէկը չի հասկացւում իմաստութեամբ «մետաքս որ վարդապետը հրէական իմաստութեամբ» «մետաքս է» վաճառք հանել և 29 կոպէկը մի «զօրոտնիկի» գին է!?! Շատ պարզ է և միանգամայն հասկանալի, որ հոգեսոր քննիչը՝ ուղղակի թելատրւած է մտել իւր պատասխանառու դերում և շատ զգալի կերպով

արդարութեան շուրջը խաղեր է յօրինել. մի կողմից ցոյց տալով իւր վաղեմի թշնամութիւնը հ. Հերթեցեանի դէմ, մի այլ կողմից իւր կատարեալ անձեռնասութիւնը քննական՝ և իրաւագիտական խնդիրներում: Բաւական չէ այն, որ յիշեալ Բաբէն վ-ը, մի երկու տարի օրինակի խաթեր համար, Խարկովայում տէրտէրութիւն է արել և երբեմն երբեմն ազատ ունկնդրութիւն է ունեցել որպէս թէ իրաւագիտութեան կուրսերում: Դրանով Բաբէն վարդապետը՝ (որ յայտնի է եղել էջմիածնի ճեմարանական դասնթացում որպէս անցնդունակ և վատ սովորողներից մինը դեռ խաւարամիտ ուղղութեամբ) չի դառնում իրաւագէտ՝ որին և յանձնուում է լուրջ գործի ճեռնամուխ լինելու պատիւը: Միջանկեալ շեշտում եմ, որ եթէ Յ. քահանայ Սառիկեանը մնար քննչի պաշտօնում, նախ Զ ամիս քէֆ չէր անի Թէօդօսիայում աւելի գրգռելով ծխականներին աղաների դէմ՝ և ապա գործը բարեխղճօրէն՝ առանց միակողմանութեան և օրինական ճեռով քննելուց յետոյ՝ և օրինական կարգով աւարտում տւած կ'լինէր գործին: Եւ իրօք, այնպիսի ծիծաղելի ճեռ լինում ստացած Սինօդ մտած քննական գործը՝ ինչպէս այն եղել է այսպէս: Քննիչ վարդապետը քննական գործից առանձին և տալիս է իւր եղրակացութիւնը, առանձին թղթով և «պունկտերով»: Հայր Հերթեցեան լինելով էջմիածնում, գտախազի թոյլտուութեամբ աչքից անց է կացնում հոգեսր քննիչի ներկայացրած գործը՝ և յանկարծ նկատում է և քննչի առանձին եղրակացութիւնը: Բաւական չէ, որ քննիչը իրաւունք չ'պէտք է ճամարած լինէր տալու իւր եղրակացութիւնը, քանի որ ներկայացրել էր ամբողջ քննական գործը՝ և եղրակացութիւնը կամ վճիռը կախւած է լինում այդ դէպրում Սինօդի յատուկ նիստից, որին և ներկայ լինելու չէ քննիչը, Բաբէն վարդապետը աւելի յայտնի կացուցանելու համար իւր «միակողմանի» եղածը ներկայացնում է և իւր եղրակացութիւնը գնելով այնտեղ

յուցումներ, որոնք չեն եղել նոյն իսկ քննական գործում:

Եւ զբան հետևել է մի ահազին շարք բողոքներ։  
Հայր Հերթեցեան քաղւածքներ բերելով ընսական  
գործից ցոյց է տուել քննչի կատարեալ անհեթեթու-  
թիւնները, քնսական կեղծիքները, իսկ վերջինս բո-  
ղոք է տալիս Սինօդին և. Հերթեցեանի ոճի լեզվի և  
գրութեան պէմ գտնելով այնտեղ վիրաւորական ձևեր՝  
խնդրում է Սինօդին պատժել բողոքատու քահանային։

Եւ էջմիածնի Սինօդն էլ՝ թոյլ է տւել այս վերաբերմունքը երկու կողմից շարունակւելու ուղիղ միամիս։ Այսուեղ իրականանում է ժողովրդի այն ասացւածքը, թէ «ակօսի ծռութիւնը՝ մեծ եզանիցն է»։

Էջմիածնի Սինօղը տակաւին կարիք ունի իսկապէս հասկանալու և գիտնալու. նախ իւր իրաւասութեան սահմանը՝ և ըստ այնմ տալու հրահանգ և կամ վճիռ այս կամ այն գործին, որը իւր իրաւասութեանն է վերտապահւած ըստ պետ. օրինաց: Եւ մեր ասելիքը՝ բոլորովին արդարացնում է Սինօղի այժմեան փաստաբան պ. Գ. Ենգիբարեան՝ 1906 թ. № 4-րդ «Հովիւ» շաբաթաթերթում՝ «Ա. Էջմիածնի շուրջ» վերնագիր յօդւածում ուր ՚ի միջի այլոց յիշւած է հետեւեալը: «Լինում են դէպքեր, երբ Սինօղը մտնում են գսնգատներ կամ պատշաճաւոր հոգեոր իշխանութիւնների կողմից տեղեկութիւններ այս կամ այն պաշտօնեայի գեղծումների մասին, որոնք ըլէական օրէնքներով պիտի դատուին: Այսպիսի գէպքերում նոյնպէս Սինօղը քննութիւն է նշանակում ՚ի որ և է քահանայի կամ վարդապետի միջոցաւ, որոց կատարած քննութիւնները ըստ մեծի մասին շատ պակասուոր են ինում և ծիծաղելի»:

Հաւանական է, որ պ. Ենդիբարեանը՝ ի միջի այ  
քննական գործերի, տեսած է եղել և Բարգէն վար-  
դապետի կատարած քննութիւնը Թէօդոսիայում՝ ուս-  
տի և չէ թաքցրել իւր զարմանքը:

Կրկնում եմ, Բարգէն վարդապետը գոյութիւն

Հառած բողոքներից՝ ինքն է բողոքել կամ բողոք կազմել և ինքն էլ իւր բողոքը քննել ու եղակացութիւն դրել։ Այլապէս՝ Եալտայի հայոց ազօթատան 500 ր. զգեստների մասին բողոքը ծնունդ չէր առնի։

Նոյն ձեի նպատակաւոր բողոք է՝ Ներսէս արքեպիսկոպոս Խուդավէլքեանի սկսած գործը հ. Հերթեցեանի դէմ՝ սրանից 4 տարի առաջ Լուգանսկ քաղաքում հանգանակած յօգուտ կարմիր խաչի դըրկւած 292 բուրլու պատմութիւնը։

Ներսէս քահանայ Հերթեցեան 1903 թւի վերջին ամիսներում՝ Լուգանսկ քաղաքում, մի ուրախալի երեկոյթում հանգանակում է տեղական ազօթատան համար զանգսկներ առնելու համար 100 բուրլի։ Փողը արւում է պ. Յակովը Թովմասեանի մօտ պահելու։ 1904 թ. յունվար՝ թէ վետրվար ամիսներում հանգանակում է Հեռաւոր Սրեելք գնացող զինւորների ընտանեաց համար փող Լուգանսկի հայերի շըրջանում։ Հաւաքում են քահանան և երէցփոխը և պ. Ս. Սափարեան, 192 բուրլի։ Եւ որովհետեւ այդ ժամանակ ինչպէս ամբողջ Խուսաստանում՝ և այնպէս էլ Լուգանսկում՝ իւրաքանչիւր ազգ և ժողովուրդ կամենում է մի զգալի գումարով օգնութեան հասնել տառապեալ ժողովրդի տառապեալ մնացած ընտանիքներին, դրա համար հայերի մէջ (տեղական) ևս միտք է ծագում մի որոշ գումար ուղարկելու նահանգապետին՝ ի տնօրէնութիւն այն նպատակի համար, որի համար և գումարել են փողը։ Ուստի Լուգանսկի հայերի խորհրդարանում, այն է պ. Եղիա Քուշնարեանի խանութում ըստ սովորական կարգի հաւաքւում են հոգաբարձուներից երեք հոգի և ծխականներից երկու՝ և երկար ու բարակ խօսելուց յետոյ, որոշում են պ. Յ. Թովմասեանի մօտի 100 բուրլին էլ աւելացնել այդ հանգանակած 192 բուրլու վերայ և ըստ այնմ մաղթանք կատարել ոուսաց զէնքի յաղթութեան համար, հրաւիրել քաղաքագլխին և ապա այդ գումարը յանձնել նրան՝ կամ նրա խորհրդով

### Կարգադրել:

Հայր Հերթեցեան համաձայն չի լինում 100 բուրլին առնելու. այլ յորդորում է նորից փող հաւաքելու ովքեր որ ցանկանում են առատ նւէր ուղարկելու։ Ծխականներից մինը՝ առաջարկում է, «քանի որ 100 բուրլին մատեան մտած չէ, քանի որ մենք գահա սեփհական ազօթատուն չունենք նէ, զանգերի համար դահա կանուխ է ստակ ժողուելը. իմիս կարծիքով»՝ եկէ համաձայն ըլլան նէ 100 բուրլին կը աւելացնենք 192 բուրլու վերայ. չէ՝ չուզեն նէ, այն ատեն կ'նայենք»։

Հայր Հերթեցեան յուսալով, որ 100 բուրլուն սիրատուները չեն համաձայնի տալու յիշեալ գումարը այլ նպատակի, կազմում է ցուցակ՝ նւիրատուների՝ և զրում է ոուս լեզով իւր դիմումը նւիրատուներին՝ հարցնելով նորանց կամքը։ (Որովհետեւ հայերէն չեն հասկանում եղել):

Բանից գուրս է գալիս, որ բոլորեքեանք; այն է 45 հոգի ընդդէմ երկուսի, վճռում են 100 բուրլին տալ աւելացնել 192 բուրլու վերայ։ Դիմադրողները լինում են պ. պ. Պետրոս Մանուշակեան՝ և Յ. Յովհաննիսեան։ Այդպիսով խնդիրն արդէն փակւում է և բոլորին յայտնի այդ որոշումը իւր ժամանակին կատարւում է։

Իսկ այսօր, 4 տարւայ այդ գործը, որ իւր բուրլոր կողմերով վերապահւած է Լուգանսկի հայ հասարակութեան, յետին նպատակով դառնում է թեմական առաջնորդի իրաւասութեան խնդիր։ Տէր-Ներսէս քահանայ Հերթեցեան դրկած է այդ գումարը իւր նպատակին և կամ ոչ՝ այդ հարցով պիտի զբաղւէին նւիրատուները որպէս իրանց սեփհական տուրք. իսկ փոքրիշատէ խելքը զլսին առաջնորդը անպայման պիտի իրեն հեռու պահէր քաղաքացիական և քրէական գործերում խառնւելու միտումից, յարելով, որ դա մարմնաւոր իշխանութեան գործ է։ Սակայն այդպէս

ՀԵ վարւել ՏԵՐ ՆԵՐՍԷՍ արքեպիսկոպոս, որովհետեւ  
յիշեալ Արհին՝ փափագով տոչորւած է Եղել հ. Հեր-  
թեցեանին արտաքսելու իւր թեմից, ուստի իւր ստոր  
նպատակների ծառայութեան գործում գտնելով Ճա-  
լայից փախած մի ինչ որ Ստեփ. քահ. Պապայեանի,  
Վերջինիս միջոցով սկսել է «հին յարդը քամուին»  
տալ:

Բայց որքան առաքինի, բարեխիղճ և արժանի ա-  
ռաջնորդական կոչումի անհատ կ'լինէր Խուզավէր-  
տեան, որ միմիայն կեղրոնացած լինէր իւր թեմա-  
կան իշխանութեան օգտաքեր գործերում և գոնէ  
«կորիզի» մեծութեամբ մի օգտակար և բարի գործ  
կատարելով անմահ Ներսէսների անունը չ'մըստէր  
այնպէս, ինչպէս Բաբգէն և Բենիկ վարդապետները  
հայ մարդու՝ և հայ վարդապետի անունը:

Այս միջանկեալ պատմութիւնից անցնելով, ես  
արձանագրում եմ Բաբգէն վ-ի քննական գործի ակն-  
յայտնի գեղծումները, լրացնելու այդ քննիչի կատա-  
րած գործի մեծութիւնը:

Քննական գործի երդւեալ վկաներից պ. Կեցօ  
Եայլիեանի ցուցմունքը, որ ՏԵՐ ՆԵՐՍԷՍ Եկեղեցում  
քարոզելիս խօսեց միայն ճշմարտութեան և նորա  
յաղթանակի մասին և ուրիշ ոչինչ, քննիչը՝ իւր Ա-րդ  
արձանագրութեան մէջ գրում է. «որ Տ. ՆԵՐՍԷՍ մեզ  
գրգոեց հարսաների դէմ»: Եւ երբ հ. Հերթեցեան  
ստանում է այդ ցուցմունքների պատճէնները, Կեցօ  
Եայլիեան հետաքրքրում է զիտնալ թէ ինչպէս է  
արձանագրել իւր ցուցմունքը հ. քննիչը՝ տեսնում է  
որ բոլորովին այլ բան է արձանագրել և հակառակ  
ոգով, ուստի գնում է անձամբ քննիչի մօս՝ և բա-  
ցաղութիւն պահանջում, պնդելով, որ գրւի այնպէս,  
ինչպէս ինքն է ցոյց տուել: Քննիչը դէս դէս ընկ-  
նելուց յետոյ՝ յայտնում է բողոքատուին՝ իւր ձեռ-  
քով գրելու ցուցմունքը: Այս արգէն ապացոյց է ե-  
ղած, որ քննիչը գտել է բողոքատուի պահանջը ի-  
րաւացի և խոյս ապագայ տարածայնութիւնից միջոց

Է տւել վկային իւր ասելիքը ասելու ազատ խղճի  
մտօք: Վկայ Եայլիեան գրաւոր կերպով ներկայացնում  
է իւր ասելիքը անձամբ: Քննիչը ստանում է այն իբ-  
րև վկայութիւն, իբրև գործ՝ և վերջը, երբ Կեցօ  
Եայլիեան հետանում է, նոր ցուցմունքի վերայ աւե-  
լացնում է «Զանաչել սոյն վկայութիւնը օրինաւոր,  
որովհետեւ քահանայի թելագրութեամբ է եղած»: (Տես  
Երես Սինոդի քննական գործի 127-րդ):

Կարծում եմ, որ ընթերցողը խսկոյն կ'նկատէ,  
որ քննիչ վարդապետի այդ ձև արարմունքը կամայ-  
ական մի յիմար տղայական խաղ է. և անկարծիք,  
այդպիսի տղայական խաղեր կարող է սարել մի-  
մեայն Բաբգէն վարդապետը, որը շատ խակ է իրա-  
ւագիտութեան մէջ և համարեա ոչինչ չ'զիտէ՝ իսկ  
անաշխառութեան և ազնիւ գործերում՝ այդ վարդա-  
պետը աչքի է ընկնում իւր բացասական և մութ  
կողմերով:

Եթէ յիշեալ քննիչը ունենար փորձառութիւն,  
նա կամ պիտի ընդունէր նոր վկայութիւնը առանց  
զանազան մակագրութիւններով և կամ կարող էր  
չ'ընդունէր՝ ասելով վկային, որ բողոքէ Սինոդ և նոր  
քննութեամբ կ'պարզւէր ամեն ինչ:

Այս ակնյայտնի խարդախ վարմունքից յետոյ  
մենք տեսնում ենք որ քննիչ վարդապետը ամենա-  
անարգաբար ծաղրել է ժողովրդին, նշանակութիւն  
չ'տալով նորա մի շարք բողոքներին, ծածկելով և  
չ'ընելով հետևեալ բողոքատու խնդիրները, որոնք  
Սինոդը յանձնել էր յիշեալ վարդապետին քննելու:

Ահա այդ կէտերը:

Ա). Զէ քննել առաջնորդի դէմ եղած բողոք-  
ները:

Բ). Զէ քննել և չէ պահանջել Սուբաշեան երէց-  
փոխի 1905-906 թ. տարեկան չ'ներկայացրած հա-  
շիւները:

Գ). Զէ քննել նօտար Մարտիրոս Զայցեանի ա-  
պօրինի վարմունքը, որ յիշեալ պարոնը 3500 ըուբլի

ինքնագլուխ կերպով վատնել է Ս. Սարգիս եկեղեցու դրամը՝ հանգուցեալ Յովհաննէս Այվազովսկու կտակով թողած անձեռնմխելի 50,000 ըուբլուց:

Դ). Չէ քննել Ղաղարոս Բէրբէրեանի 100,000-ի հանող կտակի կամայական գործադրութեան դէմ եղած բողոքները:

Եւ երբ անձար մնացած ծխական ժողովուրդը իւր ծխական լիազօր ներկայացուցչի՝ այն է պ. Յարութիւն Թերգեանի միջոցով բողոքում են Սինօդ Բարգէն վարդապետի այդ անիրաւացի վարմունքի դէմ՝ խնդրելով Սինօդին, որ վերջինս հրամայէ վարդապետին մի առ մի քննելու ժողովրդի բողոքները, ահա այդ վերջին պահումն ևս լուռմ է Նահապետեանի ձայնը Սինօդից, որը պատասխանում է խեղճ ժողովրդին հետևեալը:

«Изъ Эчмидзина № 201, 31-V. Θεοδοσιο

Терзіеву.

Синодъ не находитъ возможнымъ стѣснять свободу слѣдователя.

Членъ Синода Епископъ Нахапетъ».

(Թարգմանութիւն).

«Էջմիածնից՝ № 201, 31-V. Թէօդոսիա  
Թերգեանին:

Սինօդը չի գտնում հարաւոր՝ քննիչի ազատութիւնը ճնշելու:

Անդամ Սինօդի՝ Նահապետ եպիսկոպոս»:

Այս արգէն դժոխային կոնցերտի վերջին աքկորդն էր, որից յետոյ Բարգէն վարդապետը յայտարարում է քննութիւնը վերջացած և ինքը որպէս թէ արգէն յոպնած այդ ահազին գործերից և տանջւած, մի ամիս էլ աւելի շարունակում է մնալ ՚ի հաշիւ ժողովրդի Թէօդոսիայում՝ Սև ծովի լողարաններում և մթնշող երեկոներում ծովափնեայ է ակների տեսքով... մխիթարում:

Ժ. ԳԼՈՒԽ.

(բովանդակութիւն).

112 տուն ծխականների արտաքոյ կարգի ընդհանուր ժողովը՝ Հրապարակով բացադրութիւն պահանջելը Յ. Քէֆչեանից իւր մեղադրական կէտերի նկատմամբ, որով Քէֆչեան հ. Հերթեցեանին զրպարտում էր: Քէֆչեան պապանձուում է: Նոյն ժողովում արձանագրուում է.—ա) արտաքսել ծխականների շարքից Յ. Քէֆչեանին և բ) ուսուցիչ Մ. Տարախչեանին արտաքսել տիրացութիւնից և ուսուցչութիւնից: Հ. Հերթեցեանի կրկին վերընարութիւնը՝ 112 ծխականներով: Թէ ինչու և ինչ հանգամանքում հ. Հերթեցեան գիմած է հայոց եկեղ. կալւածքների կուռավարիչ պ. Զիբոլդին: Զիբոլդի պատասխանը: Հ. Հերթեցեանի էջմիածին կոչւելը և Ստոլիպինի № 4271 գրութիւնը Ամենայն Հայոց Կաթուղիկոսին:

Նախ քան քննիչ Բարգէն վ-ի հեռանալը, ամբողջ ժողովուրդը, որ մի լեռնացած և «դէզ առ դէզ» կատաղի մեծութիւն էր կազմել թէ քննիչի բոլոր արարքներից և թէ Յակովը Քէֆչեան ծխականի ակնյայտնի զրպարտութիւնների պատճառով, որով այդ Քէֆչեան մեղադրելիս է եղել իրենց ծխատէր Տէր Ներսէս քահանայ Հերթեցեանին, գաղտնի նպատակով Տէր հօր մասին աեղեկութիւններ որսալով, ուստի ընտրում են 6 հոգուց մի ներկայացչութիւն, որոնք ներկայանալով քննիչին, առաջարկում են, որ քաղաքի ամբողջ հայութիւնը հաւաքւած Ս. Սարգիս եկեղեցու բակում, սպասում է քննիչին, որի ներկայութեամբ կատարելու է մի յայտնի ակա: Բարգէն վարդապետը զգալով բանի էութիւնը, այդ օրը խոյս է տալիս ժողովի գնալու, յուսալով, որ ծխականների լարւած վիճակը կ'թեթեանայ աստիճանաբար: Սակայն մի օր անց, դարձեալ նոյն բազմութիւնը, որի վերայ աւելացած է լինում և կանանց բազմութիւնը՝ միթխարի վեծութեամբ սկսում են անց ու

դարձ անել Ս. Սարգիս եկեղեցու բակում:

Դարձեալ նոյն պատգամաւորութիւնը կրկին ներկայանալով քննչին՝ խիստ պահանջ են գնում վերջնիս դպրոց գալուն և ծխական ժողովին ներկայ լինելուն:

Թէ ակամայից, բայց և այնպէս, Բարգէն իսկոյն պատրաստում է գալու, յարելով, որ ինքը կ'փնայ գեն. նահանգապետին զեկուցանելու ժողովի մասին՝ և թէ նահանգապետը կամք տայ՝ կ'գայ ժողովին:

Ծխականք գիտէին, որ էջմիածնի այդ Բարգէնը վերջերս խիստ շուտ շուտ «ել ու մուտներ» է արել նահանգապետի մօտ, գնում է նորա բարեկամական քաղցը ժպիտը՝ և 'ի դէպ՝ խնամակալ զօրքի պաշտպանութիւնը խնդրելու եթէ բան է, թէօդոսիացիք կ'փորձեն վարդապետի սեացած կաշին սպիտակացնելու...»

Մի ժամկց անց, գալիս է յիշեալ «քննիչը» և տեղ բռնում ծխական դպրոցում:

Ծխական ներկայացուցիչներ, պ. պ. Կ. Արութեան, Յ. Թերզեան, Լ. Դրնակսիկեան, Ս. Չորայեան և Յ. Ղարիբեան՝ զբաւոր ներկայացնելով Յ. Քէֆչեանի բոլոր զրպարտական կէտերը քահանայի նկատմամբ, որ իրը հ. Ներսէս «քարոզել է անսատւածութիւն», ծաղրել է սրբութիւնը, ժողովրդից փողեր է պահանջել արեան սպառնալիքներով, ինքնազլուխ երէցիոխ է ընտրել, ժողովներ և դասախոսութիւններ է ունեցել շարունակ՝ զրգուելով հասարակութեան, գնում են նաև քննիչի դիմաց Քէֆչեանի հետեւել հեռագիրը, որը յիշեալ բողոքատուն մայիսի 15-ին պատասխանով տրւած է լինում Ն. Նախիջեան պ. Յարութիւն Նալբանդեանին (անմահ Միք. Նալբանդեանի եղօր որդուն) հայր չերթեցեանի մասով:

«Հահիւանդոն՝ № 451 15-V.

Նալբանդանց.

Священникъ Нерсесъ Эртевцянъ Сурпхачъ

или окрестностяхъ, прошу сообщить секретно».

Կեֆчяն.

(Թարգմանութիւն).

«Նախիջեան-Դօն. № 451. 15-V.

Նալբանդեանցին:

Ներսէս քահանայ չերթեցեանը Սուրբ Խաչումնէ, թէ շըջակայքում, խնդրում եմ գաղանաբար յայտնել:

Քէֆչեանին»:

Ընտրելով վարդապետին ժողովի նախագահ, ծխականները իմադրում են հ. Նախագահին իսկոյն կոչել Յ. Քէֆչեանին գալու և հրապարակաւ ապացուցանելու իւր բոլոր հարած մեղադրական կէտերը: Կոչում են և ուսուցիչ Տարախչեանին: Յ. Քէֆչեան շըջապատւած իւր երկու Դաշնակցական ողորմելի զինւորներով, կանգնում է ծխականների շարքը և գտնելով իւրեն այդ զիրքում ոչ այնքան պատւաբեր՝ մօտենում է նախագահ վարդապետին և կամենում է դեռ առանձին աթոռ զբաւել, բայց ծխական ներկայացուցիչները զրկում են պ. Քէֆչեանին այդ պատվից: Ուսուցիչ Տարախչեան ծածկւում է:

Սկսում է հարց ու փորձ և պահանջւում բացադրութիւն: Յակովը Քէֆչեան աւելի վատթար վիճակում է զգում իրեն՝ բան Վասակ Սիւնին և կամ Մեհրուժան Արծրունին: Ուստի սկսում է կմկմալ, գունատվիլ և ապա ուղղակի պապանձւում է...»

Միայն մի հարցի նկատմամբ, այն է թէ ինչու ում զրգմամբ Քէֆչեան հեռագրով կամեցած է զիտնալ հ. չերթեցեանի տեղը, «զրպարտիչը» պատասխանել է, «որ այդ իւր գիտնալու բանն է» և լոել է: Իսկ վերոյիշեալի մասին ոչ մի փաստ՝ կամ զրաւոր ցուցումն, ինչպէս ինքն է խոստացած լինում սկզներում ներկայանալու վարդապետին. և այդ օրը մերկանում է իւր կեղծ ու պատիր զրպարտանքների գործում սև երես կանգնելով թէ արանց՝ և թէ կանց մէջ:

Ծխական ժողովը՝ իսկոյն անցնում է գործի։  
Կազմում է 112 հոգու ստորագրութեամբ առանձին  
արձանագրութիւն՝ ուր մի առ մի թւելով յիշեալ  
Քէֆչեանի բոլոր բացասական կողմերը, միաձայն  
վճռում են. «Ճանաչել բոլորովին արտաքսւած Ղարսի  
մեշանին Յակով Քէֆչեանին Թէօդօսիայի հայ ժո-  
ղովրդի անդամութիւնից չ'ընդունելով նրան և ոչ մի  
գէպքում հայ մարդկանց մէջ։ Բարգէն վարդապետը  
իբրև նախագահ ստիպւած է լինում իւր սրտակից  
բարեկամի դատավճռի ներքոյ տալ վաւերացումն,  
որ ուղիղ՝ իւր ներկայութեամբ 112 տուն ծխական-  
ները՝ կազմեցին յիշեալ վճիռը։ Դէպքը աեղի է ու-  
նենում 1906 թ. յունիսի 4-ին։ (Տես ըննական գործ  
Սինօդի՝ երես 145):

Նոյն անձանց առանձին վճռով երկրորդ անգամ  
արձակւում է և արտաքսւում Թէօդօսիայից Աղէքսան-  
դրապօլի բնակիչ Մկրտիչ Սարգսեան Տարախչեան,  
որ պատահաբար Թէօդօսիայում տիրացուի և ուսուց-  
չի պաշտօն է վարելիս եղել։ Արտաքսման պատճառ-  
ները եղել են ա) գողութիւն, թէ ինչպէս յիշեալ ու-  
սուցիչ պարոնը իւրացրել է 1905 թ. տօնածառից  
մասցւ 13 բուրլին. բ) աշակերտներին շարունակ  
ծեծելը և գ) ուսուցչական կատարեալ անընդունա-  
կութիւնը։

Նոյն ժողովում բացւում է նաև այն՝ թէ ինչ-  
պէս նօտար պ. Մ. Գրիգորեան Զայցեան՝ որից պա-  
հանջում է եղել հ. Հերթեցեանի նախագահութեամբ  
իւր վատնած 3500 ր. գումարի գործադրութեան  
պատճառները, կանչել է իւր մօտ բանւոր Յարու-  
թիւն Ղարիբեանին և գրգել բանւորին՝ Տէր ներսէսին  
ծովը նետելու։

Ծխական ժողովը կազմում է մի երրորդ արձա-  
նագրութիւն գարձեալ նոյն անձանց ներկայութեամբ  
և ստորագրութեամբ և Բարգէն վարդապետի նախա-  
գահութեամբ, որ ինքեանը (112) ՚ի սրտէ գոհ լինե-  
լով հ. Հերթեցեանի պաշտօնավարութիւնից, տալիս են

երկրորդ ընտրութեան գիր հ. քննիչին տանելու իւր  
հետ Սինօդի ի գիտութիւն սրբազան սինօդականների,  
որ ինչպէս առաջ, նոյնպէս էլ այժմ տածելով յար-  
գանք գէպի Հերթեցեան բահանան իւր շիտակ և ան-  
կողմնապահ վերաբերմունքի համար գէպի բոլոր ծխա-  
կանները, միաձայն ընտրած են, ընտրում են նորից  
և պատրաստ են նոյն իսկ իրենցից ոռմիկ տալ հ. Հեր-  
թեցեանին և պահել մշտապէս ծխատէր հովիւ։

Ո. Այնուհետեւ ծխական ժողովը պարզում է և այն  
հանգամանքը՝ թէ ինչու իւրեանց ծխատէր քահանան  
գրագրութիւն է սկսել եկեղեցական կալւածոց կա-  
ռավարիչ պ. Զիբոլդի հետ, որի համար Քէֆչեան  
մեղաւոր էր գտնում հ. Հերթեցեանին։

Ահա յիշեալ ժողովում կարդացւած գրագրու-  
թիւնները թէ հ. Հերթեցեանի և թէ պ. Զիբոլդի  
կողմից, որ մենք անհրաժեշտ ենք համարում իսկու-  
թեամբ առաջ բերելու, որպէս զի աւելի պարզ լինի  
Տէր ներսէս հօր արթուն գործունէութեան բնաւո-  
րութիւնը։

Ա). հ. Հերթեցեանի գրութիւնը պ. Զիբոլդին։

Կոպիա.

М.В.Д.

Настоятель

Թեոдосийскихъ Армяно-

Григоріанскихъ церквей

Его Высокородию Г. За-  
вѣдывающему Имуществомъ

№ 39. Марта 24 дня 1905 г. Թեоdosийъ Армяно-Гри-

горіанскихъ церквей въ г.  
Г. Теодосіи г. Зиболльдъ.

Согласно приказу Нахичевано-Бессарабской  
Армяно-Григоріанской Духовной Консистории отъ  
18-го марта 1905 г., за № 629, честь имъю про-  
сить Васъ въ возможно непродолжительномъ вре-  
мени сообщить мнѣ слѣдующія свѣдѣнія:

1). Въ какомъ положеніи находится все отоб-

ранное въ казну недвижимое имущество, принадлежащее Теодосийскимъ Армяно-Григоріанскимъ церквамъ: какъ-то дома, магазины и проч?

2). Какие доходы поступили въ казну съ имуществъ, указанныхъ въ первомъ пункте со дня отобранія ихъ въ казну и по настоящее время.

2). Были-ли произведены расходы на ремонтъ или иные нужды по содержанію и управлению означенными имуществами со дня отобранія и по настоящее время, и если были произведены, то, какие и въ какомъ размѣрѣ.

Настоятель церквей

Нерсесъ Эртевціанъ.

Ուղիղ է իսկականի հետ Ն. ք. Հերթեցեան,  
1906 թ. VIII-20.

(Թարգմանութիւն),

Պատճեն,

Ն. Գ.

Աւագերէց

Յոյժ Կազմար:

Թէօդօսիայի Հայ-Լուսա-  
լորչական եկեղեցիների, Նորին Բարեձնութեան պ.

№ 39. Մարտի 24, 1905 թիւ. Կառավարչի Թէօդօսիայի Հայ-  
ք. Թէօդօսիա. Կոյքերի Զիբօլդին՝ Թէօդօսի-  
այում:

Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Հայ-Լուսա-  
լորչական Հոգևոր Կոնսիստորիայի հրամանի համա-  
ձայն՝ որ ՚ի 18 մարտի 1905 ամի թիւ 629, պատիւ-  
ունիւմ խնդրելու Ձեզ, որքան հնարարաւոր է՝ կարծ  
ժամանակում յայտնելու ինձ հետեւալ տեղեկութիւն-  
ները:

1). Ի՞նչ գրութեան ներքոյ են գանում պե-  
տութեան գրաւած Թէօդօսիայի Հայ-Լուսալորչական  
Եկեղեցիներին պատկանած բոլոր անշարժ կայքերը,  
որպիսիք են. — տներ, մազագիներ և այլն:

2). Որպիս եկամուտներէ մաել արքունի գան-

ձարբն կալւածքներից (առաջի պունկտում յիշւած)  
նոցա գրաւման օրից՝ և ներկայ Ժամանակում:

3). Եղել են ծախքեր յիշեալ կալւածքների վե-  
րանորոգութեանց, պահպանութեան, վարձավրութեան  
և այլ կարիքների համար, գրաւման օրից՝ և ապա  
ներկայ ժամանակում. և եթէ եղած են՝ որպիսի և  
որքան:

Աւագերէց Եկեղեցիների՝  
Ներսէս Հերթեցեան:

Ուղիղ է իսկականի հետ՝ Ն. ք. Հերթեցեան.  
1906 թ. VIII-20.

Իսկ պ. Զիբօլդի գրութիւն պատասխանը հետեւ  
եալն է:

Կոպիա.

Մ. Յ. և Գ. Ի.  
Լ є ս ն ի չ ի  
Թէօդօսիական  
Օպытнаго  
Горно-Культурного  
Л є ս տ ն ի չ ե  
Марта 26 днія 1905.  
№ 63.

Г. Настоятелю Թէօդօսի-  
ական Հայ-Լուսա-  
լորչական Եկեղեցիների.  
Л є ս տ ն ի չ ե  
г. Թէօդօսիա.

Всльдствіе отношенія отъ 24-го се-  
го марта за № 39, имѣю честь увѣ-  
домить Васъ, Милостивый Государь, что  
Ваша просьба не можетъ быть удовлет-  
ворена, такъ какъ я не уполномоченъ  
своимъ начальствомъ сообщать кому  
бы то не было свѣдѣнія объ Армяно-  
Григоріанскихъ имуществахъ.

Старшій зав. Л є ս ն ի չ ի չ ե  
գ. Թէօդօսіа.

Իսկականի հետ ուղիղ է. Ն. ք. Հերթեցեան.  
1906 VIII-20.

Պատճեն:

(Թարգմանութիւնը).

Երկրագործութեան՝ և  
Կայսերական կալւածոց  
Նախարարութիւն:

Անտառապետ՝

Փորձառու Լեռնային Թէօդօսիայի Հայ-Լուսա-  
մշակութեան անտառապետութիւն և բարչական եկեղեցիների Տ.  
պետութեան: Աւագ երիցուն:

Մարտի 26, 1905 թ.

№ 63.

ի Թէօդօսիա:

'Ի հետեւում Զեր մարտի 24-ի թիւ  
39 գրութեան՝ պատիւ ունիմ յայտնելու  
Զեզ, ողորմած տէր, որ Զեր ինդրածը՝ չի  
կարող բաւարարուել, որովհետեւ ես իմ իշ-  
խանութիւնից չունիմ լիազօրութիւն ովկու-  
զէ լինի՝ տալ տեղեկութիւն Հայ-Լուսաւոր-  
չականների կայքերի վերաբերմամբ:

Անտառապետ և գլխաւոր կառավարիչ՝ Զիբոլ'դ:

Իսկականի հետ ուղիղ է՝ Ն. ք. Հերթեցեան.  
1906. VIII-20.

Առ այս, հ. Հերթեցեան՝ այլ ևս պատասխան  
չի գրում յիշեալ անտառապետին, այլ նրա գրու-  
թիւնը՝ (իսկականը) և իւր եկեղեցիների երեցփոխի  
գրութիւնը՝ յայտարարութեամբ ներկայացնում է  
Քիշների կոնսիստորիային՝ գրելով հետեւեալը:

«'Ի վիճակային կոնսիստորիայն Հայոց նոր-Նա-  
խիջևանի և Բեսսարաբիոյ:

Թէօդօսիայի Հայ-Լուսաւորչական  
եկեղեցիների քահանայից՝

Յայտարարութիւն:

«Համաձայն վիճակային հոգեոր Բարձր Ատենիդ  
հրամանակրութեան, որ 'ի 18 ամսոյս թ. 629, ստա-  
նալ անյապաղ ձիշտ տեղեկութիւն մեր եկեղեցական  
գրաւած շարժական և անշարժ կայքերի մասին, թէ  
ի՞նչ վիճակումն էին գտանուում կայքերը զրաւելուց  
առաջ և յետոյ, առաջազրեցի եկեղեցիներիս պ. Երէց-  
փոխին տալու գրաւոր իւր ունեցած տեղեկութիւնները:

Երէցփոխի տեղեկութիւնը լրացուցիչ չէ, ուստի  
ձիշտ տեղեկութիւն ստանալու համար, պաշտօնապէս  
ինգրեցի քաղաքիս անտառապետ պ. Զիբոլ'դին, որի  
ինամոցն է յանձնած մեր եկեղեցական կայքերի  
կառավարչութիւնը, տալու ինձ լրիւ տեղեկութիւն:

Պարոն Զիբոլ'դ, իւր № 63 պատասխանագրու-  
թեամբ յայտնում է, որ չունենալով իւր կառավա-  
րութիւնից հրահանգութիւն, ուստի չի կարող և ոչ  
որի տալու տեղեկութիւն Հայ-Լուսաւորչական եկեղե-  
ցու ստացւածքի մասին:

Յղելով ընդ սմին թէ Երէցփոխի № 1 յայտա-  
րարութիւնը և թէ Զիբոլ'դի գրութիւնը, չնորհ ունիմ  
խոնարհաբար խնդրելու Ատենիդ առանձին ուշագրու-  
թիւնը՝ վերջնիս պատասխանի առթիւ:

Քանի դեռ Բարձրագոյն հրամանով մեզանից  
խլած չէ մեր եկեղեցական կալւածքների սեփակա-  
նութեան իրաւունքը, օրինական տեսակէտով ոչ մի-  
այն տեղեկութիւն տալը պիտի գժւարանան մեր կալ-  
ւածքների տնտես ոռւս կառավարութեան վարիչնե-  
րը, այլ թէ նոքա պարտական են իւրաքանչիւր տա-  
րի՝ իւրեանց գործառնութեանց հաշիւ ներկայացնե-  
րու գոնէ վիճակային Ատենիդ իբր սեփականատիրոջ,  
չ'սպասելով իսկ թէ հայոց եկեղեցական թեմական  
իշխանութիւնը կ'ընդունէ այդ հաշիւները՝ թէ՝ ոչ:

Անտառապետ Զիբոլ'դի գրութիւնը լինելով մինը  
գեղեցիկ փաստերից՝ թէ ի՞նչպէս ծածկւում է մեր

աչքերից մեր սեփականութիւնը, խոնարհաբար կ'խընդրէի, պ. Զիբոլ'դի գրութիւնը, ուշադրութեան արժանի խնդիր դարձներոց յետոց, ուղարկէիք՝ ի տես և ի տնօրէնութիւն Երկրագործական և Կայսերական կարածոց նախարարութեանց»։  
Ներսէս քահանայ Հերթեցեան։

1905 թ. 28 մարտի.

Թէօդօսիա:

№ 41.

Այս գրութիւնների ընթերցումից վերջը, հեռում է նախագոհ վարդապետը և ժողովը արձակում է։

Հայր Հերթեցեանին առաջարկում է քննիչ Բարդէն վարդապետի կողմից՝ կրկին վերադառնալու Ս. Խաչ։ Եւ որովհետեւ ընտանեկան այդ զգալի դժբախտութեանց պատճառով հ. Հերթեցեանի կինը հիւանդէ լինում, ուստի Տէր Ներսէսը այդ յայտնի պատճառով չի կատար ածել «կատաղած» վարդապետի պահանջը։

Վարդապետը իսկոյն ներկայանում է գեներալ գուբերնատորին և զեկուցանում է, որ ինքը արդէն իւր քննութիւնը վերջացրել է և առաջարկել քահանային վերադառնալու Ս. Խաչ ցնոր կարգադրութիւն, բայց քահանան դժկամակելով՝ չի ուզում կատարել իւր կարգադրութիւնը։ Գեներալ նահանդապետը, ուրին յայտնի էին արդէն քահանայի վիճակը և ընտանեկան դրութիւնը՝ թէն խօստանում է Սինօդի առդամանութեան մասն և քննիչը ներկայանում է իւր կատար ածել նորա խնդիրը, բայց իրեն մարդ՝ և ոչ թէ վարդապետ, ձգձում է հետամուտ լինելու խնդիրը ուղիղ 20 օր։

Ժողովրդի գրութիւնը դէպի լուսն է փոխում, կարծելով, որ զինւորական իշխանութեան կողմից այլ ևս վասնդ չի կարող սպառել, կրկին ծիսական ժողով են գումարում և արձակում «տղա» հոգաբարձուներին, և դիմելով առաջնորդին, խնդրում են

յետ ուզարկել Առևաշեան Երէցփոխիսի «Ճածուկ» կերպավ Կանսիստորիա զրկած հաշւեմատեանը, քննելու 1905-906 թ. հաշիւները՝ և թէ Բաբգէն աղա-վարդապետի ծախքերը։ Ազաները, Երէցփոխիս և գեներալ Ներսէս Մազիրեան նորից են թակում նահանդապետի դուռը...։

Նահանդապետը՝ («Գերցիկ» անունով) ուղակի զգւելով այդ ստոր մարդկանց ոտնձգութիւններից, կանչում է իւր մօա բոլոր «աղա» հոգաբարձուներին և խիստ յանդիմանում, որ շարունակ դոքա իւր հանգապաւթիւնը խանգարելով՝ ուզակի շշմեցրել են իւրեն։ Նոյն յանդիմանութիւնը կարգում է նաև բողոքող ժողովրդի ներկայացուցիչներին, որոց թւում աչքի էր ընկնում Կոստանդին Արութեանը։

Չեն խրատում այդ յանդիմանութիւնից «աղաները» և վրայ է հասնում հեսսարաբիայի տռաջնորդի «կրկնակի» բաղոքը, որը միանում է աղաների ուժգին բողոքի հետ և գեներալ Մազիրեանի կնոջ (ուսւ կին) միջոցով՝ իւր բարեկամ նահանդապետ Գերցիկին է արւում։

Բողոքը նոր բան չէր. դարձեալ Տէր Ներսէսի արագածելու հարցն էր։ Կատարում է այդ նոր «Հերթովիատայի» խնդիրը՝ և գեն. նահանդապետը վերջին անգամ ևս զիմում է էջմիածին Սինօդ։ Հերթեցեանին հեռացնելու։ Բայց այդ ժամանակ հասնում է Վեհափառ Հայրիկի սփոփող հեռագիրը թէ Տ. Ներսէսին և թէ նահանդապետին, որ ՚ի նկատ ունենալով քահանայի ընտանեկան դրութիւնը, հրամայում է Տ. Ներսէսին մնալ Թէօդօսիա ընտանեաց վիճակը խնամելու։

Պարզ բան է, որ այս անօրէնութիւնը չէր կարող դուր զալ թէ գեն. նահանդապետին, թէ «աղաներին», թէ առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսին՝ և թէ քննիչ Բաբգէն վարդապետին, որը դարձեալ չէր բաժանում իրեն համար «Մուհամմէտի զրախո» դարձած Թէօդօսիայից։

Ուստի սոցա միախորհուրդ, միասիրա ցանկութեամբ, գեներալ նահանգապետը՝ դիմում է ներքին գործոց նախարարին, բողոքելով Ամենայն Հայոց Կառուղիկոսի կարգադրութեան դէմ:

Այդ միջոցներում՝ օր ցերեկով սպանուում է հ. Ներսէսի կուսակից միակ հարուստ մարդը՝ այն է Կ. Մ. Արութեան, որը տղաների աշքի փուշն է եղել:

Իսկ Բարգէն վարդապետի «ծովային» և մթնշող» երեկոների որսորդութեանց քաջարի գործերի լուրը հասած լինելով վեճ. Կաթուղիկոսին՝ Վեհափառ հեռագրով պատվիրում է քննիչ վարդապետին շտապով վերադառնալու էջմիածին:

Բարգէնը անուշադիր է թողնում վեհի հրամանը: Երրորդ հեռագիրն արդէն լինում է գեներալ նահանգապետի անունով, անմիջապէս ձանապարհել դէպի էջմիածին քննիչ Բարգէն վարդապետին, Հերթեցեան քահանային և երէցփոխ Սուբաշեանին: Բարգէն վարդապետը իսկոյն գնում է Եալտա, իր լրացուցիչ քննութիւն կատարելու, իսկ թէօդոսիայում պրիստաւը հեռագրական հրամանը ձեւին Բարգէն է որոնելիս եղել՝ յայտնելու նրան, որ վերադառնայ էջմիածին: Հայր Ն. Հերթեցեանը անմիջապէս ձանապարհում է էջմիածին, կնոջը և երեխաներին տանելով Ստավրոպոլ իւր աներոջ մօտ: Բայց Սուբաշեան Նիկողայոս երէցփոխին՝ Խուղավէրտեան առաջնորդը պահպանում է կեղծ ու պատիր հեռագրերով յանուն Կաթուղիկոսի, որպէս թէ Սուբաշեան հիւմադէ: Այն ինչ, Սուբաշեան լինում է իւր կալւածքում և քէֆերի հետ:

Հայր Հերթեցեանի էջմիածին եղած միջոցին՝ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսը ստանում է նախարարապետ Պ. Ա. Ստոլիպինից՝ օգոստոսի 22-ից դրւած № 4271 հետևեալ դրութիւնը Տէր Ներսէսի վերաբերմամբ:

Копія.

Министръ  
Внутреннихъ Дѣлъ.

Ваше Святѣйшество

Милостивый Архипастырь!

Вслѣдствіе возбужденного Времен-  
нымъ Генералъ Губернаторомъ гор. Թео-  
dosіи ходатайства объ отозваніи и устрап-  
неніи отъ должности настоятеля Թеодо-  
досійскихъ Армяно-Григоріанскихъ церк-  
вей священника Нерсеса Эртевціана, въ  
виду крайне вреднаго направленія его  
дѣятельности, вызвавшей возмущеніе  
среди Армянского населенія города и  
распространившейся на войска мѣстнаго  
гарнизона, Эчміадзинскимъ Синодомъ  
было сдѣлано распоряженіе объ устрани-  
ніи означенного священника отъ долж-  
ности съ заключеніемъ въ монастырь  
Свят. Креста въ гор. Нахичеванъ н-Дону.  
Но по телеграммѣ Вашего Святѣйше-  
ства, Нерсесъ Эртевціанъ вернулся въ  
Թеодосію.

Имъя въ виду, что устраненіе озna-  
ченного священника Эчміадзинскимъ Ар-  
мяно-Григоріанскимъ Синодомъ, обязан-  
нымъ наблюдать за дѣйствами подчинен-  
ныхъ ему должностныхъ лицъ, послѣдо-  
вало на точномъ основаніи дѣйствующа-  
го закона (ст. ст. 1141, 1146 устав. иностр.  
исповѣд.) я считаю необходимымъ обра-  
тить вниманіе Вашего Святѣйшества на  
то, что распоряженіе Ваше о возвраще-  
ніи означенного духовнаго лица въ мѣс-  
то, гдѣ прибываніе его признано Прави-

тельствъ. властью вреднымъ, не можетъ быть признано соответствующимъ Государственнымъ интересамъ, ибо оно создастъ для Правительства затрудненія въ борьбѣ его съ проявленіями революціон-наго движенія.

Поручая себя Архипастырскимъ молитвамъ Вашимъ, имѣю честь быть Вашего Святѣйшества

Покорный слуга П. А. Столыпинъ.

21 Августа 1906 г.  
Въ С.-Петербургъ  
За № 4271.

Իսկականի հետ ձիցտ է. Ն. ք. Հերթհյեան,  
1906 թ. Դեկտեմբ. 25.

(Թարգմանութիւն).

## Q u a n t i t y .

Նախարար՝  
Ներքին գործոց.

ԶԵՐԴ ՍՐԲՈՒթիւն

Ողորմած Հովհապետ!

՚Ի հետևումն Թէօդօսիա քաղաքի ժամանակաւոր  
գեներալ նահանգապետի յարուցած միջնորդութեան,  
յետ կանչել Թէօդօսիայի Հայ-Լուսաւորչական եկե-  
ղեցիների երէց Ներսէս քահանայ Հերթեցեանին և  
հեռացնել պաշտօնից, նորա չափազանց վսասակար  
ուղղութեան և գործունէութեան համար, առաջ բե-  
րելով խոռվութիւն քաղաքի հայ բնակիչների մէջ և  
տարածւելով տեղական քաղաքապահ զօրքի մէջ, եջ-  
միաձնի Սինօգով կարգադրուած է եղել յիշեալ քա-  
հանային պաշտօնից հեռացնելով փակել Դօնի վերա-  
լի Նախիջևան Քաղաքի Ա. Խաչ վանքում. բայց,  
Չերդ Սրբութեան հեռագրի համաձայն, Ներսէս Հեր-

թեղեան վերադառնում է Թէօդոսիա:

Ի նկատի առնելով, որ յիշեալ քահանայի հեռացնելը էջմիածնի Հայ-Լուսաւորչական Սինօդով, որ պարտական է վերահսկել իրեն ենթարկւող պաշտօնակատար անձանց գործունէութեան, հետևած է գործադրւող օրէնքի ճիշտ հիման վերայ (Յօդ. 1141, 1146, կանօն. օտար դաւանանութեանդ):

Ես համարում եմ կարևոր՝ Զերդ Սրբութեան  
ուշադրութիւնը դարձնելու այն բանին, որ Զեր կար-  
գադրութիւնը՝ յիշեալ հոգեոր անձին վերադառնալու  
այնտեղ, ուր նրա լինելը կառավարչական իշխանու-  
թեան կողմից վնասակար է ճանաչւած, չի կարող  
համապատասխանել Պետութեան շահերին, որովհետեւ  
նա կատեղծէ կառավարութեան համար գժւարութիւն՝  
երեան եկած յեղափոխական շարժման դէմ կուելու  
գործում:

Յանձնելով ինձ Զեր Հովհապետական ազօթից  
պատիւ ունիմ լինել Զերդ Սրբութեան  
խոնարհ ծառալ՝ Պ. Ա. Սաօիսիակին:

21 օպուսուի 1906թ.

Ա. Պետրովը.

Nº 4271.

Իսկականի հետ ուղիղ է. Ա. ք. Հերթեցեան:  
1906թ. դեկտեմբերի 25.

Այդ նոյն պարագայում, էջմիածնի Հայ-Լուսաւորչական համարւած Սինօղլ սկսում է շոյել նախարարագետի քմահաճոյքը, մոռացութեան տալով մի շատ կարեոր և էական խնդիր։ Պւշագիր ընթերցողը անշուշտ մոռացութեան չէ տուել նախարարագետ Ստոլիպինի մեղադրական զրութիւնը Ամենայն Հայոց Կաթուղիկոսին, որ իբր Վեհափառ Հայրապետը՝ հակառակ Սինօղի որոշման հերթեցեան քահանային Ա. Խաչից վերադարել է Թէօգոսիա։ Բայց այդ ահագին սուտր, մերկացնելու ընդունակութիւն և շնորք

չունեցան գերապայծառ Սինօդականք, չ'նայած որ  
իւրեանց ձեռքին կար գրական վաստ, որով նորա  
կարող էին և նոյն իսկ պարտական էին յայտնելու  
նախարարապետին, որ Թէօդոսիայի ժամանակաւոր  
գեն. նահանգապետ Գերցիկ՝ իւր բարձր իշխանու-  
թեանը մոլորեցրել է կեղծ գոնոսներով, ստւեր ձգե-  
լով Ամենայն Հայոց ծերունազարդ քահանայապետի  
անւան և գործունէութեան:

Որ Վեհափառ Կաթողիկոսը Տէր Ներսէս քահա-  
նայ Հերթեցեանին ոչ գրաւոր և ոչ էլ հեռազրով  
թոյլ է տուել և կամ հրամայել Ս. Խաչից վերադառ-  
նալու Թէօդոսիա, դա պարզ էր քննիչ Սինօդի ահ-  
դամ Բարդէն վարդապետին՝ և ապա Սինօդականնե-  
րին, որոնք սկսել էին շաբաթներով պահել իւրեանց  
մօտ քննական գործը, այնտեղ անշուշտ նկատած  
կ'լինէին, որ Ներսէս քահանայ Հերթեցեանին Ս. Խա-  
չից Թէօդոսիա գնալու համար թոյլ է տուել Թէօդօ-  
սիայի ժամանակաւոր գեհերալ նահանգապետ Գեր-  
ցիկը՝ իւր № 104 Մայիսի 21-ի գրութեամբ՝ ի պա-  
տասխան քննիչ Բարդէնի № 7, մայիսի 19-ի տեղե-  
կագրութեան: (Տես Սինօդ. քնն. գործում): Իսկ Վե-  
հափառ Կաթուղիկոսի հեռագրական անօրէնութիւնը  
լինում է յունիսի 4-ին, այն պարագայում, երբ Տ.  
Ներսէսի ընտանիքը հիւանդ գրութեան ներքոյ տա-  
ռապելիս է եղել որդու մահւան առթիւ, և «բարե-  
խիղ» քննիչ Բարդէն վարդապետն սկսել է պահան-  
ջել հայր Հերթեցեանից վերադառնալու Ս. Խաչ, Տէր  
Ներսէս՝ հեռագրով խնդրում է Վեհափառին թոյլ տալ  
իրեն առժամանակեայ մնալու հիւանդ ընտանեաց  
մօտ, Վեհափառը՝ մնօրինում է հետեւելլ այս հեռա-  
գրով, իսկականը քննիչ Բարդէնին, իսկ պատճէնը  
հայր Հերթեցեանին:

«Изъ Эчмидзина № 16. Теодосию.

Копія Эртевціану.

Его Святейшество повелѣль разрешилъ свя-  
щеннику Эртевціану остатъся Теодосію попеченіи

семейства.

За правителя Канцелярии  
Архимандритъ Тачатъ».

(Թարգմանութիւն).

«Էջմիածնից № 16, Թէօդոսիա.

Պատճէնը Հերթեցեանին:

Նորին Սրբութիւնը հրամայեց թոյլ տալ Հեր-  
թեցեան քահանային մնալու Թէօդոսիա, ընտանիքը  
խնամելու համար:

Դիւանի կառավարչի փոխարէն»

Տաճատ վարդապետ»:

Սրանից տուանձին, Սինօդը՝ գեռ պատիժ էլ է  
նշանակում Հայր Հերթեցեանին, ուղարկելու Սևան  
երեք ամիս ապաշխարելու:

Հետաքրքիր է և յատկապէս ուշադրութեան ար-  
ժանի Սինօդի այդ պատմական հոգեբանութիւնը, ո-  
րով նա զեկավարւել է իւր գոյութեան օրից ց'սեր-  
կայս, քահանաներին պատժելու ինդրում:

Տէր Ներսէսին պատիժ նշանակելու շարժառիթ-  
ները հետևեաներն են.

1) — որ Տէր Ներսէս՝ 1906 թ. յունվարի 3-ի, Թէ-  
օդոսիայի ծխական ժողովի որոշմամբ, ուր նախա-  
զան է լինում պ. Յ. Թերզեան, յանձն է առնում  
ի կատար ածել 90 տուն ծխականների խնդիրը, այն  
է, յունվարի 5-ին, 6-ին և 7-ին եկեղեցիները չ'փա-  
կել և չ'թոյլ տալ ժողովրդականներին ոռւս կամ յոյն  
եկեղեցում լսելու Ծննդեան և կամ Մկրտութեան տօ-  
ների հանդիսաւոր ժամերգութիւնը, այլ մայրենի հա-  
րազատ եկեղեցում լինել և հոգեպէս մխիթարւել,  
ուստի և հայր Հերթեցեան\*), չ'նայած որ թեմական  
առաջնորդի կողմից բանագրանքի է մատնել, զիջա-

\*) Թեմ առաջնորդը և Հերթեցեանին արգելելով, եր-  
կորդ քահանայ չէ զրկել Թէօդոսիա՝ ուստի և 4 եկեղեցի-  
ները փակ են եղել: Ծան. հեղ.

նելով ժողովրդի զբաւոր երաշխաւորութեան, բայց է անում փակւած եկեղեցւոյ գոները և տարեկան այդ յայտնի տօները կատարում միմիթարանք պատճառելով հալածւած և տանջւած ժողովրդականներին:

Սինօդը՝ ի նկատի ունենալով, որ Տէր Ներսէսը թէկ ունի երաշխաւորութիւն ծխականներից, որոնք գրում են, որ մենք ենք առնում պատասխանատւութիւնը մեզ վերայ՝ և մենք ենք յատկապէս պահանջել, որ ծխատէր քահանան այդպիսի հրաշալի օրեւում չ'թողնէ մեր եկեղեցին փակ և կատարէ եկեղեցական արարողութիւնները, բայց և այնպէս որոշում է, «գոնել Ներսէս քահանայ Հերթեցեանին մեղաւոր, իւր թեմական իշխանութեան հրամանը չ'կատարելու գործում»:

Ահա այստեղ բացւում է Սինօդի հոգեբանութեան բոլոր հանդույցները:

Ի՞նչ է ասում Սինօդը?

— Եջմիածնի Սինօդը վճռում է, որ իրեն համար գոյութիւն չունի հայ ժողովուրդ՝ և ժողովրդի կամք:

Ամեն ինչ, օրէնք, կարդ, կանոն, կամք և յանկութիւն՝ «ի ձեռս առաջնորդաց է»: Եւս առաւել, որ այդ առաջնորդը Բարձրագոյն հաճութեամբ հաստատած է... վերջացաւ ամեն ինչ: Ոչ թէ միայն 90 տուն ծխականներ, այլ նոյն իսկ հազար 90 տուն լինին, դարձեալ խօսքը առաջնորդին է: հետեւապէս հետեւել ժողովրդին, թողնել առաջնորդներին, այդ արդէն սրբապղծութիւն է և օրինազանցութիւն: Եւ ահա այդ օրինազանցութեան համար հայր Հերթեցեան կը կին մատնում է դատապարտութեան:

Հայց շարժառիթը՝ այն է, որ Ներսէս քահանայ Հերթեցեան, երբ ծխականները թողած հին և առաջնորդից հաստատած երէցփոխին, դարրոցում նոր երէցփոխան են ընտրելիս եղել, հայր Հերթեցեան՝ նպաստել է ժողովի նպատակին իւր ներկայութեամբ: Սակայն նա, Հերթեցեան քահանան, փոխանակ աշ-

խատելու, խափանելու այդ ժողովը՝ (այսինքն ոսսիկանութեան զիմելու, այլապէս քահանան լինչպէս պիտի խափանէր ժողովը, նամանաւանդ, որ դա ծխի լի ու լի իրաւունքն է եղել) ներկայ է զանւել: (Տես 1906 թ. Հովկի № 42-րդ քննիչ Բարգէնի տրամաբանութիւնը):

Յ-րդ, անարդար քննիչի դէմ բողոքելիս, գործ է գրել սուր ոճ:

Ուստի որոշում են հ. Հերթեցեանին ուղարկելու Սևան՝ երեք ամսեայ ապաշխարանքի, որ խելքը գլուխը հաւաքի՝ և ճանաչէ իւր իշխանաւորներին՝ և որ զվաւորն է՝ թէ ում հետ գործ ունի:

Սակայն Վեհափառ Հայրապետը, որոշում է Հ. Հերթեցեանին ուղարկել Նոր-Նախիջևանի Ս. Խաչվանքը: Այստեղ ևս Վեհի խօսքը քարին է կպչում: Առաջնորդ Խուղավէրդեանը և վանահայրը կտմք չեն տալիս, որ Հերթեցեան լինի Ս. Խաչվանքում: Զնայած հայր Հերթեցեան երիցս անդամ խնդրած է եղել Վեհին շուտով տնօրինութիւն իւր Ս. Խաչ զնալու մասին, բայց Բարձրագոյնս հաճութեամբ հաստատած առաջնորդ Խուղավէրդեան Վեհափառի երեք հրամանների նշանակութիւն չի տալիս՝ և հայր Ներսէս մնում է Ստաւրօպոլում վեց ամիս շարունակ՝ երբեմն երբեմն միմիթարելով տեղական հայ հօտին իւր ոգելից և իսկապէս գեղեցիկ քարոզներով, միմիթարելով նաև իւր բարեկամներից:

Սինօդը մոռացութեան է տալիս Քիշնեի առաջնորդի կամայական և բռնակալ արարքները, ժողովրդի հոգեկան հանգստութիւնը ամիսներ շարունակ վրդովւող ազա երէցփոխի և հոգաբարձուների զեղծումները, որից տուժելով տուժում են Թէօդօսիացիք:

Բայց ովքեր օգտագործին հասարակաց փողերից, զանազան նպատակաւոր ճանապարհորդութիւններով:

— Օգսենափու քահանայ Կոպչէկձեան, Բենիկ վարդապետ, Կօնսիստորիա և քննիչ Բարգէն վարդապետ:

Իսկ ումն է անիծում այսօր Թէօդոսիան, Եալտան, Ղարասուբազարը, Օրբազարը, Ղրիմը և Սիմֆերոպոլը:

— Հայ երկրի «սևագլուխ հոգեորականներին» որոնք ներկայիս աւելի քան մի այլ ժամանակ, բամել և ծծում են ժողովրդի կեանքի «ծուծն ու ուղեղը», դարձնելով նրան անձեռնհաս ընսաղատելու կեանքը իւր պարզ ու բարդ հանգամանքներով:

Եւ դեռ կան մարդիկ, որոնք աշխատում են ապացուցանել, որ հայոց եկեղեցին զերի չէ ամբարտաւան կղերականների ձեռքին և կամ մեր եկեղեցին ազատ է կղերական դասակարգից:

Իսկ մենք՝ և մեզ հետ ամբողջ Ղրիմի թերակըրդին, Բեսսարաբիայի թեմը՝ բողոքելով ասում ենք: «Մեր պատմական հիւանդութիւնը՝ հայ թշւառ և անարժան հոգեորականների շնորհիւ, այսօր բեղմնաւորելով՝ փղձկանքի վերջին թափով դուրս է վիժել ու հիւանդութեան մարմնացած էակներ ապականելու մեր անբաղդ վիճակը և կեանքը, որոնց տեսել ենք և ձանաշել «Նահապետ», Խուզավետան, Բենիկ ու Բարգէն և մատաղ Յուսիկ անուններով»:

Եւ որպէս զի մեր ասելիքը չ'ինի ենթադրութիւն, մենք առաջ կ'բերենք շատ օրինակներից միայն երկուսը՝ ցոյց տալու համար թէ որքան զգւել է Քիշների թեմակալից իւր թեմի հայ ժողովուրդը՝ և կամ Բենիկ վարդապետը իւր կէս տարւայ պաշտօնավարութեան շրջանում ի՞նչ պատիւ և ի՞նչ անուն է ժառանգել Ղրիմի ժողովրդի զիտակցող բաժնից:

Ընթերցողը կարդացել է և զիտէ Թէօդոսիացիների բողոքը՝ և Ռոստովից ու Հնչեշտից գրւած նամակները. այժմ արտասովենք առաջ Ղարասուբազարի թղթակցութիւնը և յետոյ Սիմֆերոպոլինը:

տ. (Տես «Մշակ» 1906 թ. № 230):

«Նամակ Ղարասուբազարից:

Հոկտեմբերի 12.

«Մշակ» № 215-ում տպած Քիշներից այն տե-

ղեկութիւնը, որ բողոք է գնացած Էջմիածին Բեսսարաբիայի թեմակալ առաջնորդին յետս կոչելու, կոնսիստորիայի ամբողջ կազմը արձակելու և նրանց տեղ նոր ընտրութիւններ կայացնելու, առիթ է տալիս և ինձ աւելացնել հետեւալը:

Բանիմաց հայ հասարակութիւնը՝ քաջ ճանաչում է թեմակալ Ներսէս արքեպիսկոպոս Խուզավէրտեանին, որ նա իբր առաջնորդ Խուզաստանի մի մեծ և պատասխանատու թեմի—որպիսին է Բեսսարաբիայի և Նոր-Նախիջևանի թեմը՝ իր բաժան-բաժան հատուածներով և ուրոյն կեանքով, անկարող է բաւարարութիւն տալ:

Ներսէս արքեպիսկոպոս Խուզավէրտեանի տարիքը, կրթութիւնը և վարչական ընդունակութիւններից, ևս իւրաքանչիւր հայ զիտէ, որ անհամապատասխան են ժամանակակից պահանջների, ժամանակակից ոգու՝ և հասկացողութեան:

Բայց ի՞նչ է նշանակում թողնել «դանակը ոսկը»: Լրագրական բողոքներն ու արտունչները՝ անդադար կրկնվում են յանձին Քիշների առաջնորդի՝ և կոնսիստորիայի ամբողջ կազմի: Սակայն վերջիններիս խուլ արհամարանքը դէպի մամուլի արդար ձայնը՝ անփոյթ վերաբերմունքը դէպի հասարակական բողոքն ու տրտունջները, լոկ դատավետութեան է արժանի»:

Թղթակիցը կանգ առնելով Քիշների կոնսիստորիայի պատմական «մօնօպօլիա» եղածի նկատմամբ, վերջացնում է զրութիւնը այսպէս:

«Մեզ հարկաւոր չեն այսուհետեւ «կաբինետում» նստող ու հրամաններ արձակող առաջնորդներ, փոխանորդներ, այլ հարկաւոր են ժողովրդի մէջ ապրող և գործող մարդիկ»:

Ժամանակ է Ներսէս արքեպիսկոպոսին թողնել պաշտօնը և դառնալ ս. Էջմիածնում հանգստանալ:

Մեզ հարկաւոր են ժողորդասէր, վարչական ընդունակութեամբ օժաված, կենդանի եռանդով լցուած

մարդիկ, որոնք գործ կատարեն ժողովրդի մէջ, առաջ տանեն նրան ժամանակի ողով ու փայլեն իրենց կոչմամբ:

Քիչնեկի հայերը ամբողջ տարիներ բողոքում են, Սիմֆերօպոլի հայերը քված են, Ղարասուրազարի հայերը՝ «աչքալոյսի» են սպասում: Մոսկայի, Նոր Նախիջևանի և Պետերբուրգի հայերը՝ նոյնպէս. գոնէ վերջին պատիրակների ժողովից և նրանց մասնաւոր խօսակցութիւններից այդ կարելի էր եզրակացնել:

Ուրեմն, չպէտք է թողնել «դանակը ոսկրին» հասնի, պէտք է բաւականութիւն տալ հասարակութեան ձայնին, պէտք է ասպարէզը թողնել ժողովը դից ընտրած պաշտօնեաներին»:

### «Նիգերագ»:

Ահա և Բենիկի «Գիպլօմը»:  
(Տես «Նոր-Կեանք» № 9-րդ, 1907 թ.).

Թղթակցութիւն:

Սիմֆերօպոլ, փետրվարի 20.

Թղթակցութեան հեղինակը տեղական հասարակական գործիչների և գործերի մասին խօսելուց առանձին, յիշատակում է այն, որ երկար տարիներ լաւ անուն թողած և գործիչ երէցի պ. Յ. Քուշնարեանը թողնում է իւր պաշտօնը ստիպւած կոնսիստորիայի նախանդամ Բենիկ վարդապետի սպառնալիքի պատճառով:

Որովհետեւ պ. Քուշնարեան սկսել էր քննադատել Բենիկի և Կոնսիստորիայի նողկալի արարքները, Բենիկը սպառնացել է պ. Քուշնարեանին մասնել գեներալ նահանգապետի ձեռքը....

Ահա և թղթակցի խօսքերը:

«Եթէ Բենիկ վարդապետը միջնադարեան իրաւունքներով օժտուած լինէր, երեխ, պ. Քուշնարեանին խարոյի վրայ այրել կ'տար միայն այն պատճառով, որ պ. Քուշնարեան համարձակուել է քննադատել արծաթի փայլից կուրացած Բենիկ վարդապե-

տին, որը փոխանակ «ժողովելու» իւր ցըռւած տառապած հօտը, «ցըրվում է» այն, այն էլ հայրենիքից հեռու, օտար աշխարհում:

Բենիկ վարդապետ, եթէ պ. Քուշնարեանը և ուրիշները չ'մերկացնէին ձեր տմարդի վարմունքը, նոյն իսկ քարերը կ'աղաղավէին, որ դուք անարժան «հովիւներ» էք, որ դուք գառնազգեստ փայլեր էք: «Հայ ժողովուրդ», «Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին» Զեղ համար որովայն պարարտացնելու գործոններ են: Բայց արդէն ուշ է. ժողովուրդը զիտէ ճանաչել իւր «սրտացաւ» գործիչներին: Դուք էլ Բենիկ վարդապետ, ամեն տեղ արժանի հատուցումը ստանում էք: Մի տարի չ'կայ ինչ եկել էք Բեսսարաբիայի թեմը, բայց արդէն Զեղանից երես են դարձել Սիմֆերօպոլը, Եալթան, Արմեանսկը, Կարասուբազարը և ուրիշ քաղաքներ, բայց Դուք դեռ շարունակում էք մնալ նոյն պաշտօնում և ձեր հակառակորդներին սպառնում էք յանձնել սստիկանութեանը, ձեր անզուսալ կրքերին բաւականութիւն տալու համար»:

### «Նոր այլ»:

Խորհրդածութեան նիւթ գարձնելով «սև հոգեռականների» վիճակը և նշանակութիւնը ներկայ «քսաններորդ» դարում, մենք այլ ևս չենք զարմանում զրանց արատաւոր գործերի վերաբերմամբ: Վատ ցաւով բոնւած հիւանդները մինչև վերջին շունչը արձակելը՝ սոսկալի տանջանքներ են պատճառում իւրեանց ինամողներին....: Օրհասի հասած արջերի կոփուկ կատաղի է լինում....: Եւ մենք այսօր տալով հայ հասարակութեան ձեռքը «սև հոգեռոր կղերականների» յայտնի ներկայացուցիչների քսմտնելի արարքները, աներկբայ հաւատում ենք, որ հայ հասարակութիւնը հանդիսատես կ'լինի այդ օրհասական «սևերի» կամաւոր թաղման վերջնական հանդէսին:

Ժամանակ է սթափւելու և արթնանալու և զի-

տութեան «Ճարի» ու «Հնարի» միջեցով չքացնել հայ եկեղեցու դասից այն ապուշ և ուրիշի գառն քրտին-քով իւրեանց որովայնը լայնացնող «հաստավիզ» վարդապետներին, որոնք ոչ այլ ինչ են, բայց եթէ մի մի մարմնացած հիւանդութիւն խառնուրդ այլ և այլ հիւանդութեանց....

Բոլորովին իգուր է և նոյն իսկ ամօթ մի կենաւունակ ազգի, ինչպէս է հայը, իւր «լաւ» օրը, իւր «ուրախութիւնը», իւր գաստիարակութիւնը և իւր հոգու փրկութիւնը յուսալ նոցանից, որոնք «ուտելուց» և միմեանց տուն քանդելուց առանձին այլ ևս ոչ մի բանի պիտանացու չեն եղել՝ և չկան:

Հայ ազնիւ մշակը, որ մինչեւ այժմ՝ անտարբեր էր իւր քրտնաթոր «արտի» «սև մրուկ» ների (որումների) նկատմամբ, թող աջը բանայ, «մրուկներով» լեցուն սերմացուից իւր «արտն» ու անդաստանը ազատ պահէ: Այնպէս, ինչպէս պէտք է ազատել Բեռնարաբիայի Հայոց առաջնորդական աթոռը այլ և այլ Խուղավէրդեաններից և կամ Բենիկներից, որոնք քանց «որոմն» և «մրուկ» աւելի են սեացըել հայ եկեղեցականի՝ և եկեղեցւոյ անունն ու սրբութիւնը:

Եւ թող 20-րդ դարը անկորուստ պահէ ի ցոյց յետագայ սերնդի, որ հայ բազմաչարչար ժողովուրդը և եկեղեցին տակաւին սովոր է խնամելու և անուցանելու իւր ծոցում Աւանտարանի անւան աշակերտներ, որոնք այնքան զուրկ են առաքինութեան մի թեթև նշոյլից, որի պատճառով Հայի դարնոր եկեղեցին, ժողովրդի սրբութեան խորանը մերկացած է....: Հինաւուրց մամուապատ քարերն են, որ կան յիշատակութիւն հայ ժողովրդի միաբան և միախորհուրդ գործերի:

Այժմ, հայ ժողովուրդը միաբանել այլ ևս չի կարող, որովհետև նա այլ ևս չի կարող հաշտւել իւր «սեփհական հիւանդութեան» հետ, որի անունն է կղեր: Որտեղ ժողովուրդն է արիւնքամ լինում, այնտեղ բիւրօկրատ կղերն է պարարտանում: Եւ ոչ մի զդա-

յուն սիրտ և բանական ուղեղի տէր մարդ չի կարող մոռանալ էջմիածնի միաբան կղերի այն վարմունքը, երբ Բօրչալուի և Զանգեզօրի վիճակներում արիւնաշաղախ հայը օրհասի զրկում հաց էր խնդրում, կեանք էր փնտրում, էջմիածնի միաբանութիւնը 1906 թ. որ նոր է յետ վերցրել Պետութեան գանձարանից 50,000 բուբլին և յետոյ՝ 40,000-ը, միմեանց վերայ բաժանել էին չաղ-չաղ պատառներով: Եւ ինչու զարմանալ Խուղավէրդեանի և վարձկան ընկերութեան նկատմամբ: Զէ որ դոքա ծնունդ են էջմիածնի շուլը բոյն դրած սև կղերի, որոնք ուժառել են ատել և ջը բոյն դրած սև կղերի, որոնք ուժառել են ատել և չքացնել ամեն: մի կենսունակ հասակ, եղել է գա անշքացնել ամեն: մի կենսունակ հմբական, միևնունն է: հատական կամ հաւաքական խմբական, միևնունն է:

Երիտասարդ ներսէս քահանայ Հերթեցեանի մատնութեան և աքսորի գործը՝ և Թէօդօսիայի հայ ժողովրդի իրաւունքների ակնյայտնի բոնաբարումը՝ մի դուռը կղերական քուրմերի անյղկւած առև յուշարձան է» կղերական քուրմերի անմաշաց գործերի:

Վ Ե Բ Զ:





50K.

«Ազգային գրադարան



NL0160902

7022